

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ПРАВОВЕДЕНИЕ

BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
JURISPRUDENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 1 (19)

ԵՐԵՎԱՆ - 2016

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛՏԱՐԱՆԻ. ՔՐԱՎՈՎԵԴԵՆԻԵ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. JURISPRUDENCE»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Անտոնյան Յու. Մ. (*Մոսկվա*), Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*),
Գաբրույան Ա. Հ. (*պատասխ. խմբագիր*), Գևորգյան Կ. Ա., Գոնչար Ն. Ա. (*գլխ.
խմբագրի տեղակալ*), Խաբրիևա Տ. Յա. (*Մոսկվա*), Կուրի Հելմուտ (*Ֆրայբուրգ*),
Հարությունյան Գ. Գ., Հայկյանց Ա. Մ., Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտու-
ղար*), Ղազիկյան Գ. Ա., Մեդրյան Ս. Գ., Յակովլև Վ. Ֆ. (*Մոսկվա*), Միմոնյան Ա. Հ.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), **Айкянц А. М.**, **Антонян Ю. М.** (*Москва*),
Арутюнян Г. Г., **Габузян А. А.** (*ответ. редактор*), **Геворкян К. А.**, **Гончар Н. А.**
(*зам. главного редактора*), **Дюран Бернард** (*Монпелье*), **Казинян Г. С.**, **Кури Хель-
мут** (*Фрайбург*), **Мегрян С. Г.**, **Овакимян А. Э.** (*ответ. секретарь*), **Симонян А. Г.**,
Яковлев В. Ф. (*Москва*)

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Antonyan Yu. M. (*Moscow*), **Avetisyan L. V.** (*Deputy editor-in-chief*), **Duran
Bernard** (*Montpellier*), **Gabuzyan A. H.** (*Managing Editor*), **Gevorgyan K. A.**,
Ghazinyan G. S., **Gonchar N. A.** (*Deputy editor-in-chief*), **Harutyunyan G. G.**,
Haykyants A. M., **Hovakimyan A. E.** (*Executive Secretary*), **Kury Helmut**
(*Freiburg*), **Meghryan S.G.**, **Simonyan A. H.**, **Yakovlev V. F.** (*Moscow*)

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԿԻՆԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ

X-XIV դարերը Հայաստանի քաղաքական պատմության տեսանկյունից բուռն ու անհանգիստ էին: Պատմաշրջանը սկսվում է Բագրատունյաց թագավորությամբ, որին հաջորդում են բյուզանդական կարճատև նվաճումը, սելջուկյան մոտ մեկդարյա տիրապետությունը, Ջաքարյանների իշխանության գալը և ավարտվում է մոնղոլական նվաճումով ու տիրապետությամբ: Քաղաքական անկայունությունը և ավատատիրական մասնատվածությունն իրենց բացասական ազդեցությունն էին թողնում նաև հայ իրավական մշակույթի վրա, մշակույթ, որի զարգացման արտաքին գործոնն անկախ պետականությունն էր, իսկ ներքինը՝ երկրի սոցիալ-տնտեսական կյանքը: Սակայն նույնիսկ այդ պայմաններում խաղաղության և անկախության ամեն մի կարճատև ժամանակաշրջանում Հայաստանի իրավական կյանքն արձակում էր նոր ծիլեր՝ ի դեմս գրավոր աղբյուրների:

Այս շրջանի Հայաստանի իրավական համակարգը հիմնական գծերով՝ միջնադարյան, ավատատիրական, կրոնականացված էր: Դրանում առաջնային իրավական ձևեր էին սովորույթը, աշխարհիկ օրենքները և կանոնական իրավունքը:

Բագրատունյաց թագավորության շրջանում նկատվում է կիրառվող իրավունքն ամրագրելու ձգտումը: Դա են վկայում այդ շրջանից մեզ հասած վիմական որոշ արձանագրություններ: Բացի դրանից Մխիթար Գոշի «Գիրք դատաստանիի» «Աշխարհական օրենք» մասի առաջին հոդվածից ևս երևում է, որ նա թագավորի իշխանության, թագավորական ժառանգության, թագավորական դատաստանի, բերդերի, ամրոցների ու քաղաքների, պատերազմի ու ավարատման և այլնի մասին համապատասխան իրավադրույթները քաղել է ինչպես Արշակունի, այնպես էլ Բագրատունի թագավորների օրենքներից¹: Այսպիսով, Բագրատունյաց թագավորությունն իր տնտեսական վերելքով և մշա-

¹ Խ. Սամվելյանի կարծիքով, Մխիթար Գոշի «Դատաստանագրքից» երևում է, որ Բագրատունյաց թագավորներն իրենց պետական ու վարչական համակարգը սահմանադրելիս ձգտել են վերականգնել Արշակունյաց պետության իրավական կարգերը, ավատական իրավունքի սովորույթներն ու նորմերը, և ամենայն հավանականությամբ այդ օրենքները կազմված են եղել գրավոր ժողովածուի ձևով, որի բովանդակությունն էլ տեղ է գտել Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» մեջ (տե՛ս Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Եր., 1939, էջ 138-139):

կութային շինարարությամբ հայ իրավունքի հետագա զարգացման նախադրյալներ ստեղծեց, որն ընթացավ մի քանի ուղղություններով: Նախ «Բագրատունյաց թագավորությունը վերականգնում էր իր դերն ու ազդեցությունը նաև օտար օրենքների փոխատումով»²: Դրան էին նպաստում Հայաստանի և Բյուզանդիայի միջև առևտրատնտեսական հարաբերությունները, հայկական առևտրային կապիտալի ձևավորումն ու կուտակումը: Մինչև սելջուկյան տիրապետությունը Հայաստանում գործել են նաև Իսավրյան հունա-բյուզանդական իրավունքի աղբյուրները, որոնցից հայերեն են թարգմանվել մի քանի օրենսդրական ակտեր՝ Էկլոգան, Իրինա կայսրուհու նովելները վկաների և վկայության մասին, Հուստինիանոսի 83 և 123 նովելները պետության և եկեղեցու փոխհարաբերությունների մասին, Էկլոգայի 33-րդ հավելվածը՝ «Ջինվորական օրենքը», ինչպես նաև «Օրենքների կարճ հավաքածուն» (բնօրինակը դեռևս չի հայտնաբերվել) և այլն: Հայաստանում այդ իրավական ակտերը կիրառելու մասին հավաստի տվյալներ չկան: Սակայն եթե ելնենք այն դրույթից, որ թարգմանություններն արվում էին օգտագործելու նպատակով, և նկատի ունենանք միջնադարյան պրակտիկան, երբ դատավորներն ազատ էին իրավունքի կիրառման մեջ, ապա կարելի է ասել, որ դրանք Հայաստանում գործածվում էին³:

Հովհաննես Գ. Օձնեցու համակարգումից հետո հայ եկեղեցու իրավաստեղծ գործունեությունը շարունակվում էր, իսկ կանոնական ակտերը կուտակվում էին: Այդ իսկ պատճառով X-XIII և հետագա դարերում ստեղծվում էին «Հայոց կանոնագրքի» նոր խմբագրություններ⁴: Հայ կանոնական իրավունքի արժեքավոր աղբյուրներից է Ալավկա որդի Դավիթ վարդապետի կանոնախումբը⁵: Նրա կանոնների թիվն ամբողջական օրինակներում հասնում է 97-ի: Կանոնները նրա կողմից գրվել են ի պատասխան հոգևորականների ամենօրյա գործունեության ընթացքում ծագած հարցերի: Հենց դրանով էլ պայմանավորված է կանոնների բովանդակությունը: Դավթի կանոնների պատմական նշանակությունն այն է, որ դրանք հայկական ինքնուրույն համակարգված և ամբողջական իրավաբանական կողիֆիկացիայի ստեղծման առաջին փորձն էին: Այդ կանոնախումբում արժեքավոր տվյալներ կան հայկական քրեական ու քաղաքացիական իրավունքների, ժողովրդի և հոգևորականների կենցաղի ու բարքերի մասին: Դավթին արտահայտում է մտքեր, որոնք շատ առաջադիմական էին իր ժամանակի համար, ինչպես, օրինակ, աշխատանքի պաշտպանության վերաբերյալ կանոնները: Դավթի կանոնները հայկական իրավական մտքի և իրավունքի նոր համակարգում-

² Նույն տեղում, էջ 139:

³ Տե՛ս **Торосян Х.** Суд и процесс в Армении X-XIII вв. Е., 1985, էջ 44:

⁴ Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխատասիրությամբ **Վ. Հակոբջանի**, հ. Ա, Եր., 1964, հ. Բ, Եր., 1971:

⁵ Դավիթը ծնվել է Գանձակում և գործել է XI-XII դ.: Նա իր կանոնները գրել է Արքայություն անունով մի հոգևորականի խնդրանքով: Ենթադրաբար ավարտել է 1130 թ.:

ների վրա ազդել են նաև հետագա ժամանակաշրջանում: Նրա որոշ կատններ Մխիթար Գոշը մտցրել է իր «Գիրք դատաստանի» մեջ:

Զաքարյանների իշխանության ժամանակաշրջանում երկրի տնտեսական ու մշակութային կյանքում կատարված փոփոխությունները, ինչպես նաև Հայաստանի բնակչության կառուցվածքում այլ էթնոսների հաստատումը խարխուլեցին սովորութային չգրված իրավունքի առանց այդ էլ խախտու հիմքերը: Այդ է փաստում այն, որ «Ասորա-հռոմեական դատաստանագրքի» մեզ հասած հայկական ձեռագրերի մեծ մասը համարվում է XIII-XIV դարերի ընդօրինակություն: Այսպիսով, հայ միջնադարյան աշխարհիկ իրավունքը Զաքարյանների շրջանից թևակոխեց իր զարգացման նոր՝ սովորութային գրավոր իրավունքի շրջանը, որի դրսևորումը Մխիթար Գոշի կողմից հայ իրավունքի համակարգումն էր ոչ պաշտոնական կողիֆիկացիայի ձևով⁶: Այդ համակարգման արդյունքը նրա «Գիրք դատաստանի» է՝ հայ իրավունքի, հայ հասարակական-քաղաքական և իրավական մտքի կարևորագույն կոթողը, համաշխարհային իրավական մշակույթի պատմության արժեքավոր հուշարձաններից մեկը: Իր ստեղծագործական ժառանգության գլուխգործոցի շարադրանքը Մխիթար Գոշը սկսել է 1184 թ.:

Դրդապատճառները և նպատակները, որ Մխիթար Գոշին ստիպել են կազմել «Դատաստանագիրքը», բազմաթիվ են և հրատապ: Իրավաբանական գործնական նպատակներից բացի՝ Մխիթար Գոշը հետապնդել է քաղաքական հատուկ նպատակներ, մասնավորապես ամրապնդել հայ եկեղեցու դիրքերը, միավորել հայ ժողովրդի բոլոր ուժերն արտաքին թշնամու դեմ՝ հանուն անկախության վերականգնման, հայկական ապագա պետությունում հաստատել ամուր օրինականություն և այլն: Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» գործել և կիրառվող իրավունքի աղբյուր է ծառայել նաև հետագա դարերում: Դատաստանագիրքն ունի հայկական և օտարալեզու մի քանի խմբագրություններ ու թարգմանություններ⁷:

⁶ Գոշը ծնվել է Գանձակում XIII դ. 30-ական թվականներին: Կրթվել է Հովհաննես վարդապետ Տավուշեցու մոտ և ստացել վարդապետի գիտական կոչում: Հետագայում կրթությունը շարունակել է Կիլիկիայի Կարմիր վանքում և վերադարձել Հայաստան: Բարեկամական հարաբերությունների մեջ է եղել Զաքարե և Իվանե Զաքարյանների հետ: Մահացել է 1213 թ.: Նրա գրչին են պատկանում շատ աշխատություններ, այդ թվում՝ առակների ժողովածու:

⁷ Գիտնականները դեռ վաղուց նկատել էին, որ «Դատաստանագրքի» հայկական ձեռագրերն ունեն 2 (Վ. Բաստամյանց) կամ 3 (Բ. Կարստ) խմբագրություններ: Ձեռագրերի մի խմբում տեքստը կազմված է նախադրությունից և 251 հոդվածից: Ընդ որում, հոդվածները միմյանց հաջորդում են ըստ համարների: Ձեռագրերի մյուս խմբում հոդվածները բաժանված են 2 մասի՝ եկեղեցական կանոններ (124) և աշխարհիկ օրենքներ (130): Ձեռագրերի 3-րդ խմբում «Դատաստանագրքի» համակարգը նույնն է, ինչ որ առաջինում, սակայն տեքստը որոշ տեղերում նշանակալիորեն կրճատված է: Նորագույն շրջանի հայագետները փորձել են պարզել դրա սկզբնական հեղինակային խմբագրությունը, հեղինակային տեքստը, որոշիչ խմբագրության մոտավոր ժամանակը, գանազան խմբագրությունների ծագման պատճառները (տե՛ս օրինակ՝ Մխիթար Գոշ «Գիրք դատաստանի», աշխատասիրությամբ **Խ. Թորոսյանի**, Եր., 1975, ինչպես նաև **Էմ. Պիվազյան**, Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» բանասիրական քննություն, Եր., 1987):

Հայկական բուռն զարգացող իրավունքը մոնոլոկական տիրապետության ժամանակ կործանիչ հարված ստացավ, քանի որ գրկվեց իր զարգացման քաղաքական հիմքերից: Թեև հայ իշխանական տները, առևտրի ու արհեստագործության կենտրոն քաղաքները մասամբ պահպանվում էին, սակայն «չէին ներկայացնում այն պետական կազմը, այն ազգային-քաղաքական կոմպակտ մարմինը, որտեղ կարողանար տեղական օրենսդրություն գոյանալ և հայ իրավունքն իր հետագա զարգացումն ունենար: Այս պայմաններում հայկական միջավայրի հասարակական հարաբերությունները կարգավորվում էին սովորութային իրավունքի նորմերով և հայկական օրենսգրքերով, որոնք հասել էին նախորդ՝ Չաքարյանների իշխանությունից, որտեղ, անկասկած, գլխավոր տեղն էր բռնում Մխիթար Գոշի Դատաստանագիրքը»⁸:

Մելջուկյան տիրապետության հաստատումից հետո Հայաստանի իրավական համակարգի զարգացման օրինաչափություն է դառնում դրա երկատումը՝ ըստ էթնիկ-ազգային հատկանիշի: Եթե արաբական տիրապետությունը խոր հետքեր չթողեց Հայաստանի բնակչության ժողովրդագրական կառուցվածքի վրա, ապա սելջուկյան տիրապետությունից սկսած՝ ներհոսքի և կրոնափոխության միջոցով Հայաստանում հաստատվեց մեծաթիվ մահմեդական բնակչություն, որի սոցիալ-նորմատիվ կարգավորման համակարգում առաջնային կարգավորիչը մահմեդական իրավունքի գլխավոր աղբյուր Շարիաթն էր: Արաբական տիրապետության շրջանում Շարիաթի նորմերը գործում էին միայն վարչաքաղաքական և ֆինանսական հասարակական հարաբերությունների ոլորտում՝ նվաճողների շահերին համապատասխան: Հայաստանում մահմեդական բնակչության ի հայտ գալը հանգեցրեց այն բանին, որ Շարիաթը սկսեց կարգավորել այդ բնակչության ներհամայնքային և որոշակիորեն նաև արտահամայնքային հասարակական հարաբերությունները: Դրան նպաստեց նաև մոնոլիների մահմեդականացումը: Մահմեդական իրավական համակարգի թեոկրատական և կրոնախտրական բնույթը պայմանավորեց հայ իրավունքի հետագա գոյությունը, որովհետև այլահավատներն ունեին սեփական օրենքների և իրավական սովորույթների հիման վրա իրենց հարաբերությունները կարգավորելու իրավունք: Իրավական ներքին ինքնավարության այդ փաստը հաստատվում է նաև հայկական վավերագրական աղբյուրների վկայություններով⁹:

Այսպիսով, X-XIV դարերում Հայաստանի զարգացող իրավական համակարգը կրեց էական փոփոխություններ: Մնալով միջնադարյան, ավատատիրական սովորութային իրավական համակարգ, հասարա-

⁸ Խ. Սամվելյան, նշվ. աշխ., էջ 153-154:

⁹ Օրինակ այդ հանգամանքն ուղղակի հաստատում է հայ եկեղեցու գործիչ Ներսես Լամբրոնացու 1193 թ. վերաբերող վկայությունը, որից երևում է, որ մահմեդական դատարանները հայերի դատական գործերը չէին ընդունում, դիմողներին էլ ուղղարկում էին դատվելու իրենց իսկ օրենքներով (տե՛ս Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանությունների և փաստաթղթերի, 1889, էջ 754):

կական հարաբերությունների զարգացման հետևանքով այն չգրված սովորությանին իրավունքից անցում կատարեց գրված սովորությանին իրավունքի՝ միաժամանակ չփոխելով իր կրոնական բնույթը: Սակայն XIII դ. սկսած՝ քաղաքական միջավայրը հայկական իրավական համակարգի զարգացման համար դարձավ աննպաստ, ինչի հետևանքով իրավական մշակույթի ակնհայտ նվաճումներ բուն Հայաստանում չեն նկատվում: Բացի դրանից, բնակչության ժողովրդագրական կառուցվածքի փոփոխությունը Հայաստանի իրավական համակարգը երկատեց ըստ էթնիկ-կրոնական հատկանիշի՝ բուն հայկական և մահմեդական:

Կիլիկիայի իրավական համակարգը և իրավական մշակույթի տարրերը նկարագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ համակարգի և իրավական մշակույթի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, որոնք պայմանավորված էին մի շարք գործոններով: Կիլիկիայի հայկական թագավորությունը ժառանգել էր բուն Հայաստանի իրավական մշակույթն ու իրավական կարգավորման աղբյուրները: Դա արդյունք էր հին ու միջնադարյան իրավունքի էթնիկ-կրոնական պայմանավորվածության, ինչի հետևանքով հայ բնակչության արտագաղթին հաջորդում էր իրավական մշակույթի, ներառյալ իրավունքի աղբյուրների տեղաշարժը: Հետևաբար, Կիլիկիայի հայկական թագավորության իրավական համակարգում իրավունքի աղբյուր կամ կարգավորիչ նորմատիվ ձևեր էին համարվում բուն հայաստանյան ձևերը, այն է՝ սովորությանին իրավունքը, կանոնական իրավունքը, ներառյալ Ալավկա որդի Դավիթ վարդապետի կանոնախումբը, Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», ինչպես նաև մինչև Կիլիկիայի հայկական թագավորության հռչակումը փոխառված օտար իրավական ձևերը:

Կիլիկիայի հայկական թագավորությունը կենտրոնացված ու բավականաչափ կենսունակ միապետություն էր, ինչի շնորհիվ այն ոչ միայն պահպանեց հայ իրավական մշակույթի նախորդ շրջանի տարրերն ու կարգավորիչ աղբյուրները, այլև զարգացման նոր աստիճանի հասցրեց հայոց իրավական մշակույթն իր բոլոր բաղադրատարրերով, այդ թվում՝ ստեղծեց իրավական կարգավորման նոր աղբյուրներ (ձևեր): Վերջիններից հատկապես աչքի է ընկնում Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» (1265 թ.)՝ որպես պետական պաշտոնական կողմնօգնական: Այն հայ սովորությանին իրավունքի, կանոնական իրավունքի, Մխիթար Գոշի «Դատաստանագրքի»՝ արևմտաեվրոպական ազդեցությամբ կատարված իրավական նորմատիվ նյութի կողմնօգնական է: Հայ իրավունքի համակարգումն իրականացնելիս հեղինակը ցուցաբերել է ստեղծագործական մոտեցում՝ նորմատիվ իրավական կարգավորումը հարմարեցնելով տեղի և ժամանակի պայմաններին: Բացի դրանից՝ Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքն» ըստ իր

ձևի և համակարգված շարադրանքի, ըստ նյութի դասավորության»¹⁰ իսկական օրենսգիրք է: Այդպիսով, Մմբատ Սպարապետը զարգացրեց հայկական իրավաստեղծագործական տեխնիկան՝ կատարելով իրավական նորմերի համակարգված դասակարգում՝ թագավորական և իշխանական իրավունքի (պետական իրավունքի) նորմեր, եկեղեցական (կանոնական) իրավունքի նորմեր, քաղաքացիական (աշխարհիկ) իրավունքի նորմեր:

Ի տարբերություն նույն շրջանի Հայաստանի, Կիլիկիայի հայկական թագավորության իրավական համակարգն իր զարգացման հիմքում ուներ համեմատաբար զորեղ միապետություն, ինչը և իրավունքի զարգացման գլխավոր գործոնն էր: Իրավական համակարգի զարգացման նպաստավոր քաղաքական գործոնի հետևանքը հայ իրավունքի նոր կոդիֆիկացիաներն են, ինչպես նաև ներդրումը միջազգային հանրային և մասնավոր իրավունքի զարգացման մեջ, որոնցից հատկապես վերջինը կարելի է համարել ավանդ համաշխարհային իրավական մշակույթում:

Հայկական կանոնական իրավունքը, որը գործում էր նաև Կիլիկիայում, ևս զարգացավ՝ ի դեմս Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականի»: Այդ փաստաթղթի իրավական նշանակությունն այն է, որ Շնորհալին արգելքների ու խրատների ձևով սահմանում է հայ հասարակության բոլոր խավերի վարքագծի ու ապրելակերպի նորմերը: Կանոնական իրավունքի զարգացման հաջորդ աստիճանը Միսի 1243 թ. եկեղեցական ժողովի կանոնական որոշումներն էին: Ժողովի ընդունած կանոնախումբը հայ իրականության մեջ վերջին կանոնական նորմատիվ ակտն էր և կարգավորում էր ինչպես ներեկեղեցական, այնպես էլ աշխարհիկ՝ ամուսնաբնտանեկան, քրեական և այլ հարաբերությունները¹¹:

Կիլիկիայի հայկական թագավորության իրավական համակարգի վրա էական ազդեցություն է թողել նաև երկրի բնակչության էթնիկ-դավանանքային կառուցվածքը¹²: Կիլիկիայում այլազգիների գաղութները և ասպետական օրդեններն իրավական ինքնավարություն ունեին: Թագավորական հրովարտակներով այլազգիներին շնորհվում էր իրավական ինքնավարություն՝ փոխարենն ակնկալելով հավատարմութ-

¹⁰ Ա. Գ. Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Եր., 1978, էջ 240:

¹¹ Միսի ժողովը, ինելով վերջին կանոնասահմանիչ ժողովը, ամրագրեց նաև երկու կարևոր դրույթներ. ա) օրինականացրեց ծայրագույն պատրիարքի «Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսը, բ) սահմանեց սկզբունք, ըստ որի կանոններն ուժի մեջ են մտնում, երբ դրանք հրատարակվում են կաթողիկոսական կոնդակի ձևով (տե՛ս Ա. Գ. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 210):

¹² Կիլիկիայի հայկական թագավորության բնակչությունը կազմում էր մոտավորապես 1 մլն, որի գերակշռող մասը հայերն էին: Սակայն Կիլիկիայում ապրում էին նաև հույներ, ասորիներ, հրեաներ և իտալացիներ (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Եր., 1976, էջ 724, 751-752): Միաժամանակ Կիլիկիայի հայկական թագավորությունից վասալական կախման մեջ էին ասպետական օրդենները (Հյուրընկալներ, Տաճարականներ, Տևոտնականներ), որոնք Կիլիկիայի սահմանամերձ շրջաններում ստացել էին ընդարձակ կալվածներ (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 717-718, 752):

յուն: Այսպես, Կիլիկիայի քաղաքներում ապրող ջենովացիները և վենետիկցիներն ունեին իրենց հյուպատոսները և դատարանները, որոնք կոչվում էին կուրիաներ՝ պայլական կամ հյուպատոսական (կոնսուլական) դատարաններ¹³: Իրեն ենթակա տարածքներում դատարան ունենալու իրավունք էր արտոնված նաև Հյուսրնկալների օրդենին: Դատական արտոնություն ունեցող այլազգիների, ինչպես և օրդենական դատարաններում կիրառվում էին նրանց իրավական ձևերը: Իրավական ինքնավարություն և արտոնագրություններ չունեցող այլազգիների ու վաճառականների նկատմամբ գործում էր թագավորական իրավունքը:

Կիլիկիայի հայկական թագավորությունը գտնվում էր համաշխարհային առևտրական ճանապարհների խաչմերուկում, ուներ առևտրական նավահանգիստներ և զարգացած քաղաքներ ու քաղաքային (ներառյալ առևտրային) կյանք: Միջազգային առևտրական հարաբերությունները և դրանց պետական խրախուսման քաղաքականությունը խթանեցին միջազգային մասնավոր իրավական կարագվորման զարգացումը թագավորությունում: Այդ իրավունքի զարգացման իրավական ձևը թագավորական շնորհագրերն ու արտոնագրերն էին, որոնք XIII-XIV դդ. տրվում էին օտարազգի վաճառականներին¹⁴: Այդ փաստաթղթերի բովանդակությունը հաստատում է, որ Կիլիկիայի հայոց թագավորներն էական ներդրում ունեն միջազգային մասնավոր իրավունքի զարգացման գործում, հատկապես դրա երկու ինստիտուտներում՝ այլերկրացու ժառանգության (*droit d'aubaine*) և նավաբեկության (*droit de bris*) իրավունքներում: Միջնադարում գործում էր սովորության խնամք, ըստ որի՝ այլահպատակի մահվան դեպքում նրա ունեցվածքն անցնում էր այն երկրի տիրակալին, որտեղ նա մահացել էր: Կիլիկիայի հայոց թագավորները առաջինը Ջենովայի և Վենետիկի հպատակների հանդեպ հրաժարվեցին գույքի նկատմամբ իրավունքից՝ նրանց մահվան դեպքում¹⁵: Նավարկության իրավունքի ուժով նավաբեկության ենթարկված նավերի ապրանքներին տիրանում էր այն թագավորը, որի երկրի տարածքում էր ծովափը: Կիլիկիայի հայոց թագավորները Ջենովայի և Վենետիկի նավերի նկատմամբ հրաժարվեցին այդ իրավունքից: Մյուս երկրների նավերի նկատմամբ գործում էր հին կարգը¹⁶:

¹³ Տե՛ս **Langlois V.**, *Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie*, Paris, 1860, էջ 48-49:

¹⁴ Այդպիսի իրավական փաստաթղթեր են տրվել 1201, 1215, 1245, 1261, 1288, 1314, 1321, 1335 և այլ թվականներին (տե՛ս **Langlois V.**, *Le trésor des chartes l'Arménie, ou cartularic de la chancelleerie ryaie des Roupeniens*, Venise, 1863):

¹⁵ 1285 թ. այդպիսի արտոնություն ստացան նաև Եգիպտոսի սուլթանության հպատակները, իսկ մնացած այլահպատակների նկատմամբ գործում էր նրանց գույքը ժառանգելու թագավորի իրավունքը (տե՛ս **Langlois V.**, *Le trésor des chartes l'Arménie, ou cartularic de la chancelleerie ryaie des Roupeniens*, էջ 106-112, 158, **Langlois V.**, *Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie*, էջ 52, *Recueil des historiens des croisades. Documents arméniens*, t. II, p. 762):

¹⁶ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մինչ այդ նավարկության իրավունքն արգելափակել էր «Երուսաղեմի ափսուներ» կոչված օրինագիրքը (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 752):

Միջազգային մասնավոր պայմանագրերից բացի՝ Կիլիկիայի հայկական թագավորության իրավունքի աղբյուրներից էին նաև միջազգային հանրային բնույթի պայմանագրերը, որոնցից հատկապես աչքի են ընկնում 1254 թ. Հեթում Ա-ի և Մոնղոլիայի մեծ խան Մանգուի միջև կնքված բարեկամության պայմանագիրը¹⁷, ինչպես նաև Եգիպտոսի սուլթան Քելավունի ու Լևոն Գ-ի միջև 1285 թ. մայիսի 1-ին կնքված խաղաղության պայմանագիրը¹⁸: Ի տարբերություն առաջինի, որը զուտ միջպետական ակտ էր, երկրորդը, լինելով միջազգային հանրային պայմանագիր, պարունակում էր դրույթներ, որոնք կարգավորիչ նշանակություն ունեին ներպետական հասարակական հարաբերություններում և կիրառման առաջնայնություն՝ ի տարբերություն իրավունքի ներպետական աղբյուրների¹⁹:

Կիլիկիայի հայկական թագավորությունը, ի տարբերություն բուն Հայաստանի, գտնվում էր իրավական առումով ավելի առաջադեմ և զարգացած միջավայրում: Վերջինս նախ չունեւ քաղաքական անկախություն, իսկ սոցիոնորմատիվ մշակույթը կառուցված էր կրոնախտրական հիմքերով: Կիլիկիայի արտաքին միջավայրը խթանում էր հարևան երկրների արդեն պատրաստի և առաջադեմ իրավական ձևերի փոխառությունը: Նախ՝ Կիլիկիան մինչև անկախանալը եղել էր Բյուզանդական կայսրության պրովինցիա, որի հետևանքով կիլիկյան իրավական մշակույթ էին ներթափանցել բյուզանդական իրավունքի աղբյուրները: Դա հաստատվում է «Էկլոգայի», «Զինվորական օրենքների», «Քաղաքային օրենքի»²⁰, կայսրուհի Իրինայի՝ վկաների և վկայությունների մասին նովելի, «Պրոխիրոնի» որոշ հատվածների հայերեն թարգմանությամբ: Բացի հունա-բյուզանդական օրենքներից, Կիլիկիայում փոխառել են նաև խաչակիր կաթոլիկ իշխանությունների դատաստանագրքերը, մասնավորապես Երուսաղեմի և Անտիոքի ասսիզները²¹:

Փոխառված իրավունքի աղբյուրների շարքում հատկապես կարևոր էր «Զինվորական օրենքների» թարգմանության և Կիլիկիայում կիրառու-

¹⁷ Հայ-մոնղոլական պայմանագրի բովանդակությունը տե՛ս **Ա. Գալստյան**, Մոնղոլական ժամանակաշրջանի հայ դիվանագիտության պատմության շուրջ, Լենինական, 1945, էջ 4-10, ինչպես նաև՝ **Ա. Գ. Սուքիասյան**, նշվ. աշխ., էջ 73-75:

¹⁸ Հայ-մամլուկյան պայմանագրի բովանդակությունը տե՛ս **Ա. Գ. Սուքիասյան**, նշվ. աշխ., էջ 218-225:

¹⁹ Այդ պայմանագրի մեզ հասած տեքստը և նրա կնքման պատմությունն արժեքավոր տվյալներ են հաղորդում Արևելքի միջազգային իրավական մշակույթի այնպիսի տարրերի վերաբերյալ, ինչպիսիք են պայմանագրի տեքստը կազմելու տեխնիկան, պայմանագիրը կնքելու և վավերացնելու իրավական տեխնիկան, պայմանագրի կատարման երաշխիքները և խախտելու դեպքում սանկցիաները:

²⁰ Ընդունված տեսակետի համաձայն՝ «Էկլոգայի», «Զինվորական օրենքների», «Քաղաքային օրենքի» թարգմանությունը կատարել է Ներսես Լամբրոնացի XII դ. վերջերին:

²¹ Ենթադրվում է, որ «Անտիոքի ասսիզները» ընդունվել են Բոհեմոնո IV-ի օրոք (1201-1235): Սմբատ Սպարապետն այն հայերեն է թարգմանել ենթադրաբար մինչև 1265 թ., այսինքն՝ մինչև հայկական դատաստանագրքի կազմումը: «Անտիոքի ասսիզները» պահպանվել է միայն հայերեն թարգմանությամբ:

թյան սոցիալական նշանակությունը: Այն նպատակ ուներ նպաստել պետության արտաքին պաշտպանական գործառույթի արդյունավետ իրականացմանը՝ ստեղծելով ամուր, կարգապահ ու մարտունակ հայկական բանակ: «Զինվորական օրենքները» ունեին հռոմեական ծագում: Բյուզանդական շրջանում դրանք կազմել են «Էկլոգա» ժողովածուի հավելվածներից մեկը: Ներսես Լամբրոնացին 1196 թ. դրանք թարգմանել է հունարեն բնագրից և անվանել նաև «զինվորական սահմանադրութիւն» կամ սահման զինվորության «հաստատութեան և սհարկութեան»: Այդպիսով, «Զինվորական օրենքները» արդի իմաստով զինվորական կանոնագիրք է, որը կարգավորում է զինվորական ծառայության կարգը²²:

Կիլիկիայի հայկական թագավորության կենսունակությունը և քաղաքական անկախությունը նրան հնարավորություն էին տալիս հարևան պետությունների հետ հարաբերություններում հանդես գալու որպես ինքնիշխան սուբյեկտ: Դրա շնորհիվ կնքվել են միջպետական պայմանագրեր, որոնք յուրահատուկ իրավական կարգավորիչներ էին, ունեին ոչ միայն միջպետական նշանակություն, այլև ներպետական, որովհետև գործում էին նաև որպես ներքին հարաբերությունների կարգավորիչներ:

Այսպիսով, Կիլիկիայի հայկական թագավորության իրավական համակարգում իրավունքի աղբյուրներ էին՝ ա) սովորութային իրավունքը, բ) թագավորական շնորհագրերը, արտոնագրերը և այլ ակտերը, գ) միջազգային հանրային և մասնավոր պայմանագրերը, դ) հայոց կանոնական իրավունքը («Կանոնագիրք Հայոցը», Դավիթ Ալվակա որդու կանոնախումբը, Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», Սիսի 1243 թ. ժողովի կանոնադրությունը), ե) հարևան երկրների իրավական համակարգերից փոխառված իրավունքի աղբյուրները (բյուզանդական իրավունքը, հատկապես «Զինվորական օրենքները», «Քաղաքային օրենքը», խաչակիր թագավորությունների ասսիզները՝ հատկապես «Անտիոքի ասսիզները»), զ) աշխարհիկ դատաստանագրքերը (ասորա-հռոմեական «Դատաստանագիրքը», Միսիթար Գոշի «Դատաստանագիրքը» և Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը»): Հետևաբար, Կիլիկիայի հայկական թագավորության իրավական համակարգի նորմատիվային հիմքը բավականին զարգացած էր: Այդ համակարգի գաղափարական ու կազմակերպական տարրերը ևս հասան զարգացման ավելի բարձր մակարդակի՝ պայմանավորված միջազգայնորեն ճանաչված թագավորական իշխանության գոյությամբ: Քաղաքական այդ գործոնը մնացածների (տնտեսական, սոցիալական) հետ միասին խթանում էր դրանց կայացումը և առաջընթացը: Դրա հետեվանքով այստեղ ավելի զարգացած ու կազմակերպված էին իրավական մշակույթի այնպիսի տարրեր, ինչպիսիք են իրավական գործունեությունը (իրավաստեղծագործությունը, իրավակիրառությունը և

²² «Զինվորական օրենքների» կառուցվածքի և բովանդակության վերլուծությունը տե՛ս **Ա. Գ. Սուքիասյան**, նշվ. աշխ., էջ 187-197:

իրավապահպանությունը), պաշտոնական ու տեսական պետաիրավական գիտակցությունը²³: Կիլիկիայի հայկական թագավորության պատմական զարգացումը հաստատում է այն օրինաչափությունը, որ հայ իրավունքն անկախության, խաղաղության և սոցիալ-տնտեսական զարգացման նպաստավոր ժամանակաշրջաններում դրսևորում էր առաջադիմական և մարդասիրական զարգացման միտումներ, ծլարձակում նոր իրավական ձևեր՝ ի դեմս Կիլիկիայի հայկական թագավորության ներպետական և միջպետական գրավոր աղբյուրների:

Բանալի բառեր – *իրավական համակարգ, իրավունքի ձև, իրավական մշակույթ, կրոնականություն, գործոն, փոխառում, իրավական սովորույթ, դատաստանագիրք, կանոնագիրք, կոդիֆիկացիա, միջազգային մասնավոր իրավունք*

АРТУР ВАГАРШЯН – Правовые системы и источники права в Армении и Киликийском армянском царстве. – В X–XIV вв. правовая система в Армении существенно переменилась. Оставаясь средневековой и феодальной, она переходила от неписаного к зафиксированному на письме обычному праву, не меняя при этом своего религиозного характера. Сложившая к XIII в. новая демографическая ситуация разделила правовую систему страны по этнорелигиозному признаку: собственно армянская и мусульманская. При этом по сравнению с коренной Арменией в Киликийском царстве были достаточно развиты как нормативные основы, так и организационные и идеологические элементы правовой системы. Её развитие стимулировали политический, экономический и социальный факторы. Наблюдается закономерность – в периоды политической независимости, мира и социально-экономической стабильности в обществе армянское право проявляло прогрессивные, гуманистические тенденции развития.

Ключевые слова: *правовая система, форма права, правовая культура, религиозный фактор, обычное право, судебник, книга канонов, кодификация, международное частное право*

ARTUR VAGHARSHYAN – Legal Systems and Sources of Law of Armenia and Armenian Kingdom of Cilicia. – The developing legal system of Armenia underwent significant changes in X–XIV centuries. While being medieval, feudal and customary legal system, it transferred from unwritten to written customary law, without changing religious character. However, since the XIII century the political environment of Armenian legal system became negative. In addition, the changes in demographics divided the legal system in Armenia on the basis of ethno-religious features – Armenian and Muslim. Compared to Armenia, both the regulatory basics and the organizational and ideological elements of the legal system of the Armenian Kingdom of Cilicia were developed enough. The political factor, along with the economic and social ones stimulated the development of the legal system. This proves the rule that the Armenian law manifested progressive, humanitarian trends of development, new codifications during the periods of political independence, peace and socio-economic stability of the society.

Key words: *legal system, form of law, legal culture, religiosity, factor, reception, legal custom, datastanagirk (code of laws), code of canon law, codification, international private law*

²³ Տեսական պետաիրավական գիտակցությունը կամ միտքը մարմնավորում էին ժամանակի կարկառուն ներկայացուցիչները՝ Ներսես Լամբրոնացին և Սմբատ Սպարապետը՝ իրենց իրավական ստեղծագործություններով:

ГЕНЕЗИС И ЗНАЧЕНИЕ СИСТЕМНОГО ПОДХОДА: ФИЛОСОФСКО-ПРАВОВЫЕ ОСНОВЫ

АРМЕН АЙКЯНЦ, ЕВГЕНИЯ ГЯНДЖУМЯН

В настоящее время актуализировались исследования методологии правовой науки и практики, имеющие непосредственную связь с проблемами оптимизации и повышения эффективности правовой сферы. Последнее обстоятельство обусловлено в основном применением инструментального подхода и развитием теории правовых средств. В результате построения научных исследований в такой логике их предметом выступают лишь правовые средства, причем во главу угла ставятся вовсе не свойства предмета, не потребности субъектов реализации права, а интерес и личность самого ученого; в итоге правовед конструирует научное исследование интуитивно. Если на каком-то этапе развития права этого было достаточно, то в настоящий период, «характеризующийся весьма высоким уровнем развития данной науки, интуиция становится явно недостаточно»¹. Возникает острая необходимость выработать более обоснованный методологический аппарат с учетом как своеобразной системы «человек – общество – право – государство», так и социальной ценности права и его места в современной цивилизации, взаимодействия права и экономической, политической и духовной сфер общественной жизни.

Принципиальной методологической ориентацией исследования правовых явлений, их интерпретации и конструирования теоретической модели изучаемого комплекса является в современной науке системный подход, претендующий на роль общенаучной методологии. Тем не менее, познание сущности правовых явлений, позиционируемых в юридической науке как *системы*, осуществляется посредством структурно-функциональных способов и методов, в то время как системный метод представлен в наименьшей степени. Подобный локальный подход предполагает ограниченность исследования системной природы явления права. Вместе с тем эвристический потенциал этого направления весьма велик: системный подход позволяет обнаружить признаки правовых явлений, ускользающие от наблюдателя при их изучении с точки зрения формально-логического анализа, структурного анализа или посредством наблюдения или рефлексии.

Актуальность развития системного подхода как одного из основных методов научного исследования обусловлена рядом предпосылок. В частности, важнейшим фактором его бурного становления послужила стремительная

¹ Сырых В. М. Логические основания общей теории права. Т. 1. М., 2004, с. 11.

дифференциация науки, что неизбежно приводит к выделению бесчисленных множеств практически изолированных и независимо развивающихся друг от друга научных дисциплин. Подобное положение вещей повлекло за собой такие отрицательные последствия, как «потеря связи целого», сужение кругозора – иногда до «профессионального кретинизма»². Так, размышляя о данной проблеме, А. Эйнштейн отмечал, что в процессе развития научного знания «деятельность отдельных исследователей неизбежно стягивается ко все более ограниченному участку всеобщего знания. Эта специализация, что еще хуже, приводит к тому, что единое общее понимание всей науки, без чего истинная глубина исследовательского духа обязательно уменьшается, все с большим трудом поспевает за развитием науки <...> она угрожает отнять у исследователя широкую перспективу, принижая его до уровня ремесленника»³. В результате ограниченность в предмете и методе исследования привела к кристаллизации профессиональной «однобокости кругозора».

Еще одной предпосылкой для разработки системного подхода послужил так называемый кризис редукционизма как методологического принципа, при котором любые объекты познания объясняются на основе законов, свойственных более простым системам («механицизм»). Иными словами, редукционизм – это «методологический принцип, согласно которому высшие формы материи могут быть полностью объяснены на основе закономерностей, свойственных низшим формам»⁴. Несостоятельность редуктивизма проявлялась в применимости исключительно к исследованию относительно простых объектов, в то время как требовалось изучение сложноустроенных, например, социальных отношений.

Таким образом, актуальность развития и совершенствование системного подхода обусловлены социальной потребностью в исследовании многосложных объектов посредством общенаучной междисциплинарной методологии. Как отмечает А. Н. Бобков, «не только обществоведы, но и биологи и даже физики стремятся сегодня рассматривать объекты своих наук как специфические системы, то есть как некоторые единства, состоящие из элементов, объединенных в некоторые структуры, задаваемые специфическими видами связей, и выполняющие в рамках этой системы определенные функции»⁵.

В целях эффективного применения системного подхода в конкретной области необходимо изучить его генезис, закономерности трансформации. Так, принципы системности знания были заложены в древнегреческой философии и науке (приблизительно IV–III вв. до н.э.): Евклид строил свою геометрию в качестве системы, и именно такое изложение ей

² Кохановский В. П., Золотухина Е. В., Лешкевич Т. Г., Фатхи Т. Б. Философия для аспирантов: Учебное пособие. Ростов-на-Дону, 1985, с. 384.

³ Эйнштейн А. Физика и реальность. М., 1965, с. 111.

⁴ «Философский энциклопедический словарь». М., 1983, с. 575.

⁵ Бобков А. Н. Общая теория систем и диалектика единого и множественного // «Философия и общество», 2005, № 4, с. 56.

придал Платон⁶. Хотя многие правоведы возникновение слова *система* датируют периодом Древней Эллады⁷, другие считают, что зачатки системных идей прослеживаются в более глубокой древности – в целостном мифологическом восприятии людьми всего сущего⁸.

Особый вклад в понимание мироздания внесли древнегреческие философы, в частности представители атомизма – учения о прерывистом, дискретном (зернистом) строении материи, возникшего благодаря философу-материалисту Левкиппу и его ученику Демокриту. «Демокрит вслед за своим учителем Левкиппом считал, что весь мир состоит из атомов и пустоты, благодаря которой атомы движутся. Из его атомистики вытекает универсальный принцип причинности. Атомы различаются по форме, порядку, положению и, носясь в пустоте, сталкиваются, отталкиваются, сцепляются. Это и есть процесс образования многообразных вещей»⁹ – система мира. Таким образом, Демокрит выстраивает систему мира, взяв за основу бытия атом.

Интересно с точки зрения изучаемой нами тематики учение Платона, попытавшегося представить систему мира идей, где идея выступала «как общность, целостность»¹⁰, то есть систематизирующий фактор. Критикуя учение Платона, Аристотель представил свою систему мироздания, в которой важное место отводилось представлениям о форме и материи¹¹. Более того, центральной составляющей системного мировоззрения Аристотеля стало учение о космосе, в котором вся сумма видимых небесных явлений и движения светил сводится в стройную систему, актуальную вплоть до возникновения учения Коперника¹².

Системные взгляды на мироздание древнегреческих мыслителей (Евклид, Платон, Эпикур, стоики и др.) сопровождалась попытками систематизации знаний, иными словами, сведения их в единую систему. В качестве наиболее показательного примера выделим систему знаний, изложенную Аристотелем. «Аристотель, – справедливо считает П. В. Алексеев, – явился систематизатором всех имевшихся в ту эпоху отраслей научного знания и основоположником целого ряда наук (логики, психологии, биологии, истории науки, истории философии, эстетики, политэкономии, государствоведения и др.) <...> Его историческая заслуга состояла в том, что он не просто выделил те или иные категории, но, отобрав наиболее значительные, общие понятия, пополнив их состав, представил категории впервые в виде системы»¹³.

Как отметил В. С. Нерсесянц, именно в это время «начинаются поис-

⁶ См. **Агошкова Е. Б., Ахлибининский Б. В.** Эволюция понятия системы // «Вопросы философии», 1998, № 7, с. 173.

⁷ См. **Спицнадель В. Н.** Основы системного анализа. СПб., 2000, с. 11–12.

⁸ См. **Сурмин Ю. П.** Теория систем и системный анализ. Киев, 2003, с. 13.

⁹ «Философия». М., 2001, с. 38.

¹⁰ **Алексеев П. В.** История философии. М., 2005, с. 14.

¹¹ См. **Аристотель.** Метафизика // Сочинения в 4 т. Т. 1. М., 1975, с. 148-149, 174-175.

¹² См. «Мир философии: Книга для чтения». Часть 1. М., 1991.

¹³ **Алексеев П. В.** Указ. соч., с. 20-21.

ки принципов, форм и конструкций для установления надлежащих взаимосвязей, взаимозависимостей и согласованного взаимодействия права и власти»¹⁴.

В период средневековья, отмеченный падением античного рабовладельческого общества, также наблюдаются системные идеи в философских воззрениях. Так, христианский богослов и философ Августин Блаженный Аврелий систематизировал религиозное знание, представив его в качестве единой, целостной системы. Кроме того, он переосмыслил учение Платона о существовании бестелесных идей, объединив мир идей и Мировую Душу и включив все платоновские идеи в религиозный Абсолют¹⁵.

Системные взгляды наблюдаются в суждениях монаха-доминиканца Фомы Аквинского, представлявшего философию и теологию единым целым, считая, что по своему предмету они «фактически не различаются: обе они имеют предметом Бога и то, что он создает; только теология идет от Бога к природе, а философия – от природы к Богу»¹⁶. Таким образом, по мнению Фомы Аквинского, система мироздания, основанная на принципе гармонии веры и разума, выстраивается в соответствии с иерархическим порядком всего сущего, созданного Богом.

Новый толчок развитию системных идей был дан в эпоху Возрождения. Именно на нее приходится возникновение нового мировоззрения – человек воспринял действительности как единство и целостность природы. Примером тому служат системные взгляды Николая Коперника (гелиоцентрическая система мира), Джордано Бруно (концепция бесконечности Вселенной и бесчисленного множества миров), Галилео Галилея (вращение Земли, бесконечность мира и единство природы), Иоганна Кеплера (законы движения планет вокруг солнца) и др.

В Новое время, характеризующееся кризисом механистической методологии, неприменимой к исследованию сложных объектов, дифференциацией и специализацией научного знания, возникла необходимость выработки единой общенаучной методологии, в качестве которой выступила общая теория систем Людвиг фон Берталанфи. В своих работах Берталанфи сформулировал общие принципы и законы систем, создал основы для синтеза современного научного знания в результате выявления изоморфизма законов, относящихся к различным сферам реальности¹⁷.

Таким образом, исследуя эволюцию системного подхода, мы приходим к следующим выводам. Во-первых, системные идеи уходят своими корнями в глубокую древность, в мифологию, когда человек, противостоя природе, конструировал некую фантастическую систему мира. Во-вторых, не прихо-

¹⁴ **Нерсесянц В. С.** Философия права. М., 1997, с. 94.

¹⁵ См. «Введение в философию». М., 2005, с. 203

¹⁶ **Боргош Ю.** Фома Аквинский. М., 1975.

¹⁷ См. **Берталанфи Л.** История и статус общей теории систем // «Системные исследования. Ежегодник 1973». М., 1973.

дится говорить об универсальности общей теории систем, поскольку не удалось выработать такие непротиворечивые законы, которые применимы ко всему многообразию системных объектов. Данное обстоятельство признавал и сам Л. фон Бергаланфи. Если в его работах 40–50-х гг. прошлого столетия неоднократно утверждалось, что общая теория систем представляет собой «шаг к *Mathesis universalis*, к универсальной науке, охватывающей все другие науки»¹⁸, то в дальнейшем ученый отмечал, что «общая теория систем в ее настоящем виде является одной – и притом весьма несовершенной – моделью среди других»¹⁹.

Сегодня в системном подходе принято видеть общенаучную ориентацию, междисциплинарную методологию, «выражающуюся в стремлении построить целостную картину объекта»²⁰, «совокупность методов и средств, позволяющих исследовать свойства, структуру и функции объектов, явлений или процессов в целом, представив их в качестве систем со всеми сложными межэлементными взаимосвязями, взаимовлиянием элементов на систему и окружающую среду, а также влиянием системы на ее структурные элементы»²¹. Системный подход предлагает изначально строить модель, обнимающую собой общую картину всех будущих направлений получения знаний, и отдельные части исследований согласовывать с этой общей моделью²².

При системном подходе в орбите исследования находятся целостные, интегративные свойства исследуемого объекта, явления или процесса, их структура и функции. Острая необходимость в применении системного подхода прослеживается в тех случаях, когда объект описывается различными путями, в то время как выводимое знание должно вбирать все знания, получаемые каждым из возможных способов, однако отсутствует возможность реализации данной задачи вследствие стержневых различий позиций.

Конститутивным для системного подхода выступает понятие *система*, под которым понимается «множество взаимосвязанных элементов, выступающее как определенная целостность»²³. Сущность системного исследования в том, что исследуемый объект анализируется не в качестве совокупности его составных частей, а как система, то есть целостное образование. В то же время, несмотря на распространенность термина, до сих пор нет общепринятой дефиниции; это обусловлено, прежде всего, не

¹⁸ См. **Садовский В.Н.** Проблемы методологии системных исследований в современной американской философии науки // «Системные исследования. Методологические проблемы». Ежегодник 1980. М., 1981, с. 93.

¹⁹ **Бергаланфи Л.** Общая теория систем – критический обзор // «Исследования по общей теории систем». М., 1969, с. 50.

²⁰ **Блауберг И. В., Садовский В. Н., Юдин Э. Г.** Системный подход в современной науке // «Проблемы методологии системного исследования». М., 1970, с. 16.

²¹ **Прангишвили И. В.** Системный подход и общесистемные закономерности. М., 2000, с. 22.

²² **Юдин Э. Г.** Системный подход и принцип деятельности. М., 1978, с. 131.

²³ **Садовский В. Н.** Основания общей теории систем. М., 1974, с. 18.

столько терминологическими разногласиями, сколько наделянием различными исследователями системы неидентичным комплектом свойств.

Тем не менее, можно выделить набор признаков системы, принятый научным сообществом. Прежде всего, это совокупность элементов, которые обладают определенными взаимосвязями и взаимоотношениями, что превращает множество элементов в скоординированное целое. Следует отметить, что целостность системы обуславливает возникновение новых признаков, не присущих отдельным элементам и возникающих ввиду взаимодействия образующих системы элементов и влияния внешних факторов.

Таким образом, объединяя вышеуказанные признаки, приходим к выводу, что система – это скоординированная совокупность элементов, обладающих определенными связями и отношениями, которая составляет целостность. Иными словами, система есть множество элементов, находящихся в определенных связях и отношениях между собой, что влечет кристаллизацию новых целостных свойств. В результате применения системного подхода научное исследование ориентировано на выявление интегративных признаков, отсутствующих у отдельных элементов, но присущих системе в целом.

В то же время, исследуя объект (явление, процесс) в целом, необходимо учитывать взаимодействие системы и ее элементов с окружающей средой, внешними факторами, «с которыми система взаимодействует, изменяя их и изменяясь при этом сама»²⁴. Подобное исследование способствует определению границ системы, позволяя познать ее целостность и структуру, более того, прогнозировать ее потенциальную трансформацию. Иначе говоря, «системный объект принципиально не может быть проанализирован, если при его анализе абстрагироваться от его взаимодействия со средой»²⁵. Данное обстоятельство обязывает правоведов изучать «системные юридические конструкции», к примеру, систему ограниченных вещных прав во взаимосвязи и взаимодействии с их элементами, учитывая воздействие на рассматриваемый объект внешних факторов.

В процессе своего функционирования система опирается на определенную внутреннюю упорядоченность взаимосвязанных элементов, иными словами, структуру. Существует множество определений структуры системы, которые сводятся к следующим дефинициям – «инвариантная упорядоченность (взаиморасположение) элементов в соответствии с законом связи между ними»²⁶. Т. е. структура рассматривается в качестве внутреннего строения системы, включающего набор ее элементов, их взаимосвязи и взаимоотношения.

Предназначение структуры – обеспечить внутреннюю прочность,

²⁴ Афанасьев В. Г. Системность и общество. М., 1980, с. 150.

²⁵ Уёмов А. И. Системный подход и общая теория систем. М., 1978, с. 366.

²⁶ Айдинян Р. М. Методологические основы системологии: учебное пособие. М., 1978, с. 76–77.

устойчивость и высокую степень сопряженности всех элементов системы, возможность противостоять среде в виде независимого образования. Более того, нельзя рассматривать систему в отрыве от ее структуры, поскольку именно благодаря структуре, обеспечивающей устойчивость связи и взаимодействие элементов, образуется общая картина, единое целое. Именно поэтому структуру часто называют хранителем целостности системы.

Таким образом, при исследовании системного юридического объекта необходимо определить его структуру, чтобы установить композицию элементов системы, рассмотреть существующие между ними связи, превращающие элементы системы в целостность.

Следует отметить, что «внутренней исходной единицей, функциональной частью системы, собственное строение которой не рассматривается»²⁷, является элемент, выступающий в качестве наименьшей части системы, подчиняющейся ее закономерностям. Нередко правоведы указывают фактор неделимости элемента, однако, по нашему мнению, данное свойство в юридических науках носит скорее условный характер, поскольку выделение перечня элементов зависит от усмотрения самого исследователя и поставленных им задач.

При анализе отдельных элементов системы нужно учитывать роль конкретного элемента в системе, а также его взаимодействие с другими элементами и окружающей средой. Иначе говоря, «элемент описывается не как таковой, а с учетом его места в целом»²⁸.

С точки зрения методологии системного подхода необходимо особое внимание обратить на исследование связей, возникающих между кирпичиками структуры – элементами. Под связями системы подразумеваются «компоненты системы, осуществляющие взаимодействие между ее элементами, а также между системой в целом и средой»²⁹.

При исследовании конкретной системы подчас обнаруживается огромное количество разнообразных связей между элементами. При этом, на наш взгляд, нет необходимости в сплошном изучении всех этих связей, напротив, требуется концентрация на системообразующих, стержневых связях, обуславливающих образование и сохранение интегративных свойств системы.

Выступая в качестве общенаучной междисциплинарной методологии, системный подход может быть применен к научному исследованию многообразных объектов. Причем наиболее эффективным будет использовать его для изучения сложноорганизованных объектов, не поддающихся аналитическим методам исследования. Неслучайно ныне, в условиях относительной разработанности в правовых исследованиях системного подхода, он вошел в арсенал интенсивно используемых методов.

²⁷ Качала В. В. Основы теории систем и системного анализа: учебное пособие для вузов. М, 2007, с. 59–60.

²⁸ Блауберг И. В., Садовский В. Н., Юдин Э. Г. Указ. соч., с. 16.

²⁹ Качала В. В. Указ. соч., с. 62.

Как отмечает Г. В. Мальцев, использование системного подхода в юридических исследованиях явилось «крупным прорывом в понимании природы права <...> право, правовое регулирование – это не механизм, не конгломерат отдельных структур, не агрегат рационально соединенных элементов, приводимый в движение конструктором или инженером (законодателем или правоприменителем), но открытая динамическая система, обладающая качествами единства и целостности, активно взаимодействующая со средой, социальной и природной». Благодаря использованию системного подхода «в сознании юристов механические закономерности, заметно проявляющие себя в рамках юридико-догматической методологии, были потеснены общими законами организации открытых систем, постоянно обменивающихся информацией со средой»³⁰. В то же время, по мнению правоведа, юриспруденция «воспользовалась не всеми полезными уроками, которая дает общая теория систем»³¹.

А. И. Бойко же считает, что «особого приближения юристов к новейшим философским трактовкам понятия “система” еще не случилось. После ритуальных сносок на философские установки, юристы пускаются в абсолютно автономное, почти противоположенное общенаучным взглядам, узкопрофессиональное обследование правовых явлений и их систем»³². Однако правовед не отрицает применения системного подхода при юридическом исследовании, отмечая, что «ростки настоящего системного понимания природы права, созвучные философским представлениям, постепенно прививаются и в юриспруденции»³³.

Таким образом, рассматривая генезис системного подхода в научном исследовании, приходим к выводу, что первоначальное стремление некоторых ученых выработать общую теорию систем как универсальную мета-теорию преждевременно, поскольку до сих пор не удалось сконструировать целостную, непротиворечивую теорию систем, применимую к многообразным сложным системным объектам. Кроме того, усложнение и дифференциация уровней правового регулирования общественных отношений, в том числе посредством взаимопроникновения права и политики и экономики, приводят к необходимости изучать правовую материю с позиций системного подхода и его причисления к числу базовых методов юридического исследования.

Ключевые слова: *системный подход, философско-правовые основы, системные свойства, дифференциация науки, редуктивизм*

³⁰ Мальцев Г. В. Социальные основания права. М., 2007, 206.

³¹ Там же.

³² Бойко А. И. Система и структура уголовного права: в 3 т. Т. I. Системология и структурализм в современной познавательной культуре. Ростов-на-Дону, 2007, с. 239–240.

³³ Там же, с. 241.

ԱՐՄԵՆ ՀԱՅԿԻՅԱՆՑ, ԵՎԳԵՆԻԱ ԳՅԱՆԶՈՒՄՅԱՆ – Համակարգային մոտեցման զարգացումը և նշանակությունը. իրավափիլիսոփայական հիմքեր – Հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մակարդակների ներկա բարդությունների և դրանց տարբերակման պայմաններում առավել արդիական է դառնում համակարգային մոտեցումը՝ որպես գիտական հետազոտությունների իրականացման հիմնական մեթոդներից մեկը:

Սույն հոդվածում հետազոտվում են համակարգային մոտեցման զենեքացման նախապայմանները և իրավափիլիսոփայական հիմքերը, ինչպես նաև իրավական երևույթների ուսումնասիրման ընթացքում տվյալ մեթոդի կիրառման հեռանկարները:

Բանալի բառեր – *համակարգային մոտեցում, փիլիսոփայիրավական հիմքեր, համակարգային հատկանիշներ, գիտության տարբերակում*

ARMEN HAYKYANTS, YEVGENIA GYANJUMYAN – *Genesis and Significance of the Systemic Approach: Philosophical and Legal Bases.* – Systemic approach as one of the main methods of scientific research becomes more actual in conditions of the current complications and differentiation of the legal regulation levels of social relations.

This article explores the prerequisites of the origin and philosophical and legal bases of the systemic approach, as well as new horizons for the application of this method in the legal phenomena studies.

Key words: *systemic approach, philosophical and legal bases, systemic features, science differentiation*

ПРАВОВОЕ ВОСПИТАНИЕ И ОБУЧЕНИЕ В ГРАЖДАНСКОМ ОБЩЕСТВЕ КАК ВАЖНЕЙШЕЕ УСЛОВИЕ ГАРМОНИЗАЦИИ МЕЖНАЦИОНАЛЬНЫХ ОТНОШЕНИЙ

ГАГИК КАЗИНЯН

Большинство современных государств отличается многонациональным составом, что является объективной основой для межнациональных отношений, имеющих разнообразный, сложный и достаточно хрупкий характер. Межнациональные отношения в современном мире стали важной политической сферой, оказывающей влияние на межгосударственные отношения. Национальная политика государства – это совокупность принципов, норм, правил, посредством которых осуществляется управление национальными отношениями. Основное место среди этих норм и принципов занимает право. Смысл данного исследования – показать, что для гармонизации межнациональных отношений и достижения межнационального согласия становление гражданского общества и такой его основы, как право, имеет чрезвычайно большое значение. Зрелое гражданское общество и его первооснова – *homo juridikus* – способны решать многие задачи межнациональных отношений; особенно это касается преодоления в этой области правового нигилизма.

Существуют разные теоретические модели гражданского общества и соответствующие ему модели государственной власти: либеральная (Т. Гоббс, Дж. Локк), позитивно-либеральная (Г. Гегель), марксистская, социал-демократическая¹. Из всех теоретических трактовок гражданского общества самой распространенной является концепция его и государства разграничения. Согласно этой концепции взаимоотношения государства и гражданского общества прошли долгий и трудный путь развития и постепенно приобрели цивилизованный и демократический характер. На определенной стадии этого пути сформировалось цивилизованное, демократическое общество, которое и получило название гражданского. Такому обществу соответствует развитое, демократическое, социально-правовое государство.

На этой концептуальной основе современное гражданское общество определяется как “правовое, либерально-демократическое, плюралистическое, открытое общество, основным субъектом которого является свободный индивид, реализующий свои интересы в рамках единого для всех закона и общего правопорядка. Человек, как член гражданского общества,

¹ См. Мухаев Р. Т. Теория государства и права. М., 2001, с. 231-233.

является полноправным и вместе с тем ответственным (соблюдающим свои обязанности и уважающий права других) участником различных общественных отношений – экономических, духовных, информационных и т.д.”². Таким образом, если основной субъект гражданского общества не является правовым существом с достаточно высоким уровнем правовой культуры, то о становлении гражданского общества говорить не приходится.

Зрелое гражданское общество – это демократическое, правовое общество, ориентированное на конкретного человека, создающее атмосферу уважения к законам и правовым традициям, общегуманистическим идеалам, обеспечивающее свободу творческой и предпринимательской деятельности, позволяющее достигнуть благополучия и реализовать права человека и гражданина, органично вырабатывающее механизмы ограничения и контроля за деятельностью государства³.

Зрелое гражданское общество способно решать не только перечисленные задачи, но также многие проблемы межнациональных отношений. Нужно согласиться с авторами, которые связывают гражданское общество с национальным согласием. Иными словами, исходя из общего понятия гражданского общества, необходимо иметь в виду, что в тех странах, где население отличается многонациональным и многоконфессиональным составом, среди общих идей и принципов, лежащих в основе гражданского общества, важное место занимает национальное согласие⁴. Конечно, важным средством его достижения является национальная политика. С учетом этого суть данной работы можно выразить следующей формулой: гармонизация интернациональных и национальных интересов и потребностей зависит не только от эффективной национальной политики, но и от становления подлинного гражданского общества и уровня правовой культуры в стране.

В системе элементов гражданского общества разные авторы выделяют различные структурные компоненты. Так, В. Нерсесянц перечисляет следующие компоненты гражданского общества: гуманитарный (человеческий состав – свободные индивиды); социальный (деление общества на социальные группы, слои, классы); экономический (экономический строй общества – формы и отношения собственности, производства, обмена, потребления); духовный (наука, образование культура, религия); информационный (средства и формы информации, общественное мнение); территориально-управленческий (местное самоуправление); организационный (разнообразные формы общественных и групповых объединений)⁵. Другие авторы в структуре гражданского общества различают следующие пять основных систем, которые отражают соответствующие сферы его жизнедеятельности: социальная (в узком смысле слова); экономическая; поли-

² Нерсесянц В. С. Общая теория права и государства. М., 1999, с. 284.

³ См. «Теория государства и права». М., 1997, с. 93.

⁴ См. «Политология для юристов». М., 1999, с. 335.

⁵ См. Нерсесянц В. С. Указ. соч., с. 285.

тическая; духовно-культурная; информационная⁶. Можно констатировать, что гражданское общество имеет очень сложную структуру с множеством элементов и подсистем. Почти все его подсистемы отличаются плюрализмом. Однако единым для всех и интегрирующим все и вся фактором является право. Начиная с Аристотеля, который ввел понятие *homo politikus*, а впоследствии с Гегеля и Канта и кончая мыслителями наших дней, именно право как средство установления в обществе добра и справедливости считалось и считается таким цементирующим фактором.

Свою философию гражданского общества Кант построил на концепции антагонизма между индивидуумами как стимула их саморазвития. По Канту, во-первых, человек должен все создать собственными силами и отвечать за созданное; во-вторых, столкновение человеческих интересов и необходимость их защиты стимулирует самосовершенствования людей; в-третьих, гражданская свобода, законодательно обеспеченная правом, является необходимым условием самосовершенствования, гарантией соблюдения человеческого достоинства. В гражданском обществе правовое состояние человека основывается на следующих принципах: свобода каждого члена общества как человека; равенство человека с другими как подданного; самостоятельность каждого члена общества как гражданина⁷.

По Гегелю гражданское общество представляет собой такую зрелость общественных отношений, когда исключаются и вседозволенность, и деспотия. Концепцию гражданского общества он построил на двух принципах: индивиды руководствуются только своими собственными интересами, однако между ними формируются общественные связи, в условиях которых каждый зависит от каждого⁸. Если учесть, что эти связи устанавливает право, то можно констатировать, что именно оно – глобальный и универсальный фактор, интегрирующий всех членов общества, которые могут иметь разную национальную и конфессиональную принадлежность, профессию, пол и т.д.

Таким образом, первооснова, клетка гражданского общества – это свободный индивид, приоритетным качеством которого является не национальное или профессиональное, а правовое сознание. В современном обществе, особенно многонациональном и/или многоконфессиональном, именно право, а не национальность, религия или история остается глобальным, тотальным и интегрирующим фактором.

Следовательно, каждый человек обязан быть носителем правовой культуры. Это означает, что член общества, прежде всего, должен быть гражданином, а потом уже частным лицом. Думаю, тут уместно вспомнить слова великого русского поэта Н. А. Некрасова: «Поэтом можешь ты не быть, но гражданином быть обязан».

Здесь необходимо иметь в виду и то обстоятельство, что становление гражданского общества – естественный исторический процесс, который

⁶ См. «Теория государства и права». М., 1997, с. 91-96.

⁷ См. Кант И. Сочинения в 6-ти томах. Т. 4, часть 2. М., 1965, с. 79.

⁸ См. Гегель Г. Сочинения. Т. 7. М.–Л., 1934, с. 255.

можно ускорить только в определенных и ограниченных рамках. Например, в системе структурных компонентов гражданского общества важное место занимает гуманитарный компонент – свободные, свободно и гражданственно мыслящие индивиды. Зрелый человек, предпосылка и компонент гражданского общества, должен обладать развитым самосознанием, включающим политико-правовое сознание. Становление такого человека требует усилий и продолжительного времени. Отсюда вывод: поскольку основным интегрирующим фактором гражданского общества является право (и государственность), а член этого общества – правовое существо, то система воспитания и образования в таком обществе должна включать в себя правовое просвещение и образование.

Несмотря на большую роль материально-экономических факторов в процессе развития, в основе правопорядка и законности по-прежнему лежат духовно-правовые качества человека. Революционный романтизм конца прошлого века, который считал основной гарантией развития общества рыночную экономику и структурные изменения, не оправдал себя. Главной причиной стал кризис законности, из заколдованного круга которого не могут вырваться постсоветские государства.

Кризис законности, будучи основной проблемой, нивелирует осуществлённые во всех областях общественной жизни реформы, сводит на нет достижения и победы. Создавшееся социальное состояние способствует массовому правовому нигилизму, его воспроизводству и преумножению. В такой ситуации правят не законы, а люди. Законы воспринимаются своего рода паутиной, которую можно обойти. Всё это способствует преобладанию эгоистических интересов, халатности, самоуправства, волюнтаризма и в конечном счете приводит к кризису власти. В странах с многонациональным населением этот кризис проявляется и в области межнациональных отношений. Острой проблемой становится национальный нигилизм⁹.

При этом негативные явления имеют место в условиях достаточно полного законодательного и подзаконного регулирования. Таким образом, из всех гарантов развития страны главнейшим становится правопорядок, правовая стабильность, т.е. преодоление кризиса законности. Только действуя в этом направлении, можно говорить о достижениях в остальных сферах гражданского общества.

Возникает вопрос: чем обусловлен кризис законности? Ответ однозначен – почти нигилистическим, крайне низкого уровня правосознанием населения, особенно участников публично-правовых отношений.

Как правило, в странах, отличающихся высоким уровнем правосознания и правовой культуры, кризиса законности не наблюдается, поскольку правосознание выполняет не только познавательную и оценочную, но и регулирующую функцию. С другой стороны, необходимо иметь в виду, что высокий уровень правосознания не возникает сам собой, а формируется в процессе социального образования и воспитания.

⁹ См. «Политология для юристов», с. 565-566.

Достижения современных развитых цивилизаций в большей мере обусловлены законопослушностью населения, дисциплиной и правовой культурой. Можно быть талантливым ученым или удачливым бизнесменом, но плохим гражданином. Перед нашим обществом стоит задача воспитать, прежде всего, гражданина с правовым сознанием и только потом ученого, бизнесмена и т.д.

Знание права и правовое образование формирует в человеке определенное ценностное отношение, что, в свою очередь, исполняет в практической деятельности роль локомотива. При наличии системы ценностей и воли познания дают человеку новое ментальное качество – правовую установку, позволяющую определенным образом воспринимать и оценивать правовую информацию и процессы, готовность действовать в соответствии с ценностной системой. Правовая установка должна доходить до степени убеждения, превратиться во внутренний план человека, стать программой деятельности.

Отсюда следует второй важный вывод – основной проблемой современного постсоветского общества является кризис законности и правопорядка, который уходит своими корнями в низкий уровень правового сознания населения, недостаток правовой культуры, а в области межнациональных отношений – национальный нигилизм. Это обстоятельство надо учитывать при всех общественных реформах.

Для преодоления правового нигилизма, формирования и повышения правовой культуры существует много путей, средств и способов, но два среди них наиболее важны. Это, во-первых, конституционная и общая законность организации и деятельности всего государственного аппарата, во-вторых же, система морально-правового образования и воспитания.

Морально-правовое воспитание – это целенаправленная и систематизированная деятельность государства, его органов, образовательных и других учреждений гражданского общества, которая направлена на формирование высокого уровня правосознания и правовой культуры, его закрепление и воспроизводство. Система общего правового воспитания подразумевает правовой всеобуч, начинающийся с детского сада и продолжающийся на всех уровнях образования.

Следовательно, можно сделать третий вывод – для преодоления правового нигилизма и формирования правовой культуры необходимо внедрить систему государственного и гражданского правового воспитания и образования на всех уровнях.

Ключевые слова: *гражданское общество, правовое существо, правовой нигилизм, правовое образование и воспитание*

ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ – Իրավական դաստիարակությունը և կրթությունը քաղաքացիական հասարակությունում՝ որպես ազգամիջյան հարաբերությունների ներդաշնակեցման կարևորագույն պայման – Իրավունքը քաղաքացիական հասարակության ինտեգրման գործոն է, իսկ դրա անդամները նախևառաջ պետք է լինեն իրավական էակներ: Քաղաքացիական հասարա-

կույթյան անդամների մյուս հատկանիշները (մասնագիտություն, ազգություն և այլն) ներհատուկ չեն: Ժամանակակից հայկական և հետխորհրդային մյուս հասարակությունների հիմնական խնդիրն օրինականության ու իրավակարգի ճգնաժամն է, որի պատճառներից է բնակչությանը բնորոշ իրավագիտակցության և իրավական մշակույթի ցածր մակարդակը: Իրավական նիհիլիզմը հաղթահարելու հիմնական մեթոդներից մեկը իրավական դաստիարակություն ու կրթության քաղաքացիական և պետական համակարգ ներդնելն է: Այս ակնհայտ դրույթները պետք է կիրառվեն ինչպես կրթական հաստատությունների ստեղծման և գործունեության, այնպես էլ դրանց ներքին իրավական կարգավորման կառուցակարգերում: Ուստի կրթական հաստատությունների գլխավոր նպատակը պետք է լինի իրավական մշակույթով օժտված անձի ձևավորումը, իսկ այդ նպատակին հասնելու միջոցը՝ ընդհանուր իրավական դաստիարակության և կրթության համակարգի ներմուծումը:

Բանալի բառեր – քաղաքացիական հասարակություն, իրավական էակ, իրավական նիհիլիզմ, իրավական դաստիարակություն և կրթություն

GAGIK GHAZINYAN – *Legal Education and Tuition in the Civil Society as the Most Important Condition of Harmonization of International Relations.* – Law is an integrating factor of the civil society, and its members should be first of all legal personalities. Other characteristics of the members of the civil society (profession, nationality, etc.) are not inherent. The main problem of the modern Armenian and other post soviet societies is the crisis of legality and legal order. Deep roots of this crisis are in the low level of legal awareness and legal culture peculiar to the population. One of the main methods to overcome the legal nihilism is the introduction of the system of civil and state legal education and tuition. These axiomatic provisions must be used both in the legal regulation of establishment and activity of educational institutions, and in their local normative regulation.

As a result - the main goal of these educational institutions should be formation of a person with legal culture, and the way to reach this goal is general legal tuition and education as an essential element of general and professional education.

Key words: *civil society, legal personality, legal nihilism, legal education and tuition*

ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՆՑԱԳՈՐԾԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏԻԳՐԱՆ ՄԻՍՈՆՅԱՆ

Երիտասարդ հանցագործների հոգեբանական առանձնահատկությունները բացահայտելու համար կարևոր է ուսումնասիրել հանցագործ և օրինապաշտ երիտասարդներին բնորոշ ընդհանուր և տարբերիչ գծերը: Ընդհանրապես, երիտասարդությունն անձի համար անցումային շրջան է, որը բնութագրվում է իր հակասականությամբ և անհանդուրժողականությամբ¹: Երիտասարդ տարիքում ամրապնդվում և կայունանում են անձի արժեքային կողմնորոշումները: Երիտասարդի մեջ ձևավորվում է պահանջմունքների, բարոյաիրավական հայացքների, աշխարհընկալման մի համակարգ, որն առավել հաստատուն է և կարծրացած: Արդեն ձևավորված արժեքային համակարգը ազդում է երիտասարդի վարքագծի վրա ինչպես առօրյա գործունեության ընթացքում, այնպես էլ բարդ իրադրություններում: Փաստորեն, անհատի արժեքային կողմնորոշիչները ուղղորդում են նրա գործունեությունը սոցիալական միջավայրում, նպաստում են նրա առավել ընդունելի և օգտակար վարքագծի ընտրությանը²:

Կենսական, մշակութային արժեքները յուրացնելը և ներքին հոգեբանական վերլուծության ենթարկելը հույժ կարևոր են երիտասարդի համար: Այս առումով արդիական է օրինապահ երիտասարդների և հանցանք կատարած երիտասարդների արժեքային կողմնորոշումների ուսումնասիրությունը: Արժեքային համակարգը պայմանականորեն տարանջատվում է երկու մասի՝ արժեք-նպատակներ և արժեք-միջոցներ: Արժեք-նպատակները անձի համոզմունքն են այն բանում, որ տվյալ նպատակն արժանի է և կարևոր, որպեսզի ինքը դրան ձգտի և հասնի, իսկ արժեք-միջոցները այս կամ այն նպատակին հասնելու համար (կամ կոնկրետ իրադրությունում) տվյալ վարքագծի նախընտրելի ձևն են³: Պետք է ասել, որ արժեք-նպատակներն ավելի հաստատուն են ու կայուն և ցույց են տալիս տվյալ անձի ընդհանուր ուղղվածությունը: Երիտասարդների հանցավոր վարքագծի պատճառները բացահայտելու համար պակաս կարևոր չէ նաև վերջիններիս արժեք-միջոցների համակարգի ուսումնասիրությունը, քանզի արժեք-միջոցներն առավել

¹ Տե՛ս Сапогова Е. Е. Психология развития человека. М., 2001, էջ 374:

² Տե՛ս «Курс советской криминологии». М., 1985, էջ 354:

³ Տե՛ս Ս. Վ. Առաքելյան, Ա. Հ. Գաբուլյան, Ա. Ռ. Մարգարյան, Կրիմինոլոգիական հետազոտությունների մեթոդիկա, Եր., 2001, էջ 160:

մեծ ազդեցություն ունեն անձի վարքագծի վրա և ընդհանրապես վարքագծի նորմի վերածվելու միտում ունեն⁴:

Օրինապահ և հանցանք կատարած երիտասարդների արժեքային կողմնորոշումների՝ Մ. Ռոկիչի մեթոդով կատարված մեր ուսումնասիրությունը⁵ ցույց տվեց, որ նրանց արժեքային կողմնորոշումները էականորեն տարբերվում են միմյանցից, ինչը թերևս օրինաչափ է: Այս տարբերություններն առավել ցայտուն երևում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 1

Օրինապահ և հանցանք կատարած երիտասարդների արժեք-նպատակները

ԱՐԺԵՔ-ՆՊԱՏԱԿՆԵՐ			
Օրինապահ երիտասարդներ		Հանցանք կատարած երիտասարդներ	
Արժեք	Գործակից	Արժեք	Գործակից
Ընտանեկան երջանիկ կյանք	51.2	Ազատություն	30.7
Նյութապես ապահով կյանք	28.1	Հետաքրքիր աշխատանք	28.5
Լավ և հավատարիմ ընկերներ	23.9	Ընտանեկան երջանիկ կյանք	28.1
Հարգանք վայելել շրջապատում	22.7	Նյութապես ապահով կյանք	26.3
Հետաքրքիր աշխատանք	19.8	Հարգանք վայելել շրջապատում	22.9
Ազատություն	17.5	Լավ և հավատարիմ ընկերների առկայություն	22.5
Ուրիշների երջանկություն	15.3	Զվարճանք	17.9
Զվարճանք	14.3	Ինքնավստահություն	15.2
Ինքնավստահություն	14.2	Ուրիշների երջանկություն	14.1

⁴ Տե՛ս **Саркисов Г. С.** Объект индивидуального профилактического воздействия в теории предупреждения преступности. Ер., 1985, էջ 55:

⁵ Հետազոտությունը կատարվել է 102 օրինապահ երիտասարդների և 74 դատապարտյալների մասնակցությամբ:

Ինչպես տեսնում ենք, տեղ գտած արժեքներից ոչ մեկը օրինապահ և հանցանք կատարած երիտասարդների շրջանում նույն հորիզոնականում չէ: Օրինապահ երիտասարդների համար առաջնային արժեք է երջանիկ ընտանեկան կյանքը, որը դատապարտյալների շրջանում զբաղեցնում է երրորդ հորիզոնականը: Հետաքրքրական է, որ երջանիկ ընտանեկան կյանքը օրինապահ երիտասարդների շրջանում ունի շատ բարձր գործակից (51.2), որն ակնհայտորեն վկայում է, որ այս արժեքը հույժ կարևոր է երիտասարդների համար: Հանցանք կատարած երիտասարդների արժեքային համակարգում առաջին տեղը զբաղեցնում է ազատությունը, ինչը ազատությունից զրկված մարդու համար բնական է, սակայն, ինչպես տեսնում ենք, այլ արժեքների համեմատ այն չունի արտահայտված գերակայություն, ինչը վկայում է այն մասին, որ հետաքրքիր աշխատանքը, երջանիկ և նյութապես ապահով կյանքը ևս կարևոր ու առաջնային են հանցանք կատարած երիտասարդների համար: Հատկանշական է, որ ուրիշների երջանկությունը հանցանք կատարած երիտասարդների արժեքային համակարգում զբաղեցնում է վերջին տեղը, ինչը վկայում է նրանց մեջ եսասիրության գերակայության մասին: Այս առումով ուշագրավ է այն հանգամանքը, որ օրինապահ երիտասարդների համար ուրիշների երջանկությունը զբաղեցնում է յոթերորդ հորիզոնականը, ինչը ևս բացասական երևույթ է և խոսում է նոր սերնդի մեջ նեղ անձնային կողմնորոշումների արտահայտվածության մասին:

Հանցանք կատարած երիտասարդների արժեքային համակարգում առաջնային տեղ է զբաղեցնում նաև հետաքրքիր աշխատանքը, ինչը վկայում է, որ նրանք առավել սուր են զգում դրա պակասը: Հանրապետության տնտեսական վիճակը, հասարակական արժեքների մեծ մասի խեղումը մեծ թափ հաղորդեցին գործազրկությանը, որը հանցավորություն ծնող կարևորագույն գործոններից է: Թե՛ օրինապահ և թե՛ հանցանք կատարած երիտասարդների մեջ ինքնավստահության ցածր ցուցանիշները, մեր կարծիքով, պայմանավորված են վերջին տարիների բացասական քաղաքական գործընթացներով, որի հետևանքով հասարակության անդամների մեծ մասի մեջ առկա են հուսալքվածություն և սթրեսային վիճակներ, վատ, անբարենպաստ ապագայի կանխատեսում:

Էական տարբերություններ կան նաև օրինապահ և հանցանք կատարած երիտասարդների արժեք-միջոցներում: Նշված տարբերությունները երևում են ստորև բերվող աղյուսակում:

Օրինապահ և հանցանք կատարած երիտասարդների արժեք-միջոցները

ԱՐԺԵՔ-ՄԻՋՈՑՆԵՐ			
Օրինապահ երիտասարդներ		Հանցանք կատարած երիտասարդներ	
Արժեք	Գործակից	Արժեք	Գործակից
Կրթվածություն	30.5	Կարգապահություն	30.3
Պատասխանատվություն	27.1	Կրթվածություն	25.9
Ազնվություն	24.3	Պատասխանատվություն	25.3
Կարգապահություն	22.9	Անկախություն	25.1
Անկախություն	19.2	Կյանքի նկատմամբ բարձր պահանջմունքներ	19.9
Ինքնատիրապետում	18.9	Ինքնատիրապետում	18.4
Նրբազգացություն	16.3	Ազնվություն	17.3
Հանդուրժողականություն	15.5	Հանդուրժողականություն	15.9
Կյանքի նկատմամբ բարձր պահանջմունքներ	15.2	Նրբազգացություն	13.2

Օրինապահ երիտասարդների կողմից կրթությանը առաջնային տեղ տալը բնական է, քանզի այն հասարակության զարգացման հիմնական գրավականներից է: Կրթվածությունը դատապարտյալների մեջ զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը: Այստեղ ակնհայտ է, որ նրանք առավել սուր են զգում կրթության պակասը, որը օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով բավարար չափով չեն ստացել: Հանցանք կատարած երիտասարդների կողմից արժեք-միջոցների համակարգում կարգապահությանը առաջնային տեղ հատկացնելն ըստ էության պայմանավորված է նրանց՝ ուղղիչ հիմնարկում գտնվելու հանգամանքով, ուր կարգապահությունը քիչ թե շատ նորմալ կենսապայմաններ ապահովելու միակ հնարավորությունն է: Օրինապահ երիտասարդների արժեք-միջոցների համակարգում առաջնային տեղ է զբաղեցնում պատասխանատվության զգացումը, ինչը դրական երևույթ է: Բարձր պատասխանատվությունը երիտասարդների ապագա հաջող աշխատանքի և առաջխաղացման գրավականն է, ինչն օգտակար է թե՛ անձամբ իրենց և թե՛ ողջ հասարակության համար: Հետաքրքրական է, որ պատասխանատվությունը հանցանք կատարած երիտասարդների շրջա-

նում ևս բարձր տեղ է զբաղեցնում (երրորդ): Սակայն այս դեպքում սա առավել շատ ցանկություն է, քան իրատեսական մոտեցում, քանի որ, մեր կարծիքով, պատասխանատվությանը նման բարձր տեղ հատկացնելով, դատապարտյալները արտահայտում են իրենց ավստանքը, զոջումը, որ ժամանակին չեն դրսևորել բարձր պատասխանատվության զգացում իրենց ընտանիքի, ընկերների կամ ողջ հասարակության նկատմամբ, ինչը հանգեցրել է անբարենպաստ հետևանքների: Ազնվությունը օրինապահ երիտասարդների համար որպես արժեք երրորդն է, իսկ հանցանք կատարած երիտասարդների համար՝ յոթերորդը: Սա վկայում է դատապարտյալների արժեքային համակարգում առկա լրջագույն թերությունների, կենսական տարբեր իրադրություններում խաբեություն, խարդախություն, տարբեր բնույթի անազնիվ և անպարկեշտ արարքներ կատարելու հնարավորության մասին: Անկախությունը դատապարտյալների արժեք-միջոցների համակարգում զբաղեցնում է չորրորդ տեղը, որը խոսում է երիտասարդների դեռևս ոչ բավարար հարմարվածության, ինչպես նաև մտածելակերպում ու գործողություններում այլ անձանցից կախվածության մասին: Օրինապահ երիտասարդների արժեք-միջոցների համակարգում անկախությունը զբաղեցնում է հինգերորդ տեղը, որի պատճառները, մեր կարծիքով, նույնն են, ինչ հանցանք կատարած երիտասարդների պարագայում: Տարօրինակ է, որ կյանքի նկատմամբ բարձր պահանջներ ներկայացնելը օրինապահ երիտասարդների մեջ զբաղեցնում է վերջին հորիզոնականը, իսկ հանցանք կատարած երիտասարդների մեջ՝ հինգերորդը: Կարծում եմ, որ օրինապահ երիտասարդները ոչ թե չունեն կյանքի նկատմամբ բարձր պահանջներ, այլ ստեղծված անբարենպաստ պայմաններում չեն տեսնում այդ պահանջների իրականացման հնարավորությունը, իսկ դատապարտյալների մեջ այս արժեքի համեմատաբար բարձր գործակիցը պայմանավորված է վերջիններիս խեղաթյուրված պահանջունքներով և դրանք ի կատար ածելու համար ցանկացած քայլի (այդ թվում՝ և հանցավոր) դիմելու պատրաստակամությամբ: Ուսումնասիրված երկու խմբերում ինքնատիրապետումը և հանդուրժողականությունը միևնույն մակարդակում են, ինչը, սակայն, առավել քան տարօրինակ է: Հանցանք կատարած երիտասարդների հանդուրժողականության և ինքնատիրապետման մասին խոսելիս որևէ մեկի մտքով անգամ չի կարող անցնել, որ դրանք նույն մակարդակի վրա են, ինչ օրինապահ երիտասարդներինը: Այստեղ, մեր կարծիքով, դատապարտյալները հարցերին անազնիվ են պատասխանել և փորձել են իրենց ներկայացնել առավել շահեկան դիրքերից: Նրբանկատությունը հանցանք կատարած երիտասարդների մեջ վերջին տեղում է, ինչը, կարծում ենք, օրինաչափ է, սակայն տարօրինակ է, որ օրինապահ երիտասարդների շրջանում այն վեցերորդ տեղում է: Այս հանգամանքը անհանգստացնող է, քանի որ մեր ժողովուրդը հնուց ի վեր աչքի է

ընկել իր հոգատարությամբ, նրբազգացությամբ, դիմացինին օգնելու, նրա ցավը հասկանալու կարողությամբ, և այժմ օրըստօրե ներթափանցող օտար մշակույթների ազդեցությամբ ազգային այս կարևորագույն հատկանիշի թուլացումը տազնապ է հարուցում:

Երիտասարդ հանցագործների հոգեբանական առանձնահատկությունների մեջ կարևոր տեղ ունի նրանց հոգեբանական օտարումը: Կարելի է ասել, որ հանցավոր վարքագիծն ունի միասնական և գլխավոր սկզբնաղբյուր, և դա հենց անձի օտարումն է հասարակությունից, որի հիմքերը դրվում են մանուկ հասակում, երբ երեխան զրկված է լինում սիրուց, հոգատարությունից և խնամքից⁶:

Կրիմինալոգիական և հոգեբանական հետազոտությունները ցույց են տվել, որ հանցագործների մեծ մասը կարծես հեռացել, օտարացել է հասարակությունից, սոցիալական տարբեր խմբերից (ընտանիք, ընկերական, աշխատանքային շրջապատ և այլն), կամ էլ էապես թուլացել են այդ խմբերի հետ կապերը: Այս ամենը ձևավորում է հանցավոր վարքագծի ինքնատիպ մոտիվացիա, կենսական տարբեր իրադրություններում կանխորոշված գործունեության ստերեոտիպ⁷: Հանցագործի, հատկապես կրկնահանցագործ անձի հակահասարակական վարքագծի ակունքները պետք է փնտրել նրա կյանքի սկզբնական շրջանում, երբ սկսում է անձի որպես հասարակական էակի ձևավորումը: Դա առաջին հերթին վերաբերում է ընտանիքին, ուր սկսվում է անձի սոցիալականացումը, քանի որ ընտանիքն է անձի առաջնային, սկզբնական միկրոմիջավայր⁸: Պետք է նշել նաև, որ անձի կատարած արարքների բնույթը պայմանավորված է ոչ թե նրա կենսաբանական առանձնահատկություններով, որոշակի միջավայրի կարճաժամկետ կամ տևական ազդեցությամբ, այլ նրա անցած ողջ կենսական ուղիով, ապրելակերպով և գիտակցությամբ⁹: Այս առումով հույժ կարևոր է պարզել այն պատճառներն ու պայմանները, որոնք անձի մեջ առաջ են բերում հոգեբանական օտարում, որն էլ հետագայում ազդում է նրա կենսական ուղու վրա՝ տարբեր իրադրություններում երիտասարդի կողմից հակահասարակական և հակաբարոյական վարքագծի պատճառ դառնալով: Որպես կանոն՝ անձի հոգեբանական օտարումը սկիզբ է առնում մանուկ հասակից, երբ ծնողները (հատկապես մայրը) երեխայի հետ հուզական շփումներ չեն հաստատում, վանում են նրան, որի հետևանքով երեխայի մեջ ձևավորվում են անպաշտպանվածության և տազնապայսության զգացումներ, ինչը հետագայում կարող է վերած-

⁶ Տե՛ս **Антонян Ю. М., Еникеев М. И., Эминов В. Е.** Психология преступника и расследования преступлений. М., 1996, էջ 19:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 61:

⁸ Տե՛ս **Карпец И. И.** Наказание: Социальные, правовые и криминологические проблемы. М., 1973, էջ 243-244:

⁹ Տե՛ս **Кудрявцев В. Н.** Причинность в криминологии. М., 1968, էջ 22-23:

վել անձնային առանձնահատկության¹⁰: Էմպիրիկ հետազոտությունները ցույց են տվել, որ տագնապայնությունը, շրջապատի թշնամանքի զգացումը ընկած են բազմաթիվ բռնի և խուլիզանական արարքների հիմքում, որոնք գենետիկորեն կապված են անձի հոգեբանական օտարման հետ: Այս հանգամանքով է բացատրվում այն փաստը, որ բռնի և շահադիտական հանցագործություններից շատերը կատարվում են այդքան հեշտ և տուժողների նկատմամբ անտարբերությամբ: Սա պայմանավորված է նման հանցագործների հոգեբանական օտարմամբ, քանի որ վերջիններս չեն կարողանում իրենց պատկերացնել տուժողի դերում, չեն ապրումակցում վերջիններիս և նրանց համար միևնույնն է, թե ինչպիսի հույզեր են ունենում հանցանքներից տուժած անձինք: Սա խիստ բնորոշ է հասարակությունից օտարված անձանց, քանի որ վերջիններս, որպես կանոն, չեն ունեցել էմոցիոնալ կապեր սովյալ հասարակության անդամների հետ:

Հոգեբանական օտարումը կարող է հանգեցնել երիտասարդի աուտիզացիայի, որին ընդհանուր առմամբ հատուկ է արտաքին աշխարհից մեկուսացումը: Նա ընկղմվում է իր ներաշխարհի մեջ՝ նրա համար ուղեցույց են ծառայում միայն իր անձնական չափանիշները, շատ հաճախ կորում է ուրիշներին հասկանալու, նրանց զգացումներն ու հույզերն ընկալելու հատկությունը: Նման երիտասարդների վարքագիծը հիմնականում էքսցենտրիկ է՝ պարտրված անբնական հուզականությամբ, և եթե արտաքին աշխարհի որևէ գրգիռ այնուամենայնիվ ազդում է նրանց վրա, ապա ակնհայտ են դառնում նրանց խիստ զգայունությունն ու խոցելիությունը¹¹:

Կարևոր է տարբերակել երիտասարդի հոգեբանական օտարումը նրա սոցիալական օտարումից, որը մեծ մասամբ կախված է այն բանից, թե ինչ գործոններ են ծնել այս երևույթը՝ երիտասարդի անձնային առանձնահատկությունները, թե՞ նրա միջավայրը: Կարելի է ասել, որ հոգեբանական օտարումը ցույց է տալիս երիտասարդի դիրքորոշումը այլ անձանց նկատմամբ, որը պայմանավորված է նրա անձնային առանձնահատկություններով (հաճախ աուտիզացիայով): Սոցիալական օտարումը առաջանում է հիմնականում արտաքին ազդեցությունների պատճառով, որը բացատրվում է շրջապատի անբարյացակամ վերաբերմունքով: Սոցիալական օտարման առանձնահատկությունն այն է, որ երիտասարդը ձգտում է հասարակության, շրջապատի հետ հաղորդակցման, սակայն հասարակությունը վանում է նրան, անտարբեր, արհամարհական վերաբերմունք է ցուցաբերում նրա նկատմամբ: Այս հանգամանքը նրա համար կարող է ունենալ աղետալի հետևանքներ,

¹⁰ См. у Антопян Ю. М. Психологическое отчуждение личности и преступное поведение. Ер., 1987, էջ 6:

¹¹ См. у Березин Ф. Б., Мирошников М. П., Рожанец Р. В. Методика многостороннего исследования личности. М., 1946, էջ 93-95:

քանի որ, թշնամաբար տրամադրվելով հասարակության նկատմամբ, նա հեշտությամբ և առանց խղճի խայթի կարող է հանցանք կատարել:

Այսպիսով, հոգեբանական օտարումը անձի կողմից սոցիալական միջավայրի նկատմամբ բացասական սուբյեկտիվ մոտեցում է, իսկ սոցիալական օտարումը միջավայրի ու հասարակության կողմից անձի մերժումն է¹²:

Պետք է նշենք, որ ինչքան էլ բարձր լինի անձի հոգեբանական օտարման դերը հանցագործության կատարման մեխանիզմում, այնուամենայնիվ այն որոշիչ չէ, որովհետև բարենպաստ իրադրության ազդեցությունը կարող է չեզոքացնել օտարման բացասական կողմնորոշումները:

Հանցանք կատարելու բուն պատճառ են երիտասարդի օտարման հետևանքով առաջացող հոգեբանական այնպիսի երևույթներ, ինչպիսիք են տազնապայնությունը, վախը, ագրեսիան, դաժանությունը և այլն: Սա է, որ անհրաժեշտություն է առաջացնում ավելի մանրամասն անդրադառնալու այս բացասական հույզերի ծագման պատճառներին և պայմաններին, դրանց բովանդակությանը:

Հոգեբանական բառարանում տրված է տազնապայնության հետևյալ բնորոշումը. «Տազնապայնությունը անհատական հոգեբանական առանձնահատկություն է, որն արտահայտվում է անձի կողմից կենսական տարբեր իրադրություններում անհանգստություն զգալով, ընդ որում շատ հաճախ այդ պայմաններում անհանգստություն զգալու որևէ իրական առիթ չի լինում»¹³: Անհրաժեշտ է տարբերակել տազնապայն տազնապայնությունից: Տազնապայն անցողիկ, ժամանակավոր անհանգստության զգացում է, իսկ տազնապայնությունը կայուն վիճակ է: Տազնապայնությունը կապված չէ որևէ կոնկրետ իրավիճակի հետ և միշտ արտահայտվում է տվյալ անձի վարքագծում: Երբ անձը վախենում կամ անհանգստանում է ինչ-որ կոնկրետ բանից, ապա այստեղ արդեն գործ ունենք սարսափի հետ¹⁴: Մարսափի և տազնապայն փոխհարաբերության մասին խոսելիս պետք է նշել, որ տազնապայն բազմաթիվ հույզերի ամբողջություն է, սարսափը՝ դրանցից մեկը¹⁵:

Ժամանակակից հոգեբանության մեջ տազնապայն դիտվում է որպես այնպիսի հուզական բարդույթ, որի մեջ մտնում են վիշտը, գայրույթը, վախը (սարսափը), ամոթը, մեղավորության զգացումը, իսկ երբեմն էլ հետաքրքրությունը: Տազնապայն տարբեր դրսևորումների մեջ կարող են ներառվել այնպիսի զգացումներ, ինչպիսիք են թշնամանքը, տառապանքը, ընդհանուր գրգռվածությունը, ինչպես նաև՝ որոշակի մտքեր և մտապատկերներ¹⁶:

¹² Տե՛ս **Антонян Ю. М.** նշվ. աշխ., էջ 25:

¹³ «Психологический словарь». М., 1997, с. 386.

¹⁴ Տե՛ս **Лютова Е. К.** Шпаргалка для взрослых. Психокоррекционная работа с гиперактивными, агрессивными, тревожными и аутичными детьми. М., 2001, էջ 208:

¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 209:

¹⁶ Տե՛ս **Ա. Նալչաջյան**, Հոգեբանության հիմունքներ, Եր., 1997, էջ 457:

Այսպիսով, տազնապայնությունը, տազնապը, վախը հոգեբանական երևույթներ են, որոնք ահռելի ազդեցություն ունեն երիտասարդների վարքագծի և կենսաձևի վրա, և այս հույզերի ուսումնասիրությունը անշուշտ կարող է բացահայտել վերջիններիս հանցավոր վարքագծի պատճառները: Կարելի է ասել, որ անցանկալի, ցավագին զգացումների ամենատարածված ձևը տազնապն է, որը կարելի է բնութագրել որպես ներքին լարվածության և դժգոհության միասնություն: Ոչ մի զգացում չի ազդում անձի հոգևոր և ֆիզիակական վիճակի վրա այնպես, ինչպես տազնապը:

Պետք է նշել, որ տազնապայնությունը՝ որպես հանցանք կատարած երիտասարդի անձնային առանձնահատկություն, հանցանքի կատարումից հետո չի չեզոքանում և անգամ չի թուլանում: Կարելի է եզրակացնել, որ տազնապայնությունը կարող է ակտիվորեն նպաստել երիտասարդների հանցավոր վարքագծին, բայց դա հնարավոր է միայն այն դեպքերում, երբ վերջինս պաշտպանության կարիք է զգում այն մարդկանցից և երևույթներից, որոնցից նա վտանգ կամ թշնամանք է ակնկալում: Եթե երիտասարդին հաջողվում է գտնել տազնապայնության աղբյուրը, ապա նրա մեջ ծագում է մեկ այլ զգացում, որը ևս անմիջականորեն կապված է տազնապի հետ: Դա վախն է: Վախի զգացումը իր բնույթով շատ ուժգին է և այս հոգեվիճակում գտնվող անձը ոչ թե ձգտում է հանգստանալ և դուրս գալ այդ իրավիճակից, այլ ամեն կերպ փորձում է գտնել վախի, տազնապի աղբյուրը և անպայման չեզոքացնել կամ վերացնել այն, իսկ եթե դա իր ուժերից վեր է, ապա դիմել փախուստի: Ակնհայտ է, որ նման վիճակում գտնվող անձի համար հասարակական արժեքների նշանակությունը կորչում կամ թուլանում է և համակցվելով այլ բացասական գործոնների հետ՝ կարող է դրդել երիտասարդին հանցանք կատարելու:

Փաստորեն, բարձր տազնապայնությունը շատ հաճախ հանցավոր վարքագծի սուբյեկտիվ պատճառ է դառնում: Կարևորելով տազնապայնության դերը երիտասարդների հանցավոր վարքագծի մեխանիզմում՝ մենք Չ. Դ. Սպիրերգի մեթոդով անց ենք կացրել հետազոտություն օրինապահ և հանցանք կատարած երիտասարդների շրջանում, որի նպատակը վերջիններիս մեջ առկա տազնապայնության աստիճանի բացահայտումն է:

Աղյուսակ 3

Օրինապահ և հանցանք կատարած երիտասարդների տազնապայնության աստիճանը

Տազնապայնության աստիճան	Օրինապահ երիտասարդներ	Հանցանք կատարած երիտասարդներ
Բարձր	10 %	29 %
Միջին	61 %	63 %
Ցածր	29 %	8 %

Ինչպես տեսնում ենք, հանցանք կատարած երիտասարդների շրջանում տազնապայնության բարձր մակարդակը մոտ երեք անգամ գերազանցում է օրինապահ երիտասարդների տազնապայնության բարձր մակարդակին: Հանցանք կատարած երիտասարդների տազնապայնության աստիճանի ուսումնասիրությունը ըստ հանցակազմերի ցույց է տալիս, որ բարձր տազնապայնությամբ օժտված երիտասարդների 19 %-ը կատարել է այնպիսի հանցագործություններ, որոնք ուղղված են եղել զինվորական ծառայությունից այս կամ այն կերպ խուսափելուն (ժամկետային զինվորական ծառայությունից, վարժական հավաքներից կամ գորահավաքներից խուսափելը, դասալքությունը, անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը և այլն), 43 %-ը կատարել է շահադիտական և շահադիտական-բռնի հանցագործություններ (գողություն, կողոպուտ, խարդախություն, ավազակություն, շորթում և այլն), իսկ 25 %-ը՝ բռնի հանցագործություններ (ծանրացուցիչ հանգամանքներում սպանություններ, հասարակ սպանություն, առողջությանը տարբեր աստիճանի վնասի պատճառում և այլն): Իմ կողմից ուսումնասիրված բարձր տազնապայնությամբ օժտված հանցանք կատարած երիտասարդների մնացած մասը կատարել է բռնի-սեռական (6 %) և մի շարք այլ հանցագործություններ՝ կապված զենքի, թմրամիջոցների, թանկարժեք իրերի ապօրինի շրջանառության հետ: Տազնապայնության միջին մակարդակով օժտված հանցանք կատարած երիտասարդների 34 %-ը կատարել է շահադիտական հանցագործություններ, 25 %-ը՝ բռնի հանցագործություններ, 10 %-ը՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ, 8 %-ը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններ, մնացածը՝ այլ հանցագործություններ: Ցածր տազնապայնությամբ օժտված հանցանք կատարած երիտասարդների մոտ 60 %-ը կատարել է շահադիտական հանցագործություններ, 21 %-ը՝ բռնի հանցագործություններ, 8 %-ը՝ անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ, իսկ մնացածը կատարել են թմրամիջոցների, զենքի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններ: Հետաքրքրական են զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների նման բարձր ցուցանիշները, որոնք վկայում են, որ այս հանցագործությունների լատենտայնությունն ունի նվազման կայուն միտում, և սա մեր բանակի առջև դրված խնդիրների հաջող լուծման ամենակարևոր երաշխիքներից է:

Քանի որ բռնի հանցագործությունների մեծ մասը կատարվում է երի-

տասարդների կողմից, ապա կարևոր և արդիական է դառնում երիտասարդ հանցագործների հոգեբանական կառուցվածքում ագրեսիայի և դաժանության ծագման պատճառների ու պայմանների ուսումնասիրությունը:

Ագրեսիան և դաժանությունը ըստ էության ուժի ցուցադրում են, դրա գործադրման սպառնալիք: Ե՛վ ագրեսիան, և՛ դաժանությունը կարող են լինել ինչպես անհատական, այնպես էլ խմբային, և դրանք միշտ նպատակային են և կատարվում են որևէ ցանկալի արդյունքի հասնելու համար: Այսպես, ուրիշի նկատմամբ բռնություն, դաժանություն ցուցաբերելով՝ երիտասարդը կարող է հասնել իր համար ցանկալի որոշակի հոգեվիճակի, որը ոչ միշտ է գիտակցվում նրա կողմից:

Կարևորելով ագրեսիվության դերը երիտասարդների հանցավոր վարքագծի մեխանիզմում՝ մենք Բասս-Դարկիի մեթոդով անցկացրել ենք օրինապահ և հանցանք կատարած երիտասարդների ագրեսիվության և թշնամության մակարդակների ուսումնասիրություն, ինչը կարևոր է վերջիններիս վարքագծի առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից: Նշված մեթոդով ուսումնասիրությունը մեզ թույլ է տվել առանձնացնելու օրինապահ և հանցանք կատարած երիտասարդների ագրեսիվության ռեակցիաների հետևյալ տեսակները.

1. ֆիզիկական ագրեսիա (ֆիզիկական ուժի գործադրումը այլ անձի նկատմամբ),

2. անուղղակի ագրեսիա (բամբասանք, չար կատակներ՝ ուղղված այլ անձի դեմ, կամ ընդհանրապես որպես բնավորություն),

3. գրգռվողականություն (չնչին գրգռման դեպքում բացասական հույզերի դրսևորման պատրաստակամություն),

4. նեգատիվիզմ (սահմանված օրենքների և սովորույթների նկատմամբ հակադրման, մերժման միտում),

5. վիրավորվածություն (նախանձ և ատելություն շրջապատի հանդեպ),

6. կասկածամտություն (այլ անձանց հանդեպ զգուշավորություն և անվստահություն),

7. վերբալ ագրեսիա (բացասական հույզերի արտահայտումը շարժումներով կամ խոսքով),

8. մեղքի զգացում (անձի համոզմունքը, որ ինքը վատն է, խղճի խայթ զգալը):

Ըստ ագրեսիայի նշված ռեակցիաների՝ օրինապահ և հանցանք կատարած երիտասարդների շրջանում կատարված հետազոտությունը տվեց հետևյալ արդյունքները:

Աղյուսակ 4

Օրինապահ և հանցանք կատարած երիտասարդների ագրեսիվության աստիճանը

Ագրեսիայի տեսակները	Օրինապահ երիտասարդներ		Հանցանք կատարած երիտասարդներ	
	բարձր	նորմալ	բարձր	նորմալ
ֆիզիկական ագրեսիա	58.3 %	41.7 %	63.8 %	36.2 %
անուղղակի ագրեսիա	24.7 %	75.3 %	42.6 %	57.4 %
գրգռվածություն	66.7 %	33.3 %	76 %	24 %
նեգատիվիզմ	74.7 %	25.3 %	83.8 %	16.2 %
վիրավորվածություն	32.9 %	67.1 %	69.6 %	30.4 %
կասկածամտություն	63.5 %	36.5 %	74.3 %	25.7 %
վերբալ ագրեսիա	79 %	21 %	85.3 %	14.7 %
մեղքի զգացում	74.4 %	25.6 %	88.4 %	11.6 %

Աղյուսակից ակնհայտ երևում է, որ հանցանք կատարած երիտասարդների ագրեսիվությունը քննարկվող բոլոր ռեակցիաների առումով գերազանցում է օրինապահ երիտասարդների ագրեսիվությունը, ինչը, մեր կարծիքով, այդ անձանց կողմից հանցագործություններ (հատկապես բռնի) կատարելու կայուն նախահիմք է: Ուստի խիստ կարևոր է ուղղիչ հիմնարկների, իրավապահ մարմինների կողմից այնպիսի դաստիարակչական միջոցառումների իրականացումը, որոնք կնպաստեն հանցանք կատարած երիտասարդների մեջ ագրեսիվության մակարդակի նվազեցմանը, ինչը կանխարգելի այս երիտասարդների կողմից հետագա հանցավոր գործունեությունը:

Օրինապահ երիտասարդների և հանցանք կատարած երիտասարդների ագրեսիվության և թշնամության մակարդակները համադրելիս ստացանք հետևյալ պատկերը:

Աղյուսակ 5

Օրինապահ և հանցանք կատարած երիտասարդների ագրեսիվության և թշնամության մակարդակները

	ագրեսիվություն			թշնամություն		
	բարձր	միջին	ցածր	բարձր	միջին	ցածր
օրինապահ երիտասարդներ	13.8 %	49.4 %	36.8 %	57.5 %	42.5 %	-
հանցանք կատարած երիտասարդներ	26.2 %	48.5 %	25.3 %	65.1 %	34.9 %	-

Ներկայացված աղյուսակից պարզորոշ երևում է, որ հանցանք կատարած երիտասարդների ազդեցիվության բարձր մակարդակը գրեթե երկու անգամ գերազանցում է օրինապահ երիտասարդների համանուն ցուցանիշը: Թշնամության բարձր մակարդակը ևս գերազանցում է, ինչը վկայում է այն էական հոգեբանական տարբերությունների մասին, որոնք առկա են օրինապահ և հանցանք կատարած երիտասարդների միջև:

Այսպիսով, կատարված հետազոտությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ երիտասարդ հանցագործների մեջ առկա են հոգեբանական մի շարք բացասական գործոններ, որոնք էական դեր են կատարում երիտասարդի կողմից հանցավոր արարք կատարելու պատճառական մեխանիզմում: Նշված գործոնները պայմանավորված են երիտասարդի սոցիալականացման և դաստիարակության մեջ տեղ գտած բացթողումներով ու բացասական երևույթներով: Ուստի երիտասարդների հանցավորության կանխման առումով անչափ կարևոր են նշված գործոնների չեզոքացմանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրականացումը:

Բանալի բառեր – *երիտասարդ հանցագործ, հոգեբանական առանձնահատկություններ, օտարվածություն, ազդեցիկ, տազնապայտություն, ժխտողականություն, համեմատական վերլուծություն, բացասական գործոններ*

ТИГРАН СИМОНЯН – Психологические особенности молодого преступника. – Психология молодого правонарушителя – ключ к выявлению и пониманию негативных факторов, толкающих молодого человека к совершению преступления. Есть основания полагать, что именно в психологических особенностях заключается едва ли не главная причина молодёжной преступности. В статье рассмотрены такие присущие молодым преступникам черты, как отчуждение, тревожность, агрессивность и жестокость. Проведён сравнительный анализ психологических особенностей, свойственных, с одной стороны, законопослушной молодёжи, а с другой – молодым преступникам. Это сопоставление обнаружило существенную разницу в психологии двух этих групп.

Ключевые слова: *молодой преступник, психологические особенности, отчуждение, агрессивность, жестокость, тревожность, сравнительный анализ, негативные факторы*

TIGRAN SIMONYAN – Psychological Features of Young Crime Perpetrators. – Psychological features of young crime perpetrators are the key to reveal and comprehend the negative factors which instigate a young person to commit a crime. One may admit that these features are the main factors that determine the trends of youth criminality. The following psychological features of young crime perpetrators are analyzed in the article: estrangement, aggressiveness, cruelty, anxiety, etc. Comparative analysis of the psychological features of law-abiding young people and young crime perpetrators shows a significant difference between these two groups.

Key words: *young crime perpetrator, psychological features, estrangement, aggressiveness, cruelty, anxiety, negativism, comparative analysis, negative factors*

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՊԱՏԺԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության ու պատժի արդյունավետության հարցերը մշտապես գտնվել են ինչպես իրավաբան-գիտնականների, այնպես էլ իրավակիրառ գործունեություն իրականացնող մասնագետների ուշադրության կենտրոնում: Այս առումով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում անչափահասների կատարած հանցագործություններին պետության արձագանքի և դրանց համար կիրառվող պատիժների հիմնախնդիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 24-ի 1-ին մասի ձևակերպումից հետևում է, որ անչափահաս է համարվում տասնութ տարին չլրացած անձը, իսկ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի հոդված 1-ը սահմանում է. «... երեխա է համարվում տասնութ տարին չլրացած յուրաքանչյուր անձ, ...»: Ենթադրվում է, որ անչափահասների կողմից կատարված հանցագործություններին արձագանքելիս պետությունը պետք է առավել մեղմ մոտեցում դրսևորի՝ հաշվի առնելով երեխայի հոգեբանական առանձնահատկությունները: Մասնավորապես, բազմաթիվ հոգեբանական հետազոտություններ¹ վկայում են, որ, ի տարբերություն չափահասների, հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների կողմից իրենց վարքագծի հետևանքները լիարժեքորեն ընկալելու, արտաքին ազդեցությանը դիմագրավելու, ինչպես նաև ինքնուրույն որոշում կայացնելու ունակությունները սահմանափակ են: Բացի դրանից, անչափահասներն առավել զգայուն են կիրառվող պատժատեսակների բովանդակությունը կազմող սահմանափակումների ու զրկանքների նկատմամբ:

¹ St' u Steinberg, Laurence; Scott, Elizabeth. Less Guilty by Reason of Adolescence: Developmental Immaturity, Diminished Responsibility, and the Juvenile Death Penalty. American Psychologist, Vol 58(12), Dec 2003, էջ 1009-1018, Andrew Von Hirsch. Proportionate Sentences for Juveniles. How Different than for Adults? Punishment & Society April 2001 vol. 3 no. 2, էջ 221-236, Zimring, Franklin; E. Grisso, Thomas, Schwartz, Robert. Penal proportionality for the young offender: Notes on immaturity, capacity, and diminished responsibility. Youth on trial: A developmental perspective on juvenile justice., Chicago, IL, US: University of Chicago Press, vi, 2000, էջ 271-289, Praveen, Kambam and Christopher, Thompson. The development of decision-making capacities in children and adolescents: Psychological and neurological perspectives and their implications for juvenile defendants. Behavioral Sciences & the Law, Special Issue: The Neuroscience and Psychology of Moral Decision Making and the Law Volume 27, Issue 2, March/April 2009, էջ 173-190:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 86-ը սահմանում է այն պատժատեսակները, որոնք կարող են նշանակվել անչափահասների նկատմամբ. 1) տուգանք, 2) հանրային աշխատանքներ, 3) կալանք, 4) որոշակի ժամկետով ազատազրկում:

Հարց է առաջանում. արդյո՞ք պատժի ներկայացված համակարգը ի գործ է ապահովելու հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների քրեական պատասխանատվության անխուսափելիությունն ու պատժի նպատակների իրականացումը, այն է՝ վերականգնելու սոցիալական արդարությունը, ուղղելու հանցանք կատարած անձին և կանխելու նոր հանցագործությունների կատարումը:

Առաջադրված հարցի պատասխանը ստանալու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ինչպես նշված պատժատեսակների օրենսդրական կանոնակարգմանը, այնպես էլ դրանց կիրառման պրակտիկային:

Մասնավորապես, ՀՀ ոստիկանության և դատական դեպարտամենտի հրապարակած վիճակագրական տվյալների համաձայն՝ 2013 թ. հանցավոր վարքագիծ է դրսևորել 352 անչափահաս, դատապարտվել է 83-ը: Ընդ որում, դատապարտվածներից 12-ը եղել են 14-15, 71-ը՝ 16-17 տարիքային խմբի ներկայացուցիչներ: Նրանցից ազատազրկման է դատապարտվել 83.1 %-ը (69 անձ) որոնցից 63.8 %-ի (44 անձ) նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել²:

2014 թ. հանցավոր վարքագիծ է դրսևորել 335 անչափահաս, դատապարտվել է 87-ը: Դատապարտվածներից 20-ը եղել են 14-15, 67-ը՝ 16-17 տարիքային խմբի ներկայացուցիչներ: Ազատազրկման է դատապարտվել անչափահասների 71.3 %-ը (62 անձ), որոնցից 59.7 %-ի (37 անձ) նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել³:

Ներկայացված վիճակագրական տվյալներն արդեն իսկ փաստում են, որ անչափահաս դատապարտյալների նկատմամբ առավել հաճախ կիրառվող պատժատեսակն ազատազրկումն է, սակայն, գիտակցելով ընտանիքից, հասարակությունից մեկուսացման բացասական հետևանքները անչափահասի համար⁴, դատարանները մեծ մասամբ որոշել են պատիժը պայմանականորեն չկիրառել:

Այն, որ ազատությունից զրկելը բացասաբար է անդրադառնում անձի, հատկապես անչափահասի զարգացման, սոցիալականացման գործընթացի վրա, հաճախ էլ՝ նրա կողմից հետագա հանցավոր վարքագծի դրսևորման նախապայման դառնում, նշվել է բազմաթիվ հետա-

² Տե՛ս 2013 թ. Հաշվետվություն անչափահաս դատապարտյալների վերաբերյալ http://www.court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=3

³ Տե՛ս 2014 թ. Հաշվետվություն անչափահաս դատապարտյալների վերաբերյալ http://www.court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=1

⁴ Տե՛ս **Чеснокова Е. А.** Актуальные проблемы применения штрафа в отношении несовершеннолетних, осужденных за имущественные преступления. Юридическая наука и практика // "Вестник Нижегородской академии МВД России", 2009, № 2 (11), էջ 179:

գոտողների կողմից⁵: Պատահական չէ, որ ներկայումս պետությունների մեծ մասում, այդ թվում՝ ՀՀ-ում, քրեական քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը հանցագործությունների արձագանքելիս ազատագրվածներն այլընտրանք համարվող միջոցների ներդրումն ու կիրառումն է⁶: Հետևաբար անհրաժեշտ է հասկանալ, թե ՀՀ-ում ինչն է հանգեցնում անչափահասների նկատմամբ **ազատագրվում** պատժատեսակի նման լայն կիրառությանը, ինչու են քիչ կիրառվում **տուգանք, հանրային աշխատանքներ** և **կալանք** պատժատեսակները:

Թերևս հարցի պատասխանը առաջին հերթին պետք է փնտրել անչափահասների հանդեպ կիրառվող պատժատեսակների օրենսդրական կարգավորման մակարդակում:

ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ անչափահասների հանդեպ կիրառվող տուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքների համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում՝ պատիժ նշանակելու պահին ՀՀ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից հինգհարյուրապատիկի չափով: Տուգանքը կիրառվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում: Եթե դատապարտվողն ի վիճակի չէ անհապաղ և ամբողջությամբ վճարելու նշանակված տուգանքը, ապա դատարանը նրա համար վճարման ժամկետ է սահմանում առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում: Այդ դեպքում սահմանվում է տուգանքի վճարման ժամանակացույց, և որոշվում է յուրաքանչյուր անգամ վճարման ենթակա գումարի չափը: Նշված արտոնությունը դատարանի որոշմամբ ուժը կորցնում է, եթե դատապարտյալը խախտում է տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը:

Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 51-ի յորրորդ մասը սահմանում է, որ տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց: Այնուհանդերձ, գործ-

⁵ St' u **Аденес И.** Наказание и предупреждение преступлений. М., 1979, էջ 255, **Михайловская И. Б., Кузьминский Ю. Ф., Мазаев Ю. Н.** Преступность: что мы знаем о ней. М., 1994, **Корецкий Д. А., Тулегенов В. В.** Криминальная субкультура и ее криминологическое значение. СПб., 2006, էջ 138, **Clear T., Rose D., Ryder J.** Incarceration and the community: The problem of removing and returning offenders. Crime & Delinquency, 2001:

⁶ St' u ՀՀ կառավարության 2012 թ. դեկտեմբերի 27-ի № 1694-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը, երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի № 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

նականում այս դրույթը չի կարող կիրառվել, քանի որ 2013 թ. ապրիլի 23-ի ՀՀ ՄԴՌ-1082 որոշմամբ, այս դրույթը ճանաչվել է անվավեր, քանի որ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելիս օրենսդիրը «...տարբերակված մոտեցում չի դրսևորում տուգանքը վճարելու անհնարինության և դրանից խուսափելու հանգամանքների միջև...»:

Տուգանքի ձևակերպումից հետևում է, որ օրենսդրական կանոնակարգման մակարդակում թերևս մեկ հարցի կարգավորում բաց է մնում. ինչպե՞ս վարվել այն անձի հետ, ով խուսափում է տուգանքը վճարելուց: Բնական է, որ այս հարցը հիմնականում ծագում է այն դեպքում, երբ դատարանը անչափահասի նկատմամբ տուգանք է նշանակել նրա ինքնուրույն վաստակի (եկամտի) առկայության պարագայում: Իրավակիրառ պրակտիկայում նման դեպքերի արձանագրումը և դրանց հետևող համարժեք արձագանքի բացակայությունը դատարաններին արդարացիորեն հիմք են տալիս կարծելու, որ տուգանքի նշանակման պարագայում հանցանք կատարած անձը գործնականում մնալու է անպատիժ, և պատժի նպատակները չեն ապահովվելու:

Այնուհանդերձ կարծում ենք, անչափահասների նկատմամբ տուգանքի կիրառման դեպքերի սակավությունը ունի նաև մեկ այլ օբյեկտիվ հիմք. ՀՀ-ում 14-18 տարեկան անչափահասները, որպես կանոն, չունեն ո՛չ ինքնուրույն վաստակ, ո՛չ էլ գույք, որի վրա կարող է բռնագանձում տարածվել, ինչն էլ դատարանին հնարավորություն չի ընձեռում կիրառել տուգանք պատժատեսակը: Ավելին, կարծում ենք, պատժի նպատակների ապահովման տեսանկյունից ճիշտ կլինեք օրենսդրորեն սահմանել, որ տուգանք կարող է նշանակվել անչափահասի ինքնուրույն վաստակի (եկամտի) կամ սեփական վաստակով ձեռք բերված այն գույքի վրա, որի վրա բռնագանձում կարող է տարածվել:

Անչափահասի նկատմամբ կիրառման ենթակա հաջորդ պատժատեսակը հանրային աշխատանքներն են, որոնք այլընտրանք են ազատագրկմանը: ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 54-ի համաձայն՝ հանրային աշխատանքները դատարանի կողմից նշանակված, իրավասու մարմնի կողմից որոշված վայրում չվարձատրվող, դատապարտյալի կողմից հանրության համար օգտակար աշխատանքների կատարումն է: Դրանք կարող են նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատագրկման դատապարտված անձանց նկատմամբ՝ երկու հարյուր յոթանասունից երկու հազար երկու հարյուր ժամ ժամկետով: Հանրային աշխատանքները նշանակվում են որպես որոշակի ժամկետով ազատագրկմանն այլընտրանքային պատժատեսակ՝ դատապարտյալի գրավոր դիմում ներկայացնելու դեպքում: Հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկատարած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատագրկմամբ՝ կալանքի կամ

որոշակի ժամկետով ազատագրկման մեկ օրը հաշվարկելով հանրային աշխատանքների երեք ժամվա դիմաց:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 54-ի 4-րդ մասում ներկայացված են այն անձինք, ում նկատմամբ հանրային աշխատանքներ նշանակվել չեն կարող. մասնավորապես սահմանվում է. «Հանրային աշխատանքները չեն նշանակվում առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, դատավճիռ կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած, կենսաթոշակային տարիք ունեցող անձանց, հղի կանանց և ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների նկատմամբ»:

Ներկայացված ձևակերպումից հետևում է, որ հանրային աշխատանքներ կարող են կիրառվել ոչ բոլոր անչափահասների նկատմամբ, այլ միայն նրանց, ում տասնվեց տարին լրացել է դատավճիռ կայացնելու պահին: Նաև պարտադիր պահանջ է այն, որ անչափահասը գրավոր դիմում ներկայացնի իր նկատմամբ ազատագրկման փոխարեն հանրային աշխատանքներ կիրառելու մասին: Վերջին ձևակերպումը ինդրահարույց է այն առումով, որ անչափահասները գործնականում նախընտրում են նման դիմում չներկայացնել՝ քաջ զիտակցելով, որ իրենց կատարած ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի պարագայում դատարանը նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառելու, իսկ այդ ինստիտուտով նախատեսված սահմանափակումների շրջանակը անհամեմատ զիջում է հանրային աշխատանքների կիրառմամբ իր վրա դրվող սահմանափակումներին:

Հատկանշական է նաև, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքը հանրային աշխատանքների տևողության առումով տարբերակում չի դրել չափահասների և անչափահասների միջև. երկուսի պարագայում էլ նախատեսվում է նույն ժամաքանակը՝ երկու հարյուր յոթանասունից երկու հազար երկու հարյուր ժամ: Նախ հանրային աշխատանքների նման տևողությունը արդարացված չէ: Այդ առումով ավելի առաջադիմական մոտեցում է ամրագրվել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում, որտեղ սահմանվում է 60-ից 270 ժամ տևողությամբ հանրային աշխատանք: Սակայն ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում այս տևողությունը նախատեսված է թե՛ չափահաս, թե՛ անչափահաս դատապարտյալների համար: Թերևս ճիշտ կլիներ վերանայել այս մոտեցումը և օրենսդրորեն ավելի կարճ ժամանակահատված նախատեսել անչափահասների համար դրանց տևողությունը կրճատելով կիսով չափ:

Միաժամանակ, որպես ուղեցույց ընդունելով «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989 թ. և «Նվազագույն տարիքի մասին» 1973 թ.-ի կոնվենցիաները անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել, որ դատապարտյալ անչափահասի նկատմամբ նշանակվող հանրային աշխատանքները դրսևորվում են հանրության համար օգտակար այնպիսի աշխատանքների կատարմամբ, որոնք չեն կարող բացասաբար ազդել նրա ֆիզիկական, հոգեկան վիճակի, զարգացման կամ սոցիալականացման վրա:

Անչափահասների նկատմամբ կիրառվող մյուս պատժատեսակները կապված են ազատությունից զրկելու հետ: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 88-ը սահմանում է, որ կալանքը տասնհինգ օրից երկու ամիս ժամկետով նշանակվում է դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին լրացած անչափահասի նկատմամբ: Կալանքը դրսևորվում է ուղղիչ հիմնարկում անազատության մեջ դատապարտյալին պահելու ձևով՝ հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում: Այն կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում:

Անչափահասների նկատմամբ կալանք պատժատեսակի կիրառման նպատակահարմարությունը իրավաբանական գրականության մեջ վիճաբանությունների տեղիք է տալիս: Օրինակ՝ Մ. Դ. Շարգորդսկու կարծիքով, կալանքն արդյունավետ չէ, քանի որ հնարավոր չէ անձին ուղղել նման կարճ ժամանակահատվածում⁷: Վ. Մ. Ստեպաշինի կարծիքով ևս կալանքի նախատեսումը նպատակահարմար չէ, քանի որ այն գործառույթները, որոնք պետք է ապահովվեն կալանք պատժատեսակի իրագործման պարագայում, հնարավոր է ավելի քիչ ծախսերով ապահովել որոշակի ժամկետով ազատագրվում պատժատեսակի կիրառմամբ⁸:

Մինչդեռ հետազոտողներից շատերը⁹ գտնում են, որ կալանքն արդյունավետ պատժատեսակ է, որն ունի շոկային ազդեցություն, քանի որ թեև այն նման է ազատագրվում պատժատեսակին, սակայն դրա դեպքում նախատեսված են դատապարտյալին պահելու ավելի խիստ պահանջներ, մեկուսացման ավելի բարձր աստիճան:

Այլ խնդիր է, որ ՀՀ գործող քրեակատարողական օրենսդրության կանոնակարգման պարագայում անչափահասների նկատմամբ կալանք պատժատեսակի կիրառումը հակասում է միջազգային մի շարք իրավական ակտերի պահանջներին: Բանն այն է, որ ՀՀ գործող քրեակատարողական օրենսգրքը չի նախատեսում կրթության ապահովումը կալանքի դատապարտված անչափահասների համար, մինչդեռ «Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» հոդված 77-ը սահմանում է, որ դատապարտյալների համար պետք է ապահովվի կրթություն ստանալու հնարավորությունը: Դատապարտյալների, հատկապես երիտասարդ դատապարտյալների կրթության հնարավորության երաշխավորման պահանջը սահմանված է նաև Եվրոպական քրեակատարողական (պենիտենցիար) կանոնների հոդված 71.5-ում¹⁰:

⁷ Տե՛ս «Курс советского уголовного права»: в 5 т., Т. 2. Часть Общая, Л., 1970, էջ 271–272:

⁸ Տե՛ս **Степашин В. М.** Арест как вид уголовного наказания // "Вестник Омского университета". Право. 2011, № 4 (29), էջ 130-134:

⁹ Տե՛ս «Комментарий к Уголовно-исполнительному кодексу Российской Федерации». М., 1997, էջ 136, **Базунов В.** Арест как вид уголовного наказания // "Преступление и наказание", 1998, № 4, էջ 53:

¹⁰ Տե՛ս «Europe Council documents collection in the sphere of human rights protection and struggle against criminality», М., 1998, էջ 223:

Համանման դրույթ են պարունակում նաև անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Պեկինյան կանոններ»), որի հոդված 26.2-ի համաձայն՝ «Ուղղիչ հիմնարկներում անչափահասները պետք է ապահովվեն իրենց տարիքին, սեռին, անձին և լիարժեք զարգացման շահերին համապատասխան խնամքով, պաշտպանությամբ և սոցիալական, հոգեբանական, բժշկական, ֆիզիկական, կրթության և արհեստավարժության բնագավառների ողջ անհրաժեշտ օգնությամբ»:

Հետևաբար, անչափահասների նկատմամբ կալանք պատժատեսակի ՀՀ օրենսդրությամբ առկա ներկայիս կանոնակարգումը խնդրահարույց է, և քրեակատարողական օրենսգրքում պետք է նախատեսվի կալանք պատժատեսակին դատապարտված անձանց կրթության երաշխավորումն ապահովող դրույթ:

Մտահոգության տեղիք է տալիս նաև անչափահասների նկատմամբ կիրառվող կալանք պատժատեսակի տևողությունը՝ տասնհինգ օրից երկու ամիս: Կարծում ենք՝ ճիշտ կլիներ անչափահասների նկատմամբ կալանք պատժատեսակի տևողության կրճատումը՝ տասը օրից մինչև մեկ ամիս:

Այնուհանդերձ, կալանք պատժատեսակի կանոնակարգման ժամանակ տեղ գտած ամենալուրջ հիմնախնդիրը կապված է այն հանցավոր արարքների շրջանակի հետ, որոնց համար այն կարող է կիրառվել: Մասնավորապես, գործող քրեական օրենսգրքի հոդված 88-ը սահմանում է, որ կալանք կարող է նշանակվել ***ոչ մեծ և միջին ծանրության*** հանցանքների համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում: Մինչդեռ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների հոդված 17.1-ի համաձայն՝ «...գ) անչափահաս իրավախախտին պետք չէ ազատագրել, եթե միայն նա մեղավոր չի ճանաչվում այլ անձի դեմ բռնությամբ լուրջ արարք գործելու կամ բազմաթիվ լուրջ իրավախախտումներ կատարելու մեջ, ինչպես նաև¹¹ ներգործության ուրիշ համապատասխան միջոցի բացակայության դեպքում»: Ավելին, նույն կանոնների հոդված 19.1-ում սահմանվում է, որ անչափահասին որևէ ուղղիչ հիմնարկում ներփակելը միշտ պետք է ծայրահեղ միջոց լինի:

Փաստորեն, «Պեկինյան կանոնների» համաձայն՝ անչափահասի նկատմամբ կալանքի կիրառումը հնարավոր է երկու դեպքում՝

1. այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով լուրջ արարք գործելու,

2. լուրջ իրավախախտումներ բազմիցս կատարելու:

Ընդ որում՝ անչափահասը նշված երկու դեպքերում էլ ազատութ-

¹¹ «Պեկինյան կանոնների» ներկայացված թարգմանությունը որոշակի շեղում ունի դրանց անգլերեն բնօրինակից, որտեղ խոսքը ոչ թե «բազմաթիվ լուրջ իրավախախտումներ կատարելու», այլ «լուրջ իրավախախտումներ բազմիցս կատարելու» մասին է, իսկ «ինչպես նաև»-ի փոխարեն օգտագործվում է «և» շաղկապը:

յունից կարող է գրկվել, եթե բացակայում է արձագանքման այլ համապատասխան միջոցը:

Թեև «Պեկինյան կանոնները» չեն հստակեցնում, թե ինչ պետք է հասկանալ «լուրջ արարք», «լուրջ իրավախախտում» հասկացությունների ներքո, սակայն հասկանալի է, որ ոչ մեծ ծանրության հանցագործությունները այդ հասկացությունների ներքո չեն ընդգրկվում: Հետևաբար, ոչ մեծ ծանրության հանցագործությունների պարագայում կալանք պատժատեսակի սահմանումը բովանդակային առումով շեղվում է «Պեկինյան կանոններով» սահմանված ուղենիշներից: Վիճահարույց է նաև միջին ծանրության հանցագործությունները «լուրջ իրավախախտում» համարելը:

Նման պարագայում կալանք պատժատեսակի կիրառումը անչափահասների նկատմամբ նպատակահարմար չի թվում, և թերևս ճիշտ կլիներ այն չնախատեսել անչափահասների նկատմամբ կիրառվող պատիժների համակարգում:

Ինչպես արդեն նշվել է, անչափահասների հանդեպ առավել հաճախ կիրառվող պատժատեսակը ազատագրվումն է: ՀՀ գործող քրեական օրենսդրությունը սահմանում է, որ ազատագրվումը որոշակի ժամկետով դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից մեկուսացնելն է:

Ազատագրվումն անչափահասների նկատմամբ նշանակվում է՝

1) ոչ մեծ ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, իսկ միջին ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը երեք տարի ժամկետով,

2) մինչև տասնվեց տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը յոթ տարի ժամկետով,

3) տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը տասը տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 90-ը սահմանում է, որ մինչև տասնվեց տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատագրվումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել յոթ տարին: Տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատագրվումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել տասը տարին: Ըստ դատավճիռների համակցության՝ ազատագրվման ձևով նշանակվող վերջնական պատիժը չի կարող գերազանցել տասներկու տարին:

Փաստորեն, հայ օրենսդիրը հնարավոր է համարում անչափահաս դատապարտյալի նկատմամբ մինչև 12 տարի ժամկետով ազատագրվում կիրառելը:

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը հնարավոր է համարում ազատագրելու պատժատեսակի կիրառումը ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անչափահասի նկատմամբ, ինչը, կարծում ենք, ինչպես և կայանքի դեպքում, «Պեկինյան կանոններից» շեղում է: Ակնհայտ է, որ ազատագրելու պատժատեսակը անչափահասի հանդեպ կարող է կիրառվել որպես ծայրահեղ, բացառիկ միջոց, հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքում պետք է ամրագրել, որ որոշակի ժամկետով ազատագրումը չի կարող կիրառվել ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անչափահասի նկատմամբ:

ՀՀ-ում անչափահասների նկատմամբ կիրառվող պատիժների համակարգի վերլուծությունը վկայում է, որ գործնականում դատարանները մեծ մասամբ «ստիպված» են ազատագրելու կիրառել, քանի որ առկա պատժատեսակների համակարգում այլընտրանքներ չկան. հանրային աշխատանքները ինքնուրույն չեն կարող կիրառվել, այլ կարող են կիրառվել միայն անձին ազատագրվման դատապարտելուց հետո, կայանքը բովանդակային առումով ազատագրվման դրսևորում է, իսկ տուգանքը կիրառել գրեթե չի ստացվում՝ անչափահասների ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի բացակայության պատճառով, որի վրա կարող է տարածվել բռնագանձում:

Նման պայմաններում անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում անչափահասների համար նախատեսված պատժատեսակների համակարգը յրացնել իրատեսական և անչափահասի ուղղման, նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու հնարավորություն ունեցող պատժատեսակներով:

Որպես այդպիսին կարող են լինել որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, ազատության սահմանափակումը:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 52-ը չափահասների համար նախատեսում է այնպիսի պատժատեսակ, ինչպիսին է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը: Այդ հոդվածի համաձայն՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կատարված հանցանքի բնույթի հետ կապված որոշակի գործունեությամբ զբաղվելն արգելելն է, որը որպես հիմնական պատիժ սահմանվում է երկուսից յոթ տարի ժամկետով՝ դիտավորյալ հանցագործությունների համար, և մեկից հինգ տարի ժամկետով՝ անզգույշ հանցագործությունների համար, իսկ որպես լրացուցիչ պատիժ՝ մեկից երեք տարի ժամկետով:

Թերևս, նույնաբովանդակ պատժատեսակի նախատեսումն անչափահասների համար նույնպես արդարացված կլինի:

Ազատության սահմանափակում պատժատեսակը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում, որում այն բնորոշվում է որպես դատապարտյալին առանց ուսումնառությունից կամ աշխատանքից կտրելու տնային պայմաններում հսկողության տակ պահելը՝ վեց ամ-

սից երեք տարի ժամկետով: Նշված պատժատեսակը կարող է արդյունավետ այրնտրանք հանդիսանալ ազատագրկմանը: Նախատեսվում է, որ դատարանը, ազատության սահմանափակում նշանակելով, արգելում է հանցանք կատարած անձին հաճախել տարբեր ժամանցային կամ այլ հաստատություններ, շփվել անձանց որոշակի շրջանակի հետ կամ որոշակի ժամերի բացակայել տնից: Դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա կարող է սահմանել նաև այլ արգելքներ կամ փոխարինել դրանք:

Այնուհանդերձ, պետությունը պետք է ձգտի հնարավորինս մեղմ, սակայն անչափահասի վրա ներագոյելու, նոր հանցանքի կատարումը կանխելու հնարավորություն ունեցող միջոցներով արձագանքել անչափահասների կողմից կատարվող հանցավոր արարքներին: Ներկայումս նման միջոցներ են դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները, որոնք, սակայն, կիրառվում են միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցանք կատարած անչափահասին քրեական պատասխանատվությունից ազատելիս: Մինչդեռ անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսել անվտանգության այնպիսի միջոցներ, որոնք կարող են կիրառվել հանցանք կատարած անձին, հատկապես անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելիս: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում առաջարկվում է որպես այդպիսին նախատեսել որոշակի վայրեր այցելելու արգելքը, հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը, ընտանեկան հսկողությունը, հատուկ կրթադաստիարակչական հիմնարկում տեղավորելը, կրթական, մշակութային, մարզական կամ այլ վերականգնողական ծրագրերին ներգրավվելը: ՀՀ քրեական օրենսգրքում դրանց նախատեսումը հնարավորություն կտա դատարանին առավելագույնս ապահովելու քրեական պատասխանատվության և պատժի անհատականացումը, հանցանք կատարած անձի նկատմամբ պետության համարժեք և համաչափ արձագանքը:

Բանալի բառեր – *անչափահաս, պատժի համակարգ, ազատագրկում, կալանք, հանրային աշխատանքներ, տուգանք, այլընտրանքային միջոցներ*

АННА МАРГАРЯН – Особенности наказания несовершеннолетних в РА. – Превенция преступного поведения несовершеннолетних – ответственная задача любого государства. Не менее важен и вопрос уголовной ответственности лиц, не достигших восемнадцати лет. Анализ действующего Уголовного кодекса РА показывает, что система предусмотренных для них наказаний не всегда позволяет адекватно реагировать на криминальное поведение молодежи и предупреждать его. Действенные меры наказания, альтернативные лишению свободы, в УК отсутствуют.

В статье предлагается предусмотреть для несовершеннолетних новые виды наказания: лишение права заниматься некоторыми видами деятельности, ограничение свободы. Предложены также меры воспитательного воздействия: запрет на посещение определённых мест, распределение в специальные образовательные

воспитательные учреждения, привлечение к образовательным, культурным, спортивным или иным реабилитационным программам. Такие меры помогут обеспечить эффективную и пропорциональную государственную реакцию на криминальное поведение несовершеннолетних.

Ключевые слова: *несовершеннолетний, система наказаний, лишение свободы, арест, общественные работы, штраф, альтернативные меры*

ANNA MARGARYAN – *Peculiarities of Juvenile Punishment in RA.* – One of the high priority tasks of any State is the prevention of juveniles' criminal behavior. In scope of this, the issue of criminal responsibility and punishment of crime perpetrators under the age of eighteen becomes of particular importance.

The analysis of RA Criminal Code in force reveals the failure of the current system of punishments foreseen for the juveniles to ensure the adequate reaction to their criminal behavior and guarantee effective prevention. Unfortunately, due to the absence of effective measures alternative to imprisonment the latter yet remains the main punishment which is applied to the juveniles.

The author suggests foreseeing of new types of punishment (deprivation of the right to engage in certain activities, restriction of freedom) and measures of educational character (ban on visiting certain places, placement in special educational institutions, participation in cultural, sport, educational and other restorative programs) in the criminal code of RA, which can be applied to the juveniles and will guarantee the adequate and proportionate state reaction to the criminal behaviour of juveniles.

Key words: *juvenile, system of punishments, imprisonment, arrest, community works, fine, alternative measures*

**ԱԿՆՀԱՅՑ ՀԱՆՑԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ
ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ**

ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հափշտակությունները ճիշտ որակելու անհրաժեշտ նախադրյալներից մեկը սեփականության քրեաիրավական պաշտպանության շրջանակների հստակեցումն է, ինչը պետք է կատարվի քրեական իրավունքի պաշտպանիչ գործառույթի տեսանկյունից: Այդ առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում «գողը գողից գողացավ» իրավիճակում անձի արարքին քրեաիրավական գնահատական տալու հարցը:

Ընդհանուր ձևակերպմամբ հարցը հետևյալն է. արդո՞ք ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հափշտակությունը¹ կարելի է համարել սեփականության դեմ ուղղված հանցագործություն: Մեր կարծիքով, այդ հարցն անհրաժեշտ է քննարկել երկու տեսանկյունից՝

1. երբ հափշտակվող գույքը սեփականատիրոջ տիրապետումից դուրս է եկել վերջինիս կամքից անկախ (հափշտակվել կամ շորթվել է),

2. երբ սեփականատերն ինքն է իր գույքը դրել հանցավոր շրջանառության մեջ (տվել է որպես կաշառք, գույքը որպես հատուցում օտարել է այլ հանցավոր «գործարքների» ժամանակ, օրինակ՝ այդ գույքով ապօրինաբար ձեռք է բերել թմրամիջոց, վճարել է վարձու մարդասպանին և այլն):

Առաջին իրավիճակում հափշտակված կամ շորթված գույքի հափշտակության քրեաիրավական գնահատականի հարցում մասնագիտական գրականության մեջ միասնական կարծիք չկա:

Որոշ հեղինակներ կարծում են, որ գույքի հափշտակությունը հնարավոր է միայն օրինական տիրապետումից այն վերցնելու դեպքում, և հափշտակվածի հափշտակությունը չի կարող համարվել սեփականության դեմ ուղղված հանցագործություն²: Ա. Ա. Պինանը նշված մոտեցումը հիմնավորում է նրանով, որ հափշտակված գույքի հափշտակությունը վնաս չի պատճառում սեփականության դեմ ուղղված հանցագործությամբ:

¹ Սույն հոդվածում «ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հափշտակություն» բառակապակցության մեջ «հափշտակություն» տերմինն օգտագործվում է որոշակի վերապահումով. այն պետք է հասկանալ որպես ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքին անհատույց տիրանալը՝ այն հանցավորի-նր կամ այլ անձինը դարձնելու նպատակով:

² Տե՛ս «Комментарий к Уголовному кодексу Российской Федерации». М., 2004, էջ 360:

յունների օբյեկտ համարվող հասարակական հարաբերությունների ողջ համալիրին: Որպես քրեաիրավական պաշտպանության օբյեկտ՝ սեփականության հարաբերությունները ունեն երկու հարթություն՝ սեփականատիրոջ ու գույքի միջև (սուբյեկտ-օբյեկտ) հարաբերություն և սեփականատիրոջ ու այլ անձանց միջև (սուբյեկտ-սուբյեկտ) հարաբերություն: Հափշտակված գույքի հափշտակությունը չի խախտում սեփականատիրոջ ու գույքի միջև հարաբերությունը, քանի որ դրա առարկան այնպիսի գույքն է, որն արդեն դուրս է եկել սեփականատիրոջ (օրինական տիրապետողի) տիրապետումից³: Ըստ Վ. Դ. Ֆիլիմոնովի՝ հափշտակված գույքի հափշտակությունը չի խախտում սեփականատիրոջ իրավունքները, քանի որ նա արդեն զրկված է իրեն պատկանող գույքի նկատմամբ իրավական իշխանություն իրականացնելու հնարավորությունից⁴:

Դրան հակառակ՝ մի շարք հեղինակներ այն կարծիքն են արտահայտում, որ հափշտակության դեպքում գույքը հանցավորի կողմից կարող է վերցվել ոչ միայն սեփականատիրոջից կամ այլ օրինական տիրապետողից, այլ նաև այլ անձից, օրինակ՝ նրանից, ով նախկինում հափշտակել է այդ գույքը⁵: Դեռևս 20-րդ դարի սկզբին Ն. Ս. Տազանցը գրել է, որ գողության հասկացությունը հանգեցվում է գույքը փաստացի տիրապետողի դեմ ոտնձգությանը, անկախ այն հանգամանքից, թե ով է գույքի տիրապետողը՝ սեփականատեր, վարձակալ թե անբարեխիղճ տիրապետող. գույքը կարելի է հափշտակել նույնիսկ գողից⁶: Այդ մտեցման կողմնակից էր նաև Ա. Ա. Ժիժիլենկոն, ըստ որի՝ հափշտակված գույքի հափշտակությունը նույնպես հափշտակություն է, քանի որ երկրորդ հափշտակողի համար տվյալ գույքը ուրիշի գույք է, որովհետև գտնվում է այլ անձի տիրապետման ներքո⁷:

Խորհրդային քրեական իրավունքի գիտության մեջ նույնպես հափշտակված գույքի հափշտակությունը ավանդաբար համարվել է հափշտակություն: Այսպես, ըստ Գ. Ա. Կրիգերի՝ հափշտակված գույքը հափշտակելը պետք է որակվի որպես հափշտակություն, քանի որ այդ արարքը բարդացնում կամ ամբողջությամբ բացառում է գույքը օրինական տիրապետողին վերադարձնելու հնարավորությունը, և ստացվում է, որ սեփականությանը վնաս է պատճառվում երկու իրավախախտների համակցված գործողությունների հետևանքով⁸: Վ. Ա. Վլադիմիրովի

³ Տե՛ս **Пинаев А. А.** Уголовно-правовая борьба с хищениями. Харьков, 1975, էջ 18:

⁴ Տե՛ս **Филимонов В. Д.** Охранительная функция уголовного права. СПб., 2003, էջ 27:

⁵ Տե՛ս **Верина Г. В.** Дифференция преступлений против собственности: Проблемы теории и практики. Саратов, 2003, էջ 101, Российское уголовное право. Особенная часть. Т. 2. М., 2006, էջ 172, **Бойцов А. И.** Преступления против собственности. СПб., 2002, էջ 197:

⁶ Տե՛ս **Таганцев Н. С.** Уложение 22 марта 1903 г. СПб., 1904, էջ 854:

⁷ Տե՛ս **Жижиленко А. А.** Преступления против имущества и исключительных прав. М., 1928, էջ 63 – 64:

⁸ Տե՛ս **Кригер Г. А.** Квалификация хищений социалистического имущества. М., 1974, էջ 47 – 48:

կարծիքով՝ ապօրինի տիրապետումից գույքը հափշտակելու դեպքում տուժող է համարվում գույքի սեփականատերը, քանի որ վնասը վերջին հաշվով պատճառվում է հենց իրեն⁹: Նշված տեսակետի կողմնակից էին նաև Գ. Անաշկինը և Զ. Վիշինսկայան, ովքեր գտնում էին, որ հափշտակված գույքի հափշտակությունը ևս համարվում է հափշտակություն, քանի որ տվյալ իրավիճակում օրենքը պաշտպանում է ոչ թե ապօրինի տիրապետողի շահերը, այլ սեփականատիրոջը պատկանող գույքային իրավունքների իրացման պայմանները¹⁰: Ըստ Բ. Ս. Նիկիֆորովի՝ այն դեպքերում, երբ գույքը հափշտակվում է այն անձից, ով դա ձեռք էր բերել հանցավոր ճանապարհով, առկա է սեփականության դեմ ուղղված հանցագործություն, քանի որ տվյալ արարքը ոտնձգում է գույքի սկզբնական տիրապետողի սեփականության դեմ: Սեփականատիրոջ օրինական շահն այն է, որ իր գույքը վերադարձվի իրեն կամ օգտագործվի իր շահերի համար¹¹: Նշված տեսակետի հետաքրքիր հիմնավորում է բերել Ա. Ի. Բոյցովը, ըստ որի՝ ապօրինի տիրապետողից գույքի հափշտակումն իր սոցիալական բնույթով նույնքան վտանգավոր է, որքան օրինական տիրապետողից հափշտակությունը, քանի որ այն խախտում է հասարակության մեջ սեփականության հարաբերությունների գործառույթյան ընդհանուր պայմանները և հանցավորին հնարավորություն է տալիս ապօրինաբար հարստանալու այլ անձանց հաշվին¹²:

Մեր կարծիքով՝ հափշտակված կամ շորթված գույքի հափշտակությունը չի կարող համարվել հափշտակություն՝ հետևյալ հիմնավորումներով:

Իր որոշումներից մեկում Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը տվել է հափշտակության հետևյալ սահմանումը, «Հափշտակություն ասելով հասկացվում է՝ ուրիշի գույքն ապօրինի անհատույց շահադիտական նպատակով վերցնելը կամ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, եթե հանցավորն այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել»¹³:

Բերված բնորոշման մեջ պարզաբանման է ենթակա «ուրիշի գույքը վերցնել» ձևակերպումը: Մասնագիտական գրականության մեջ «ուրիշի գույքը վերցնել» ասելով հասկացվում է սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տվյալ գույքի նկատմամբ ունեցած տիրապետումը այս կամ այն եղանակով դադարեցնելը¹⁴:

⁹ Տե՛ս **Владимиров В. А.** Квалификация похищений личного имущества. М., 1974, էջ 32:

¹⁰ Տե՛ս **Анашкин Г., Вышинская З.** Уголовно-правовая охрана личной собственности граждан // "Советская юстиция", 1987, էջ 17, 19:

¹¹ Տե՛ս **Никифоров Б. С.** Уголовно-правовая охрана личной собственности в СССР. М., 1954, էջ 22:

¹² Տե՛ս **Бойцов А. И.** Преступления против собственности. СПб., 2002, էջ 197 - 198:

¹³ ՀՀ Վճռաբեկ ուստանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշումը ԵԿԴ/0087/01/12 գործի վերաբերյալ, 31-րդ կետ:

¹⁴ Տե՛ս **Богданчиков С. В.** Уголовно-правовые и криминологические аспекты преступлений против собственности. М., 2011, էջ 63:

Տիրապետումը գույքի գտնվելն է սեփականատիրոջ տնտեսությունում, նրա **փաստացի** տնտեսական իշխանության ներքո: Տիրապետման իրավագործությունը գույքն իր տնտեսական իշխանության ներքո, սեփական տնտեսությունում պահելու՝ **օրենքի վրա հիմնված** հնարավորությունն է¹⁵: Մեկ այլ բնորոշման համաձայն՝ գույքի տիրապետումը սեփականատիրոջ կամ այլ **օրինական** տիրապետողի կողմից իր հաշվեկշռում գտնվող գույքի կամային վերահսկողությունն է, որի եղանակներն ու բավարարությունը որոշվում են նորմատիվ-իրավական ակտերով կամ գործարար շրջանառության սովորույթով¹⁶: Գույքին տիրապետելը ենթադրում է, որ անձը և՛ իրավական, և՛ **փաստացի** հնարավորություն ունի առանց խոչընդոտների իրականացնելու գույքի նկատմամբ իր կամքը: Գույքի տիրապետումը համարվում է դադարեցված, եթե անձն այլևս **փաստացի** հնարավորություն չունի իր գույքի նկատմամբ իրականացնել սեփական կամքը¹⁷:

Հափշտակության հանրային վտանգավորության էության մեջ անհրաժեշտ է առանձնացնել երկու բաղադրիչ՝ սոցիալ-տնտեսական (փաստական) և իրավաբանական: Սոցիալ-տնտեսական (փաստական) տեսանկյունից հափշտակությունը խախտում է գույքը սեփականատիրոջը պատկանելու հարաբերությունները: Հափշտակության հետևանքով սեփականատերը կորցնում է իր գույքի փաստացի տիրապետումը և դրանով իսկ կրում է իրական գույքային վնաս, քանի որ զրկվում է գույքի այս կամ այն օգտակար հատկություններից օգտվելու և գույքի գործառության կապակցությամբ որոշումներ կայացնելու հնարավորությունից: Ինչ վերաբերում է հափշտակության հանրային վտանգավորության էության իրավաբանական բաղադրիչին, ապա այն դրսևորվում է այն բանում, որ հանցավորը խախտում է սեփականության հարաբերությունների սուբյեկտիվ բովանդակությունը՝ սեփականության սուբյեկտիվ իրավունքը: Հափշտակության հետևանքով սեփականատերը գործնականում այլևս չի կարող իրականացնել իր տիրապետումից դուրս եկած գույքի նկատմամբ իր իրավունքները: Ինչպես իրավացիորեն նկատում է Ս. Ելիսենը, հափշտակությունից հետո գույքի նկատմամբ սեփականատիրոջ սեփականության իրավունքը պահպանվում է: Որպես սեփականատեր՝ նա իրավունք ունի պահանջելու իր գույքը ապօրինի տիրապետումից, ստանալու իրեն պատճառված վնասի հատուցում: Սակայն ակնհայտ է, որ իր հայեցողությամբ գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու լիազորությունների իրականացման փաստացի հնարավորության մասին այս դեպքում խոսք լինել չի կարող¹⁸:

¹⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» / րնդհանուր խմբագրությամբ **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**, Եր., 2010, էջ 360:

¹⁶ Տե՛ս **Исмагилов Р.** Объект и предмет кражи // "Законность", 1999, № 8, էջ 49-52:

¹⁷ Տե՛ս **Богданчиков С. В.**, նշվ. աշխ., էջ 64:

¹⁸ Տե՛ս **Елисеев С.** Хищение похищенного: Проблемы квалификации // "Уголовное право", 2008, № 1, էջ 47 - 48:

Կարծում ենք՝ վերոգրյալով հիմնավորվում է, որ հափշտակված գույքի հափշտակությունն իր էությանմբ չի կարող համարվել հափշտակություն, և հակառակը պնդողները իրավացի չեն:

Այսպես, Ա. Ա. Ժիժլենկոյի այն փաստարկը, որ երկրորդ հափշտակողի համար տվյալ գույքը ուրիշի գույք է, որովհետև գտնվում է այլ անձի տիրապետման ներքո, հիմնավոր չէ: Մասնագիտական գրականության մեջ հափշտակության առարկայի իրավաբանական հատկանիշը մեկնաբանվում է հետևյալ կերպ. «Ուրիշի գույք է համարվում այն գույքը, որը գտնվում է այլ անձի սեփականության կամ **օրինական** տիրապետման ներքո և չի պատկանում հանցավորին»¹⁹: Այդ առումով Ս. Ելիսենը իրավացիորեն նշում է, որ քրեական օրենքը չի պաշտպանում և չպետք է պաշտպանի ապօրինի գույքային շահերը²⁰:

Հիմնավորված չի թվում նաև Գ. Ա. Կրիգերի այն փաստարկը, որ հափշտակված գույքը հափշտակելը բարդացնում կամ ամբողջությամբ բացառում է գույքը օրինական տիրապետողին վերադարձնելու հնարավորությունը, և ստացվում է, որ սեփականությանը վնաս է պատճառվում երկու իրավախախտների համակցված գործողությունների հետևանքով: Գույքի սկզբնական հափշտակությունը և այն քողարկելուն ուղղված գործողությունները կարող են կատարվել այնպիսի հանցավոր վարպետությամբ, որ գույքը օրինական տիրապետողին վերադարձնելն ի սկզբանե դառնա անհնար կամ չափազանց դժվար, և հակառակը՝ մինևույն գույքի բազմակի հափշտակությունները կարող են կատարվել հանցավոր վարպետության ցածր մակարդակով, և դրանց բացահայտումը կարող է դժվարություն չներկայացնել:

Բացի այդ՝ հափշտակություն կատարելու ընթացքում պատճառական կապի զարգացման տեսանկյունից սխալ է այն պնդումը, որ սեփականությանը վնաս է պատճառվում երկու իրավախախտների համակցված գործողությունների հետևանքով: Այսպես, հափշտակված գույքը հափշտակելու դեպքում բացակայում է պատճառական կապը կրկնակի հափշտակության և հետևանքի՝ սեփականատիրոջը պատճառված իրական գույքային վնասի միջև: Իսկ պատճառական կապը, ինչպես գիտենք, հափշտակությունների օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից է²¹: Եթե հափշտակված գույքի հափշտակությունը որակվի որպես հափշտակություն, ապա կստացվի, որ սեփականատերը վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է ճանաչվի ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հափշտակության տուժող: Մակայն ՀՀ

¹⁹ Жижиленко А. А., նշվ. աշխ., 2011, էջ 61:

²⁰ Ст' u Елисеев С. նշվ. աշխ., էջ 48:

²¹ Թերևս այդ առումով որպես հակափաստարկ կարող է ծառայել ավագակության ձևական հանցակազմը, սակայն մենք համակարծիք ենք այն հեղինակներին, ըստ որոնց ավագակությունը նույնպես անհրաժեշտ է սահմանել որպես նյութական հանցակազմով հանցագործություն (տե՛ս, օրինակ, Барсукова И. Г. Уголовно-правовая и криминологическая характеристика разбоя. Дис. канд. юрид. наук. М., 2005, էջ 49-51):

քրեական դատավարության օրենսգրքի 58 հոդվածի համաձայն՝ «Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը»: Ակնհայտ է, որ երկրորդ հափշտակությամբ սեփականատիրոջը որևէ գույքային վնաս անմիջականորեն չի պատճառվում, հետևաբար նա չի կարող ճանաչվել երկրորդ հափշտակության տուժող:

Ինչ վերաբերում է հեղինակների (Գ. Ջ. Վիշինսկայա, Ա. Բոյցով) այն փաստարկներին, թե հափշտակված գույքի հափշտակությունը խախտում է սեփականատիրոջը պատկանող գույքային իրավունքների իրացման պայմանները կամ հասարակության մեջ սեփականության հարաբերությունների գործառույթյան ընդհանուր պայմանները և հանցավորին հնարավորություն է տալիս ապօրինաբար հարստանալու այլ անձանց հաշվին, ապա կարծում ենք, որ նշված պայմանների խախտումը դուրս է սեփականության՝ որպես քրեաիրավական պաշտպանության օբյեկտի շրջանակներից:

Իհարկե, հափշտակված գույքի հափշտակությունը հանրորեն վտանգավոր արարք է, սակայն, մեր կարծիքով, դրա հանրային վտանգավորության բնույթն արտահայտվում է ոչ թե սեփականության հարաբերությունների, այլ տնտեսական գործունեության, նյութական բարիքների իրավաչափ բաշխման հարաբերությունների խախտման մեջ: Իսկ եթե, օրինակ, ապօրինի տիրապետումից հափշտակվում է սահմանափակ շրջանառության գույք (հրազեն, պայթուցիկ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր), ապա սեփականության դեմ ուղղված հանցագործությունը նույնպես բացակայում է. արարքը համարվում է հասարակական անվտանգության կամ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություն:

Այսպիսով, հանցագործության հետևանքով սեփականատիրոջ կամքին հակառակ նրա տիրապետումից դուրս եկած (հափշտակված, շորթված) գույքի հափշտակությունը չի կարող համարվել սեփականության դեմ ուղղված հանցագործություն:

Այժմ քննարկենք այնպիսի գույքի հափշտակության քրեաիրավական գնահատականը, որը հանցավոր շրջանառության մեջ է դրվել հենց սեփականատիրոջ կողմից: Օրինակ՝ կարո՞ղ է արդյոք որպես հափշտակություն որակվել պաշտոնատար անձին տրված կաշառքի առարկայի հափշտակությունը կամ վարձու մարդասպանին սպանության դիմաց վճարված գումարի հափշտակությունը կամ, ասենք, թմրամիջոցների, հրազենի ապօրինի վաճառքից ստացված գումարի հափշտակությունը: Ներկայացված իրավիճակների միջև քննարկվող հարցի

տեսանկյունից սկզբունքային տարբերություն չկա, ուստի կոնկրետության ապահովման նկատառումներից ելնելով՝ քննարկենք կաշառքի առարկայի հափշտակության իրավիճակը:

Կաշառք ստացած պաշտոնատար անձը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172 հոդվածի («Սեփականության իրավունք ձեռք բերելու հիմքերը») իմաստով չի կարող ձեռք բերել այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք, նույնիսկ եթե կաշառք տվողն իր կամքով է կաշառքի առարկան հանձնում պաշտոնատար անձին: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172 հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առքուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը»: Սակայն ակնհայտ է, որ կաշառք տալը և ստանալը քաղաքացիաիրավական իմաստով չի կարող համարվել գույքի օտարման այլ գործարք: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածի համաձայն՝ «Գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն»: Թեև հոդվածում գործարքի կողմերի գործողությունների իրավաչափության մասին ուղղակի նշում չկա, սակայն քաղաքացիական իրավունքում որպես գործարքի պարտադիր հատկանիշ առանձնացվում է կողմերի գործողությունների իրավաչափությունը²²:

Մյուս կողմից՝ կաշառքը պաշտոնատար անձին տալու պահից դադարում է կաշառքի առարկա հանդիսացող գույքի նկատմամբ կաշառք տվողի սեփականության իրավունքը: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում»:

Ստացվում է հետաքրքիր իրավիճակ. կաշառք տալու պահից կաշառքի առարկա համարվող գույքի նկատմամբ դադարում է կաշառք տվողի սեփականության իրավունքը, իսկ պաշտոնատար անձը կաշառք ստանալու պահից ձեռք չի բերում դրա նկատմամբ սեփականության իրավունք: Այսինքն՝ որպես կաշառք տրված գույքը քաղաքացիաիրավական տեսանկյունից չի պատկանում ոչ մեկին: Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178 հոդվածի իմաստով տիրագուրկ է համարվում նաև այն գույքը, որը չունի սեփականատեր, սակայն կաշառքի առարկա հանդիսացած գույքը չի կարող համարվել տիրագուրկ:

²² Տե՛ս **Գ. Մ. Մխչյան**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Ընդհանուր դրույթներ: Ուս. ձեռնարկ, Եր., 2012, էջ 212:

Բանն այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 103.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, այնպիսի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները և միջոցները, որի կատարման արդյունքում ստացվել է գույք, ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, սույն օրենսգրքի 215 հոդվածով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաները, իսկ դրանց բացակայության դեպքում դրանց համարժեք գույքը, բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի գույքի, սուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի, ենթակա է բռնագանձման՝ հօգուտ պետության»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119 հոդվածի («Քրեական գործով վարույթն ավարտելիս իրեղեն ապացույցների մասին ընդունվող որոշումները») 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս առարկաները դատարանի դատավճռով ուղղվում են դատական ծախսերի հատուցմանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը, իսկ եթե հայտնի չէ վնաս կրած անձը, որպես եկամուտ՝ հանձնվում են պետությանը»: Հատկանշական է, որ նույն մասի 3-րդ կետը սահմանում է, որ դրամը, այլ արժեքները և մյուս առարկաները, որոնք **օրինական** տիրապետումից դուրս են եկել հանցագործության կամ օրենքով չթույլատրված այլ գործողությունների հետևանքով, հանձնվում են տիրապետողին, սեփականատիրոջը կամ նրանց իրավահաջորդներին:

Այն, որ հանցավոր «գործարքի» միջոցով ձեռք բերված գույքի հափշտակությունը չի կարող համարվել հափշտակություն, հիմնավորվում է նաև քրեական իրավունքի խնդիրների տեսանկյունից: Ինչպես իրավացիորեն նշում է Բ. Տ. Ռազզիլդիևը, առանց քրեական իրավունքի խնդիրները որոշակիացնելու անհնար է ձևավորել արդյունավետ քրեաիրավական քաղաքականություն²³:

Քրեական իրավունքի սոցիալական արժեքը նախ և առաջ հասարակական հարաբերությունների պաշտպանությունն է²⁴: Քրեական իրավունքի խնդիրը հասարակական հարաբերությունների **որոշակի**

²³ Տե՛ս **Разгильдиев Б. Т.** Задачи уголовного права Российской Федерации и их реализация. Саратов, 1993, էջ 4:

²⁴ Տե՛ս **Козаченко И. Я.** Уголовное право как основной инструмент уголовно-правового регулирования // "Уголовное право. Общая часть". М., 1997, էջ 18:

շրջանակի պաշտպանությունն է²⁵: Պետք չէ գերագնահատել քրեական իրավունքի պաշտպանիչ գործառույթը. անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանությունը պետք է սահմանափակված լինի որոշակի շրջանակներով: Իսկ ի՞նչ սահմաններում պետք է իրականացվի քրեական իրավունքի պաշտպանիչ գործառույթը: Իրավունքի տեսության մեջ իրավունքի գործառույթը բնորոշվում է որպես իրավունքի սոցիալական կոչում, հասարակական հարաբերությունների վրա իրավական ներգործության ուղղություն²⁶:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով **ճանաչված ու պահպանվող** իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու **օրենքով պահպանվող շահերը չխախտող** ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով»:

Ակնհայտ է, որ հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանության շրջանակները պետք է սահմանափակվեն դրանց մասնակից կողմերի միայն օրինական շահերի պաշտպանությամբ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի մի շարք հոդվածներում (143, 148, 214, 308, 309 և այլն) որպես հանրորեն վտանգավոր հետևանք նախատեսված է անձի, հասարակության, պետության օրինական շահերին պատճառված վնասը:

Կարծում ենք, որ անձի անօրինական շահը չի կարող պաշտպանվել օրենքով: Եթե անձը կաշառք է տալիս՝ փորձելով նման եղանակով բավարարել իր ապօրինի շահերը, կամ ապօրինի գնում է թմրամիջոց և սեփական գույքն իր տիրապետումից դուրս է բերում իր իսկ հանցավոր գործողություններով, ապա այդ գույքի շուրջ այլևս չի կարող ձևավորվել քրեաիրավական պաշտպանության ենթակա սեփականության հարաբերություն: Հետևաբար, հանցավոր «գործարքով» ձեռք բերված գույքի հափշտակության դեպքում սեփականության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները չեն վնասվում, ուստի հափշտակությունը բացակայում է:

Քննարկվող հարցի առնչությամբ անչափ կարևոր նշանակություն

²⁵ Տե՛ս **Разгильдиев Б. Т.**, նշվ. աշխ., էջ 43:

²⁶ Տե՛ս **Радько Т. Н.** Функции права // "Общая теория права". Нижний Новгород, 1993, էջ 267:

ունի ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշումը. «... պետությունը պարտավոր չէ գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ գործարքներ կնքած քաղաքացիների գույքային և այլ իրավունքների վերականգնումը դիտել հանրային շահի տիրություն և հանրային միջոցներ ծախսելով՝ իրականացնել նշված մասնավոր շահերի քրեաիրավական պաշտպանություն»²⁷:

Եթե, ըստ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման, պետությունը պարտավոր չէ հանրային միջոցներ ծախսելով իրականացնել քաղաքացիական օրենսդրությունը խախտած անձանց գույքային շահերի քրեաիրավական պաշտպանություն, ապա այդպիսի պաշտպանությունն առավել ևս չպետք է տարածվի այն անձանց վրա, ովքեր իրենց շահերը փորձել են բավարարել քրեական օրենսդրության խախտմամբ:

Այսպիսով, քրեական իրավունքի պաշտպանիչ գործառույթի տեսանկյունից սեփականության քրեաիրավական պաշտպանությունը սահմանափակվում է միայն օրինական տիրապետման ներքո գտնվող գույքի շրջանակներով, և ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հափշտակությունը չի կարող համարվել սեփականության դեմ ուղղված հանցագործություն: Ընդ որում, նշանակություն չունի, թե հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը ինչպես է դուրս եկել սեփականատիրոջ տիրապետումից՝ վերջինիս կամքից անկախ, թե՛ հանցավոր շրջանառության մեջ է դրվել հենց նրա կողմից: Այդ երկու իրավիճակների միջև տարբերությունն այն է, որ առաջին դեպքում գույքը ենթակա է վերադարձման սեփականատիրոջը, իսկ երկրորդ դեպքում՝ բռնագանձման հոգուտ պետության:

Չարկ է նշել, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հափշտակությունը չի կարող հափշտակություն համարվել միայն այն դեպքում, երբ անձը գիտակցել է, որ տվյալ գույքը նա վերցնում է ապօրինի տիրապետումից: Եթե հափշտակողը չի գիտակցել, որ տվյալ գույքը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով, ապա արարքը փաստական սխալի կանոններով պետք է որակվի որպես հափշտակության կոնկրետ տեսակի փորձ:

Եթե հանցավորը գիտակցում է, որ իր կողմից հափշտակվող գույքը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով, արարքը պետք է համարվի ոչ թե սեփականության, այլ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություն, քանի որ դրանով վնաս է պատճառվում ոչ թե կոնկետ սեփականատիրոջ կամ գույքի օրինական տիրապետողի իրավունքներին, այլ սեփականության հարաբերությունների գործառության և նյութական բարիքների իրավաչափ բաշխման ընդհանուր պայմաններին: Ել-

²⁷ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշումը ԵԿԴ/0176/01/09 գործի վերաբերյալ, 31-րդ կետ:

ներով վերագրյալից՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ գլուխը («Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները») լրացնել նոր՝ 216.1 հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 216.1. Ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքին տիրանալը

1. Ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքն ապօրինի տիրապետումից անհատույց վերցնելը՝ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելու նպատակով՝

պատժվում է...:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) խոշոր չափերով,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է...:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից,

3) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է...»:

Կարծում ենք, որ առաջարկվող օրենսդրական լրացումը կնպաստի ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը ապօրինի վերցնելու դեպքերի ճիշտ որակմանը:

Բանալի բառեր – *ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք, հափշտակություն, սեփականության իրավունք, գույքի տիրապետում, քրեական իրավունքի խնդիրները, քրեական օրենսգիրք, քաղաքացիական օրենսգիրք*

МИСАК МАРКОСЯН – Уголовно-правовая оценка хищения имущества, заведомо добытого преступным путём. – Чтобы правильно квалифицировать хищение, необходимо уточнить пределы уголовно-правовой охраны собственности с точки зрения охранительной функции уголовного права. В статье рассматривается вопрос – правильно ли квалифицировать хищение имущества, заведомо добытого преступным путём, как преступление против собственности? Анализ соответствующих норм уголовного и гражданского законодательства, а также высказанных в литературе по уголовному праву мнений позволяет заключить, что хищение имущества, добытого преступным путём, не может являться преступлением против собственности.

В заключительной части статьи изложено законодательное предложение – криминализовать завладение имуществом, которое добыто заведомо преступным путём, как преступление в сфере экономической деятельности.

Ключевые слова: имущество, заведомо добытое преступным путём, хищение, право собственности, задачи уголовного права, уголовный кодекс, гражданский кодекс

MISAK MARKOSYAN – *Criminal-Legal Qualification of the Plunder of Property Obtained in an Obviously Criminal Way.* – The clarification of the bounds of criminal-legal protection of property from the aspect of criminal law’s maintaining function is an important prerequisite for correct qualification of plunders.

The possibility of qualification of the plunder of property obtained in an obviously criminal way as a crime against property is discussed by the author in the article presented. On the basis of criminal and civil legislation provisions’ analysis and study of different scientific approaches stated by legists in criminal law, author concludes that plunder of property obtained in an obviously criminal way can’t be qualified as a crime against property.

In the final part of the article the author makes a legislative proposal - to criminalize the possession of property obtained in an obviously criminal way as a crime against economic activity.

Key words: *property, obtained in an obviously criminal way, plunder, right to property, possession of property, objectives of criminal law, Criminal Code, Civil Code*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԻ ՄԻԱՏԵՍԱԿ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ-ում քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների լիարժեք ու համակողմանի պաշտպանության մասին կարելի է խոսել միայն դատական համակարգի արդյունավետ գործարկման պարագայում, ինչը պետք է ինստիտուցիոնալ և գործառութային մակարդակներով ներառի եռաստիճան դատական համակարգը կազմող ատյաններից յուրաքանչյուրի գործունեության նպատակայնությունն ու խնդիրների իրացվելիությունը: ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) 163, 171 և 172 հոդվածներով ոչ միայն սահմանվեց հայրենական դատական համակարգի աստիճանակարգությունը, այլև գործառութային առումով հստակ սահմանազատում մտցվեց յուրաքանչյուր դատական ատյանի գործունեության սահմանադրաիրավական հիմքերի, նպատակների և խնդիրների միջև: Ընդ որում, այս առումով առանձնացվեցին դատական վերանայման գործառույթ իրականացնող երկու՝ վերաքննիչ և վճռաբեկ ատյաններ, որոնց գործունեությունը նպատակային և խնդրային առումով էականորեն տարբերվում է միմյանցից: Եթե վերաքննիչ դատարանը առաջին ատյանի դատարանի դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող հիմնական ատյանն է, ապա, սահմանդրական արդարադատության ոլորտից բացի, բարձրագույն դատական ատյան համարվող Վճռաբեկ դատարանի գործունեությունն ուղղված է՝ 1) օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովմանը և 2) մարդու իրավունքների ու ազատությունների հիմնարար խախտումները վերացնելուն: Ինչպես տեսնում ենք, Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի և խնդիրների ամրագրումը սահմանափակում է այս ատյան մուտք գործելու հնարավորությունը, և եթե վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայող և դատական սխալը վերացնող (ուղղող) ատյան է, ապա վճռաբեկության կարգով դատական ակտի վերանայումը պայմանավորված է ոչ միայն դատական սխալի առկայությամբ, այլև օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու կամ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու անհրաժեշտությամբ: Այսինքն, եթե

դատական ակտի բողոքարկման հիմքերի առկայության պայմաններում վերաքննիչ վարույթի ծագումը պարտադիր է, ապա վճռաբեկությունը կարելի է համարել քաղաքացիական դատավարության «բացառիկ» փուլ, քանի որ դրա ծագումը պայմանավորված է Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական հատուկ կարգավիճակից բխող խնդիրների և այս վարույթի առաջացման ֆակուլտատիվ պայմանների առկայությամբ: Հետևաբար, վճռաբեկության ինստիտուտի բացառիկությունը քաղաքացիական դատավարությունում դրսևորվում է վճռաբեկ բողոքարկման իրավունքի սուբյեկտների կողմից այս վարույթը նախաձեռնելու սահմանափակ հնարավորությամբ: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի¹ 50.1 հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի² (այսուհետ՝ նաև ՔԴՕ) 234 հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ 1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ 2) առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ 3) առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք: Բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, եթե

1) տարբեր գործերով ստորադաս դատարանների առնվազն երկու դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է հակասական մեկնաբանությամբ,

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը,

3) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը,

4) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը,

5) Վճռաբեկ դատարանը համարում է, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Ընդ որում, վճռաբեկ բողոքը քննության ընդունելու վերոնշյալ պայմանները, արտացոլելով Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական խնդիրների իրացման հիմնական չափորոշիչները, նաև արդարա-

¹ ՀՕ-135-Ն, Ընդունվել է 21.02.2007 թ., ուժի մեջ է մտել 18.05.2007 թ., ՀՀՊՏ 2007.04.18/ 20(544):

² ՀՕ-247, Ընդունվել է 17.06.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ., ՀՀՊՏ 1998.09.09/ 20(53):

դատության արդյունավետության ապահովման լրացուցիչ երաշխիք են և որևէ կերպ չեն կարող մեկնաբանվել արդարադատության մատչելիության սահմանափակումների համատեքստում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում հատուկ ընդգծել է, որ «դատարանի իրավունքը», որի մասնավոր դրսևորումն է «մատչելիության» իրավունքը, բացարձակ չէ և բողոքների ընդունման պայմանների հարցում կարող է ենթարկվել ողջամիտ սահմանափակումների, քանի որ պետություններն այս հարցի կարգավորման առումով հայեցողության որոշակի ինքնուրույնությամբ են օժտված: Սակայն արդարադատության մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես կամ այն աստիճան, որ դրա էությունը խաթարվի: Նման սահմանափակումները կարող են համապատասխանել Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին միայն այն դեպքում, եթե դրանք հետապնդում են օրինական նպատակ և գոյություն ունի ողջամիտ սահմանափակություն օգտագործվող միջոցների և սահմանված նպատակների միջև³: Եվրախորհրդի նախարարների կոմիտեի 7 փետրվարի 1995 թվականի քաղաքացիական և առևտրային գործերով բողոքարկման ինստիտուտների և ընթացակարգերի ներդրման ու դրանց գործունեության բարելավման վերաբերյալ անդամ պետություններին ուղղված NR (95) 5 առաջարկությունների 5-րդ կետի g) և e) ենթակետերի դրույթներն ուղղակիորեն կիրառելի են Հայաստանի իրավական համակարգում վճարել բողոքարկման ինստիտուտի կապակցությամբ այն առումով, որ դրանցով նախատեսված է սահմանափակել բողոքարկման հնարավորությունը միայն իրավունքի հարցերով, ինչպես նաև բողոքի քննությունը՝ ողջամիտ հիմքերով: Այլ հարց է, թե որքանով են վերը թվարկված պայմանները համահունչ Վճարել դատարանի սահմանադրաիրավական խնդիրներին: Այսպես, Վճարել դատարանը, լինելով իրավունքի դատարան, իր սահմանադրաիրավական խնդիրների իրացման համար պետք է տիրապետի բավարար իրավական գործիքակազմի: Ընդ որում, եթե գործող Սահմանադրության 92 հոդվածի 2-րդ մասի իմաստով Վճարել դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը, ապա ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 1-ին մասով նշվել է, որ իր այդ առաքելությունն իրականացնելիս Վճարել դատարանը պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը: Մեր կարծիքով, քաղաքացիական դատավարությունում իրավունքի զարգացմանը նպաստելը դուրս է Վճարել դատարանի սահմանադրաիրավական խնդիրների շրջանակից:

Այսպես, Վճարել դատարանը ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ու վերացնում է մարդու իրավունքների ու ազատությունների հիմնարար խախտումները: Այս երկու խնդիրները սերտորեն փոխկապակցված են, քա-

³ Տե՛ս օրինակ՝ Case of Brualla de la Torre v. Spain, judgment, 19 դեկտեմբերի, 1997 թվական, կետ 33, Edificaciones March Gallego S.A. v. Spain, judgment 19 փետրվարի, 1998 թվական, կետ 34:

նի որ առանց վերացնելու մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները՝ որպես արդարադատության էությունը խաթարող դատական սխալի դրսևորումներ, անհնար է ապահովել օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և դատական պրակտիկայի միասնականությունը⁴: Ոնդ որում, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակի իրացումն առավելապես ծառայում է հանրային շահերին և կրում է հանրային-իրավական բնույթ այն իմաստով, որ առաջին հերթին պետությունն է շահագրգռված օրենքների և նորմատիվ իրավական այլ ակտերի ճիշտ ու միատեսակ կիրառման հարցում: Մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու սահմանադրաիրավական խնդրի իրացման հարցում առավելապես շահագրգռված պետք է լինի վճռաբեկ բողոք բերող անձը: Քանի որ Վճռաբեկ դատարանի կողմից կոնկրետ քաղաքացիական գործով դատական սխալի ուղղման կամ վերացման պարագայում պաշտպանվում կամ վերականգնվում են հենց բողոքաբերի խախտված նյութական կամ դատավարական սուբյեկտիվ իրավունքները, ապա սա առավելապես կրում է մասնավոր բնույթ: Չվիճարկելով օրենքի և նորմատիվ ակտերի միատեսակ կիրառության հանրային-իրավական նշանակությունը՝ անհրաժեշտ է նշել նաև, որ Վճռաբեկ դատարանն այնուամենայնիվ իրավունքի նորմի միատեսակ կիրառության խնդրի իրացման գործառույթ կարող է իրականացնել միայն վճռաբեկ բողոքարկման միջոցով: Հետևելով է, որ այստեղ ևս կա մասնավոր շահի դրսևորում, քանի որ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձը պետք է շահագրգռված լինի, որ իր նկատմամբ իրավունքի նորմը կիրառվի այն կարգով և մեկնաբանությամբ, ինչ կիրառվել է դատարանի կողմից այլ վիճելի նյութական իրավահարաբերություն կարգավորելիս: Նման շահագրգռվածության բացակայության պարագայում վճռաբեկ բողոքարկման իրավունքը կրող սուբյեկտը կարող է ուղղակիորեն չօգտվել օրենքով իրեն ընձեռված այդ հնարավորությունից: Օրենքի և նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառության սահմանադրաիրավական խնդրի իրացման հարցում ավելի շուտ պետք է խոսել հանրային և մասնավոր շահի զուգակցման կամ մեկտեղման մասին: Բացի դրանից, պետք է նշել, որ առաջին հերթին անհրաժեշտ է նկատի ունենալ *Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի նորմի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիրը, քանի որ իրավունքի նորմեր կամ վարքագծի կանոններ կարող են սահմանվել ինչպես օրենքներով կամ նորմատիվ իրավական այլ ակտերով, այնպես էլ գործարար շրջանառության սովորույթներով:*

Իրավակարգավորման ներկայիս պայմաններում Վճռաբեկ դատա-

⁴ Стé u **Новик-Качан М. Ю.** Надзорное производство в гражданском процессе. Диссертация на соискание ученой степени к.ю.н. М., 2005, էջ 29-30, **Трубников П. Л.** Пересмотр решений в порядке судебного надзора. М., 1974, էջ 18, **Жилин Г. А.** Цели гражданского судопроизводства и их реализация в суде первой инстанции. М., 2000, էջ 63-65:

րանի կողմից իրավունքի զարգացմանը նպաստելն իրականացվում է օրենքի և նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական խնդրի շրջանակներում, սակայն, մեր կարծիքով, տարակուսանքի տեղիք կարող է տալ այն հարցը, թե որքանով է այն իրացվելի, ինչ իրավական գործիքակազմի է տիրապետում վճռաբեկ ասոյանն այս խնդրի իրացման համար, և օրենսդրական ինչ երաշխիքներ են ամրագրված հայրենական իրավական համակարգում: ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ: Ընդ որում, թե՛ իրավակիրառ, թե՛ վերլուծական պրակտիկայում հարցին մոտենում են միշտ այս տեսանյունից⁵, սակայն խնդրահարույց է օրենքի և նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացմանը նպաստելու խնդիրները միմյանց շաղկապելը, քանի որ իրավունքի զարգացումը կամ դրան նպաստելն ընդհանրապես դուրս է Վճռաբեկ դատարանի գործունեության ոլորտից, սահմանադրաիրավական խնդիրների շրջանակից, և ՀՀ օրենսդրությամբ Վճռաբեկ դատարանին այս առումով որևէ գործառնության լիազորություն կամ գործիքակազմ վերապահված չէ: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդվածի 4-րդ մասի իմաստով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ պարտադիր են դատարանի համար, և գործին մասնակցող անձանց վերաբերում են այնքանով, որքանով նրանք վիճելի նյութական իրավահարաբերությունների դատավարական կարգավիճակ ունեցող սուբյեկտներ են: Սրանից հետևում է, որ քանի դեռ քաղաքացիական շրջանառության մասնակիցը դատավարության կողմ կամ երրորդ անձ չի դարձել, կամ դատարանի կողմից քննվող քաղաքացիական գործով կայացված վերջնական ակտը նրա իրավունքների ու պարտականությունների վրա չի ազդել (խոսքը դատարանի կողմից գործին մասնակից չդարձված անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վճիռ կայացնելու մասին է), Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումը վերջինիս իրավունք-

⁵ Տե՛ս **Գ. Մուրադյան**, ՀՀ վճռաբեկ դատարանը հանրային իշխանության համակարգում և «դատական նախադեպը». Մեմինար-քննարկումների նյութերի ժողովածու, Եր., 2007, էջ 70, **Վ. Գասպարյան**, ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը, Եր., 2007, էջ 40-41:

ների և պարտականությունների վրա որևէ իրական իրավական ներգործություն ունենալ չի կարող և միաժամանակ չի կարող նաև կանխորոշել նրա վարքագիծը: Քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերն անհատական բնույթի իրավական ակտեր են, դրանք չեն պարունակում իրավական նորմ և սահմանում են վարքագծի կանոններ միայն ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական կամ համայնքային հիմնարկների համար, ուստի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի⁶ 2 հոդվածի 2-ից 5-րդ մասերի և 6 հոդվածի բովանդակությունից բխում է, որ քաղաքացիական դատավարությունում բացառվում է դատարանի կողմից նորմատիվ իրավական ակտեր կայացնելու հնարավորությունը: ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներով քաղաքացիական շրջանառության մասնակիցների համար վարքագծի նոր կանոններ չի սահմանում, այլ իր իրավական դիրքորոշումների շրջանակներում մեկնաբանում է իրավունքի նորմերը: Ընդ որում, վարքագծի կանոնների այդ մեկնաբանությունները, նույնանման փաստական հանգամանքներով քննվող գործերով ուղղակիորեն վերաբերելով դատարանին, անուղղակիորեն պարտադիր են դառնում նաև գործին մասնակցող անձանց համար: Այստեղից էլ հարց է ծագում, թե այդ մեկնաբանությունները որքանով կարող են նպաստել իրավունքի զարգացմանը, եթե դրանք իրավական նորմեր կամ վարքագծի կանոններ չեն պարունակում, իսկ քաղաքացիական դատավարությունում դատարանների իրավաստեղծ գործունեության հնարավորություն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ: Իրավունքի զարգացմանը նպաստելու՝ Վճռաբեկ դատարանի գործառնությունը կարող է ունենալ այլ դրսևորում: Մասնավորապես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը սահմանում են, որ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը չպետք է հակասեն ՀՀ օրենսդրության, գերատեսչական իրավական ակտերի և ՀՀ միջազգային պայմանագրերի պահանջներին, իսկ ՀՀ Նախագահի հրամանագրերը և կարգադրությունները, ՀՀ կառավարության որոշումները, ՀՀ վարչապետի որոշումները, գերատեսչական իրավական ակտերը և տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերը, ՀՀ միջազգային պայմանագրերը՝ բացառությամբ ՀՀ Ազգային ժողովի վավերացրածների, ներքին և անհատական իրավական ակտերը չպետք է հակասեն օրինական ուժի մեջ մտած առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերին: Մյուսից հետևում է, որ քաղաքացիական գործի քննության փուլում վերը թվարկված ենթաօրենսդրական ակտերը

⁶ Տե՛ս ՀՕ-320, Ընդունվել է, 03.04.2002 թ., ուժի մեջ է մտել 31.05.2002 թ.-ին, ՀՀՊՏ 2002, 05.21/15(190):

պարտադիր են դատարանի համար: Այն պահից, երբ Վճռաբեկ դատարանի ակտը ստանում է իրավական գործողություն, դրանում տեղ գտած մեկնաբանությունները պարտադիր են դառնում իրավաստեղծ գործունեության իրավասություն ունեցող նշված մարմինների համար, չնայած իրավական նորմերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները իրավաստեղծ գործունեության իրավասություն ունեցող մարմինների կողմից պարտադիր դարձնելու իրավական հստակ կառուցակարգեր և իրավական անհրաժեշտ հետևանքներ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն: Ընդ որում, քաղաքացիական գործի քննության փուլում նշված ակտերի կիրառման կանոնների խախտումները հանգեցնում են վերադաս դատական աստիճանի կողմից դատական ակտի բեկանման, եթե դրանք ազդել են գործի ելքի վրա: Ուստի ՀՀ իրավական համակարգում կարելի է խոսել միայն «*օրենքի շրջանակներում*» իրավունքի զարգացման մասին, որը քաղաքացիական գործերով զուտ ձևական բնույթ է ստանում և գործնականում քաղաքացիական շրջանառությունում դառնում է ոչ կիրառելի:

Քաղաքացիական դատավարությունում իրավունքի զարգացմանը նպաստելու գործառույթ հստակորեն իրականացնում է ՀՀ սահմանադրական դատարանը, քանի որ վերջինս օժտված է դրա համար անհրաժեշտ և բավարար գործիքակազմով, այն է՝ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասությամբ: Ավելին, ՀՀ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը չպետք է հակասեն ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին (ՀՀ իրավական ակտերի մասին օրենքի 9-ից 24 հոդվածներ): Եթե Վճռաբեկ դատարանը քաղաքացիական գործերով օժտված է բացառապես իրավունքի նորմերի մեկնաբանման իրավագործությամբ, ապա ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանը, վերացնելով իրավունքի սահմանադրական գերակայության գաղափարին, մարդու իրավունքների համընդհանուր սկզբունքներին հակասող նորմը, ինքնըստինքյան նպաստում է իրավունքի զարգացմանը: Ավելին, եթե վերջինս քաղաքացիական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ապա վերոնշյալ դատական ակտը նոր հանգամանքներով ենթակա է վերանայման (ՔԴՕ հոդված 204.33): Այստեղից կարելի է եզրակացնել, որ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պարտադիր են ոչ միայն իրավաստեղծ գործունեության համար, այլև հստակ իրավական հետևանք-

ներ են առաջացնում նաև իրավակիրառ պրակտիկայում և կարող են կանխորոշել իրավունքի զարգացման ուղղությունները:

Վճռաբեկ դատարանի որոշումներում առկա իրավական նորմերի մեկնաբանությունները գործուն դերակատարում ունեն դատական պրակտիկայի միասնականության ապահովման համար: Պետք է նշել, որ դրանք ավելի շատ օժանդակող բնույթ ունեն, քանի որ ՀՀ դատավարական օրենսդրությունն առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանների կողմից Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից շեղվելու առումով ուղղակի իրավական հետևանքներ չի նախատեսում: ՀՀ ՔԴՕ 234 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտում Վճռաբեկ դատարանի որոշմամբ իրավական նորմին տրված մեկնաբանությանը հակասող մեկնաբանություն պարունակելու հանգամանքը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայման է, այլ ոչ թե դատական ակտի բեկանման հիմք: Այսինքն՝ բեկանման հիմքը գործի ելքի վրա ազդող նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումներն են: Կարելի է փաստել, որ Վճռաբեկ դատարանի որոշումները որոշիչ նշանակություն ունեն իրավական նորմերի ճիշտ կիրառումը կամ կիրառման իրավաչափությունը որոշելու հարցում: Դրանք դատական ակտի բեկանման հանգեցնող դատական սխալը որոշելու հարցում օժանդակող բնույթ ունեն և գործառության շրջանում կարող են ապահովել միայն իրավական նորմերի միատեսակ կիրառության խնդրի իրացումը, այլ ոչ թե իրավունքի զարգացումը: Մեր կարծիքով, քննադատության չի դիմանում նաև իրավաբանական գրականության մեջ տեղ գտած այն տեսակետը, թե դատական ակտում առկա իրավական դիրքորոշումներն ու մեկնաբանությունները քաղաքացիական շրջանառությունում լայն կիրառության փաստի ուժով կարող են ստանալ գործարար շրջանառության սովորույթի նշանակություն և դրանով նպաստել իրավունքի զարգացմանն ու քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորմանը⁷: Գործարար շրջանառության սովորույթ է համարվում ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն կիրառվող, օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը, անկախ դրա՝ որևէ փաստաթղթում ամրագրված լինելու հանգամանքից⁸: Վճռաբեկ դատարանը մեկնաբանում է կոնկրետ քաղաքացիական գործով կիրառված իրավունքի նորմը, վարքագծի կանոնը, որը նախատեսված է օրենսդրությամբ կամ գործարար շրջանառության սովորույթով: Ուստի այս մոտեցումը հայրենական իրավական համակարգի պարագայում արդարացված համարել չի կարելի: Ընդ որում, պետք է հատուկ նշել, որ ՀՀ

⁷ Տե՛ս [/pravo/gragdanskoe/obychaj-delovogo-oborota-v-grazhdanskom-prave-ponyatie-priznaki-i-xarakteristika.html](http://pravo.gragdanskoe/obychaj-delovogo-oborota-v-grazhdanskom-prave-ponyatie-priznaki-i-xarakteristika.html), **Ерофеев А. В.** Обычай делового оборота как источник Гражданского права [Текст] // "Юридические науки: проблемы и перспективы". Материалы международной научной конференции. Пермь, 2012, էջ 75-77:

⁸ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 7, մաս 2:

օրենսդրությունը բացառում է ստորադաս դատական ատյանում քաղաքացիական գործի քննության ժամանակ կիրառման ենթակա իրավական նորմի վերաբերյալ վճռաբեկ ատյանի կողմից մեկնաբանություն տալու հնարավորությունը, ինչը օրենքի միատեսակ կիրառության բավականին գործուն կառուցակարգ է զարգացած իրավական համակարգ ունեցող եվրոպական այնպիսի երկրում, ինչպիսին Ֆրանսիան է: Այսպես, Ֆրանսիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի II հատորի VI գլխի 1031-1 - 1031-7 հոդվածները սահմանում են քաղաքացիական գործի քննության ընթացքում դատարանի կողմից գործի լուծման համար նշանակություն ունեցող իրավական հարցի կապակցությամբ վճռաբեկ ատյանից կարծիք կամ եզրակացություն ստանալու կարգը⁹: Ընդ որում, իրավական հարցի, այդ թվում՝ իրավունքի նորմի կիրառման և բովանդակության բացահայտման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի եզրակացությունը ենթակա է հրապարակման Ֆրանսիայի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում:

Ռուսաստանի Դաշնությունում քաղաքացիական գործերով իրավական նորմերի միատեսակ կիրառությունն ապահովելու համար դատական վճռաբեկությանը զուգահեռ կիրառվում է նաև հսկողական վարույթը, ինչը քննարկվող սահմանադրաիրավական խնդրի հանրային-իրավական նշանակության գերակայության ակնհայտ դրսևորմաներից է (ՌԴ ՔԴՕ հոդվածներ 391.1-391.13)¹⁰: Մասնավորապես, բացի գործին մասնակցող կամ այնպիսի անձանցից, որոնց իրավունքներն ու օրինական շահերը խախտվել են օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, հսկողության կարգով դատական ակտի վերանայում պահանջելու իրավասությամբ են օժտված նաև ՌԴ գերագույն դատարանի նախագահը կամ նրա տեղակալը՝ շահագրգիռ անձանց կամ ՌԴ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի հիմնարար այնպիսի խախտումները վերացնելու նպատակով, որոնք ազդել են բողոքարկված դատական ակտի օրինականության վրա և վիճելի նյութական կամ դատավարական իրավահարաբերությունների մասնակիցներին զրկել են օրենքով իրենց վերապահված իրավունքների իրականացման հնարավորությունից, այդ թվում՝ արդարադատության մատչելիության, մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքների հիման վրա արդար դատաքննության իրավունքից, կամ էականորեն սահմանափակել են այդ իրավունքները (ՌԴ ՔԴՕ հոդված 391.11): Հանրային-իրավական շահի գերակայությունն ակնհայտորեն դրսևորվում է հսկողության կարգով դատական ակտերի բեկանման կամ փոփոխման հիմքերում, այն է՝ եթե բողոքարկվող դատական ակտով խախտվել են ՌԴ սահմանա-

⁹ Տե՛ս «Новый Гражданский процессуальный кодекс Франции». Киев, 2004, էջ 255: Նշված փոփոխությունները մտցվել են 12 մարտի 1992 թ. № 92-228 դեկրետով:

¹⁰ Տե՛ս «Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации (постатейный научно-практический)». М., 2015, էջ 568-580:

դրությամբ, միջազգային իրավունքի նորմերով և հանրաճանաչ սկզբունքներով, ՌԴ միջազգային պայմանագրերով երաշխավորված մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, անձանց անորոշ շրջանակի իրավունքներն ու օրինական շահերը կամ այլ հանրային շահերը, դատարանի կողմից իրավունքի նորմերի միատեսակ կիրառությունն ու մեկնաբանումը (ՌԴ ՔԴՕ հոդված 391.9):

Հարկ է նշել, սակայն, որ ցանկացած խնդիր, այդ թվում՝ իրավունքի նորմի միատեսակ կիրառությունը, անհրաժեշտ է ապահովել արդյունավետ միջոցներով: Եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 35 հոդվածի 1-ին կետի իմաստով հսկողական վարույթը չի կարելի իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց համարել: Օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար հսկողական դատական ատյանների կողմից օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն առանց ժամկետային կամ սուբյեկտային սահմանափակումների վերանայելը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին և խաթարում է արդար դատաքննության իրավունքի էությունը հատկապես այն դեպքերում, երբ այն իրականացվում է համապատասխան պաշտոնատար անձանց կողմից իրենց դիսկրեցիոն լիազորությունները իրականացնելու և դատավարությանը միջամտելու եղանակով¹¹:

Հատուկ պետք է ընդգծել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր սահմանադրաիրավական խնդիրների իրացման համար առաջին հերթին պետք է օժտված լինի արդյունավետ իրավական գործիքներով և օրենսդրությամբ ամրագրված ներգործության միջոցներով: Առանձնակի ուշադրության պետք է արժանացնել այն հարցը, թե քաղաքացիական գործերով իրավունքի նորմի միատեսակ կիրառությունը վճռաբեկության ինչ արդյունավետ մոդելով է հնարավոր ապահովել: Գաղտնիք չէ, որ ՀՀ քաղաքացիական դատավարությունում վճռաբեկությունը պարունակում է ռեիզիայի որոշակի տարրեր: Ընդ որում, իրավաբանական գրականության մեջ գերիշխում է այն մոտեցումը, որ դասական առումով վճռաբեկությունը ռեիզիայից պետք է տարբերել առաջին հերթին դատական վերանայման գործառույթ իրականացնող ատյանի մոտ բացառապես դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու լիազորության առկայության և ակտը փոփոխելու կամ վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նոր դատական ակտ կայացնելու հնարավորության բացակայության փաստով¹²: ՀՀ վճռաբեկ

¹¹ St' u «Решение Европейского суда по правам человека от 22 июня 1999 г., дело Тумилович против Российской Федерации» // "Вестник ВАС РФ", 2001, № 7, էջ 60: «Case of Brumaresku vs Romain», judgment, 28 հոկտեմբերի, 1999 թվական:

¹² St' u **Жилин Г. А.** Апелляция и кассация в гражданском процессе // "Современная доктрина гражданского, арбитражного процесса". Материалы международной конференции. Краснодар, 2004, էջ 138-140, **Жуйков В. М.** Судебная защита прав граждан и юридических лиц. М., 1997, էջ 195, **Кейлин А. Д.** Судостроительство и гражданский процесс капита-

ատյանը, իրավունքի դատարան լինելով, օժտված չէ նոր փաստ հաստատելու կամ ստորադաս դատարանի կողմից հաստատած փաստը չհաստատված համարելու լիազորություններով, սակայն իրավական նորմի կիրառման իրավաչափությունը որոշելու համատեքստում կարող է եզրահանգումներ անել, որոնք անուղղակիորեն անդրադառնալու են նաև քաղաքացիական գործով հաստատված փաստակազմի վրա: Այսպես, եթե ստորադաս դատական ատյանը, կիրառելով դատավարական իրավունքի նորմերը, հաստատել է փաստ, ապա Վճռաբեկ դատարանը, եզրահանգումներ անելով իրավունքի նորմի կիրառման և մեկնաբանման ճշտության վերաբերյալ, կարող է այս հիմքով վերացնել ոչ իրավաչափ դատական ակտը՝ գործը ուղարկելով համապատասխան դատարան՝ նոր քննության: ՀՀ Վճռաբեկ դատարանն իրավունքի նորմի միատեսակ կիրառությունն ապահովելու համար տիրապետում է ռիզիկոն տարրեր պարունակող իրավական անհրաժեշտ գործիքների: Մասնավորապես, վճռաբեկ ատյանը մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե վերջինիս հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, կամ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում Վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում Վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված (ՔԴՕ հոդվ. 240, մաս 1):

Գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի նորմերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական խնդրի հանրային-իրավական նշանակությունը չպետք է բացարձակացնել, այլ դրա լիարժեք իրացման համար անհրաժեշտ է կոնկրետ օրենսդրական երաշխիքներ և վճռաբեկ ատյան մուտք գործելու համապատասխան չափորոշիչներ կամ ողջամիտ սահմանափակումներ սահմանել, ինչը առավելագույնս արդյունավետորեն կապահովի վճռաբեկության գործառույթի նպատակայնությունն ու սուբյեկտիվ իրավունքների ճիշտ պաշտպանությունը: Քաղաքացիական գործերով իրավունքի զարգացմանը նպաստելու Վճռաբեկ դատարանի գործառույթը ավելի շատ ձևական բնույթ ունի, և այն ճիշտ է դիտարկել վերջինիս սահմանադրաիրավական խնդիրների շրջանակից դուրս:

Բանալի բառեր – *Վճռաբեկ դատարան, իրավունքի նորմերի միատեսակ կիրառում, իրավունքի զարգացում, սահմանադրաիրավական խնդիր, վճռաբեկ վարույթ, վերահսկողական-հսկողական վարույթ, բողոքարկման պայմաններ*

ВАГЕ ОГАНЕСЯН – Обеспечение Кассационным судом конституционно-правовой задачи единообразного применения правовых норм в гражданском судопроизводстве. – В статье досконально проанализированы стоящие перед Кассационным судом задачи по единообразному применению в гражданском судопроизводстве нормативно-правовых актов. Выяснено, что разумные ограничения доступа к Кассационному суду обусловлены сложностью вменённых ему конституционно-правовых функций. При этом отмечено, что функция Кассационного суда способствовать в гражданском судопроизводстве развитию права носит формальный характер, поскольку законодательством не предусмотрены чёткие механизмы придания его толкованиям правовых норм обязательной силы. Отсюда делается вывод, что правильнее говорить об исполнении Кассационным судом его конституционно-правовой задачи – обеспечить единообразное применение правовых норм, т.к. они устанавливаются также обычаями делового оборота. В законодательстве РА должны быть установлены твёрдые правовые гарантии, а Кассационный суд наделён достаточными правовыми инструментами, чтобы полноценно решать стоящие перед ним задачи.

Ключевые слова: *Кассационный суд, единообразное применение норм права, развитие права, конституционно-правовая задача, кассационное производство, контрольное/надзорное производство, условия обжалования*

VAHE HOVHANNISYAN – Implementation of the Constitutional-Legal Task to Ensure Uniform Application of Legal Norms by the Court of Cassation in the Civil Procedure. – The peculiarities of the constitutional-legal task to ensure uniform application of legal norms by the court of Cassation in the civil procedure have been thoroughly analyzed in the article presented. As a result of comprehensive research of constitutional-legal status of the court of Cassation the author has hereby found that conditions and reasonable limitations of access to the court of Cassation are primarily conditioned by the necessity of realization of constitutional tasks of the latter and directly reflect their individual practices. It has been underlined that the function of the court of Cassation on promotion of the law development has a formal nature, as this court instance does not establish new rules of conduct and there are no clear legal mechanisms provided in RA legislation for making interpretations of legal norms by competent law-making bodies binding. The author has concluded that it would be better to refer primarily to the fulfilment of constitutional task regarding insuring by the court of Cassation of the uniform application of law, as trade usages also establish rules of conduct. Facilitation of development of law in civil procedure shall be examined beyond the scope of constitutional-legal objective of the court of Cassation, as in this case uniform application of law is of paramount importance. Precise legal guarantees shall be established by RA legislation and the court of Cassation shall be granted with sufficient legal tools for full-fledged implementation of its tasks and main functions.

Key words: *court of Cassation, uniform application of legal norms, law development, constitutional-legal task, cassation proceedings, supervisory proceedings, condition of appeal*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ
АРТУР ВАГАРИШЯН – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ
ARTHUR VAGHARSHYAN – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Theory and History of State and Law, YSU

2. **ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑ** – իրավաբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր
АРМЕН АЙКЯНЦ – доктор юридических наук, профессор кафедры гражданского права ЕГУ
ARMEN HAYKYANTS - Sc. D. in Legal Sciences, Professor at the Chair of Civil Law, YSU

3. **ԵՎԳԵՆԻԱ ԳՅԱՆՋՈՒՄՅԱՆ** – ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի աապիրանտ
ЕВГЕНИЯ ГЯНДЖУМЯН – аспирантка кафедры гражданского права ЕГУ
YEVGENIA GYANJUMYAN – PhD student, Chair of Civil Law, YSU

4. **ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ղեկան
ГАГИК КАЗИНЯН – доктор юридических наук, профессор, академик НАН РА, декан юридического факультета ЕГУ
GAGIK GHAZINYAN – Sc. D. in Legal Sciences, Professor, Academician of RA NAS, Dean of YSU Faculty of Law

5. **ՏԻԳՐԱՆ ՄԻՄՈՆՅԱՆ** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ
ТИГРАН СИМОНЯН – кандидат юридических наук, доцент кафедры уголовного права ЕГУ
TIGRAN SIMONYAN – PhD, Associate Professor at the Chair of Criminal Law, YSU

6. **ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ
АННА МАРГАРЯН – кандидат юридических наук, доцент кафедры уголовного права ЕГУ
ANNA MARGARYAN – PhD, Associate Professor at the Chair of Criminal Law, YSU

7. **ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ** – իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ոստիկանության մայոր

МИСАК МАРКОСЯН – кандидат юридических наук, доцент, начальник кафедры уголовного права и криминологии Академии образовательного комплекса Полиции РА, майор полиции

MISAK MARKOSYAN – PhD, Associate Professor, Police Major, Head of the Chair of Criminal Law and Criminology, Academy of the Educational Complex of the RA Police

8. **ՎԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** – իրավաբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ

ВАГЕ ОГАНЕСЯН – доктор юридических наук, доцент кафедры гражданского процесса ЕГУ

VANE HOVHANNISYAN – Sc. D. in Legal Sciences, Associate Professor at the Chair of Civil Procedure, YSU

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ ТЕОРИЯ И ИСТОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА THEORY AND HISTORY OF STATE AND LAW

- Արթուր Վաղարշյան* – Հայաստանի և Կիլիկյան հայկական թագավորության իրավական համակարգերը և իրավունքի աղբյուրները 3
- Артур Вагаршян* – Правовые системы и источники права Армении и Киликийского армянского царства
- Arthur Vagharshyan* – Legal Systems and Sources of Law of Armenia and Armenian Kingdom of Cilicia
-
- Արմեն Հայկյանց, Եվգենիա Գյանջումյան* – Համակարգային մոտեցման զարգացումը և նշանակությունը. իրավափիլիսոփայական հիմքեր (ռուս.) 13
- Армен Айкянци, Евгения Гянджумян* – Генезис и значение системного подхода: философско-правовые основы
- Armen Haykants, Yevgenia Gyanjumyan* – Genesis and Significance of the Systemic Approach: Philosophical and Legal Bases (rus.)

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО CONSTITUTIONAL LAW

- Գագիկ Ղազինյան* – Իրավական դաստիարակությունը և կրթությունը քաղաքացիական հասարակությունում՝ որպես ազգամիջյան հարաբերությունների ներդաշնակեցման կարևորագույն պայման (ռուս.) 22
- Газик Казинян* – Правовое воспитание и обучение в гражданском обществе как важнейшее условие гармонизации межнациональных отношений
- Gagik Ghazinyan* – Legal Education and Tuition in the Civil Society as the Most Important Condition of Harmonization of International Relations (rus.)

ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ КРИМИНОЛОГИЯ CRIMINOLOGY

- Տիգրան Միմոնյան* – Երիտասարդ հանցագործի հոգեբանական առանձնահատկությունները 28
- Тигран Симонян* – Психологические особенности молодого преступника
- Tigran Simonyan* – Psychological Features of Young Crime Perpetrators

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
УГОЛОВНОЕ ПРАВО
CRIMINAL LAW

<i>Աննա Մարգարյան</i> – Անչափահասների պատժի առանձնահատկությունները ՀՀ-ում.....	41
<i>Anna Margaryan</i> – Особенности наказания несовершеннолетних в РА	
<i>Anna Margaryan</i> – Peculiarities of Juvenile Punishment in RA	
<i>Միսակ Մարկոսյան</i> – Ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հափշտակության քրեաիրավական գնահատականը.....	52
<i>Мисак Маркосян</i> – Уголовно-правовая оценка хищения имущества, заведомо добытого преступным путем	
<i>Misak Markosyan</i> – Criminal-Legal Qualification of the Plunder of Property Obtained in an Obviously Criminal Way	

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС
CIVIL PROCEDURE

<i>Վահե Հովհաննիսյան</i> – ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի նորմերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահամանադրաիրավական խնդրի իրացումը քաղաքացիական դատավարությունում	64
<i>Vahe Oganesyan</i> – Обеспечение Кассационным судом конституционно-правовой задачи единообразного применения правовых норм в гражданском судопроизводстве	
<i>Vahe Hovhannisyan</i> – Implementation of the Constitutional-Legal Task to Ensure Uniform Application of Legal Norms by the Court of Cassation in the Civil Procedure	
Տեղեկություններ հեղինակների մասին.....	76
Сведения об авторах	
Information about the Authors	

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Բրավանաչորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося в
1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of
"Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Վայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 30. 04. 2016:
Տպաքանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: